

ԷԶՄԻԱԾԻՆ



1962

ՊԱ-4773

ՌՆԺԲ
ԺԹ ՏԱՐԻ

Օգոստոս

ԷՋՄԻԱՇՈՒՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՅ
Ա. ԷՋՄԻԱՇՈՒՆԻ

Ը

1962



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Խաղաղության համաշխարհային վեճաժողով Մասկ- վայում	3
Հեղհանուր գինաբափման և խաղաղության համաշխարհային կոնգրես Մասկվայում	6
Ամենայն Հայոց Հայրապետի պատասխանը «Նովոստի պեչատ»-ի թղթ- բակցի հարցին	11
Մասնավոր վարդապետական զավագանի տվչություն Մայր Աթոռում	12
Ձեռնադրություն Մայր Աթոռում	15
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ ՈՒ Մ	19
Հանգիստ գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի	20
Հանգիստ գերաշնորհ Տ. Նզենիկ եպիսկոպոս Ազնավուրյանի	21
ԹՂԹԱԿԻՑ— Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1800-ամյակի տոնակա- տարությունը Լռնդոնի մեջ	22
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏՆՐՑԱՆ— Համառոտ պատմական ակնարկ Նրեանի եկեղեցիների մասին	27
Ս. ՔՈՂԱՆՋՑԱՆ— Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավոր	33
Հ. ԹՈՓՈՒՋՑԱՆ— Էջեր եզրպատճայ հին զաղութի պատմությունից	40
Ս. ՀԱԿՈՐՑԱՆ— Սուրբ Էջմիածնի վանքում օգտագործված մարմարները	47
ԱՐՓԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ— Սաադիի հայերեն թարգմանությունները	51
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	56
Ճույցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	59



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
 ՀԱՅԿԱՊԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
 «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
 Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԻՆՎԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՋԱԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅԱՄ



ուիսի 9-ից 14 օրերին, Մոսկվայում, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախաձեռնությամբ, գումարվեց Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային վեճաժողով, Կրեմլի Համագումարների ընդարձակ և լուսավոր պալատում: Համաժողովին մասնակցում էին 121 երկրների շուրջ 2400 պատգամավորներ, մեծ թվով դիտորդներ և հյուրեր, այդ թվում ակադեմիկոս Բաղդասարյան, հասարակական գործիչներ, եկեղեցական մեծ դեմքեր, գիտնականներ և գրողներ, արվեստագետներ, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ՝ ժողովուրդներ, փաստաբաններ, պառլամենտականներ և այլն:

Մոսկվայում գումարված խաղաղության համաշխարհային այս վեճաժողովի պատգամավորները ներկայացուցիչներն էին աշխարհի բարի կամքի տեր միլիոնավոր ու միլիոնավոր մարդկանց և իրենց ելույթներում արտահայտում էին երկրագնդի բոլոր խաղաղասեր ժողովուրդների ամենամիտաբան խոհերն ու զգացմունքները, հույսերն ու իդեալներ և միանամուտ պահանջում էին վերջ տալ հրեշտավոր սպառազինությունների մրցավազքին, իրագործել ընդհանուր և լրիվ զինաթափում և ապրել խաղաղության ու բարության մեջ, եղբայրորեն:

Մոսկվայի խաղաղության համաշխարհային այս վեճաժողովը մեր ժամանակի կարևոր իրադարձությունն է, ուր ֆենվում էր արդիականության ամենահրատապ հարցերից մեկը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՈՒՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ:

Մոսկվայի խաղաղության համաշխարհային այս կոնգրեսին Հայ եկեղեցու պատգամավորությանը բարեհաճել էր անձամբ գլխավորել խաղաղության բերմ պաշտպան Ազգես Վեհափառ Հայրապետը, տանելով իրեն հետ խաղաղության այդ վեճաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ողջույնն ու օրհնությունը:

Մոսկվայի մարզի Զագորսկ ֆաղաֆում, հոգևորականների ժողովում, Վեհափառ Հայրապետն էր հիւյթում ասաց.

«ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑԱՑ ԵԿԵՂԵՑՎՈ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏԻ ՀԱԶԱՐ ԵՎ ՎԵՑ ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱ ԿՆՏՏՐՈՆ Ս. ԷԶՄԻԱՄՆԻՑ, ՄԵՆՔ ՈՂՋՈՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԲԵՐՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՅՍ ՄԵՍ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ, ՈՐՏԵՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԶԱՅՆԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՂՃԻ ԶԱՅՆԸ ՀՆՑՈՒՄ Է ՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲՈՂՈՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ:

ՈՂՋՈՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԶԵՋ ԲՈՂՈՒՐԻ, ՍԻՐԵԼԻ ԵՂԱՅՐԱՆԵՐ ԵՎ ՔՈՒՅՐԵՐ:

ի, արդարության, հանուն ժողովուրդների ազգային, կրոնական վեճիքավորության և ազատության, ընդդեմ պատերազմի:

Մեր ժողովուրդի Անթուլ Անշլախար և ԱՆՏԱԿՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ Մեր ՍՐՑԻ Մեջ, մենք ՊԱՀԱՆՋՈՒՄ ենք ԲՈՂՈՐԻՑ, ՄԱՆԱՎԱՆԴ Մենք ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՆԱԹԱՓՈՒՄ, — ԼԳՐԱԿԱԳՆՈՒՄ է ՎԵՏԱՓԱՌ Հայրապետը Իր Կեղեցիկ ելույթը:

Մոսկվայի հաղադության Համաշխարհային վեճաժողովի կոչերը, պատգամներն ու ընդունած բանաձևերը կհանդիսանան բարության մի նոր խթան ժողովուրդների ազնիվ, եվրոպական պայքարի նախապահին հանուն եղբայրության, սիրո և միջազգային խաղաղության:

Վեճաժողովի որոշումները, միաձայն ընդունված բանաձևերը և ուղերձը ոգեշնչում են խաղաղության մարտիկների մեծ բանակին նորանոր ստեղծագործությունների՝ հանուն ընդհանուր նպատակի՝ խաղաղության պահպանման:

«ՊԵՆԱԹԱՓՈՒՄԸ, — ասվում է կոնգրեսի բոլոր ժողովուրդներին ուղղված ուղերձում.

— ՈՉ ՄԻԱՑՆ ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ է, ԱՅԼԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ: ԵՐԵԿ ՆԱ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԵՐԱԶԱՆՔԵՐ: ԱՅՍՕՐ ԶԻՆԱԹԱՓՈՒՄԸ ԴԱՐՁԵԼ Է ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽԵԴԻՐ, ՈՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԸ Է ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋԱՆԻՑ ՑՈՒՐԱՔԱՆՉՑՈՒՐԸ:

Դժվար է և իշխող խաղաղության նախապահը, բայց ոչ անեվանելի և անկարելի:

ՄԻԱՑՆ ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ժողովուրդների ԶԱՆՔԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՍՏՊԵՆՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻԶՆԵՐԻՆ, ԼՈՒԾՈՒՄ ԳՏԵՆԼՈՒ ԽԼՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՐՑՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

Թո՛ղ չճանան պատերազմի մահաբեր ամպերը և մարդկության վերև միշտ պայծառ ու չինջ մեա խաղաղության երկնակամարը:

Թո՛ղ ամենաբարին Աստուծո օրհնությունը լինի երկրագնդի խաղաղասեր բոլոր ժողովուրդների վրա:

Թո՛ղ Աստուծո բարիլներով հարուստ այս աշխարհում հաղթանակեն ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ, ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՋ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ:





ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՍԹԵՓՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԺՍԵՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախաձեռնությամբ, հուլիսի 9—14-ին, խաղաղության մայրաքաղաք Մոսկվայում, Կրեմլի Համագումարների ընդարձակ, լուսավոր պալատում գումարվեց Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցեցին 121 երկրների ավելի քան 2 400 պատգամավորներ, բազմաթիվ դիտորդներ, հյուրեր, այդ թվում ակադեմիկոս քաղաքական հասարակական գործիչներ, եկեղեցական մեծ դեմքեր, գիտնականներ և գրողներ, արվեստագետներ, տարբեր ժամանակների և պրոֆեսիայի տեր մարդիկ, պալատականներ, ժողովայիններ, փաստաբաններ, արդյունաբերողներ:

Խաղաղության պաշտպանության նվիրված բոլոր համագումարներից ամենից ավելի ներկայացուցչական այդ վեճաժողովում քննվում էր արդիականության գլխավոր և ամենահրատապ հարցը՝ ընդհանուր զինաթափման և խաղաղության հարցը:

Ընդհանուր զինաթափման և խաղաղության Մոսկվայի համաշխարհային կոնգրեսը մեծ իրադարձություն էր այս օրերին. հոր նոր պատերազմի արհամիրքը, սպառնալից թվումների հիմար մրցավազքը սպառնում են ողջ աշխարհին և քաղաքակրթության:

Տոնականորեն զարդարվել է սրբատի հռչակապ դահլիճը: Բոլոր պատգամավորները, հյուրերն ու դիտորդները գրավել են իրենց տեղերը:

Նախագահության սեղանի մոտ մեղմ, երկնադույն լույսով է ողողված մեծ էկրանը: Նրա վրա է Պաքի Պիկասոյի արտահայտիչ գծանկարը՝ արևի տակ, ջարդված զենքի կուլտի վրա խաղաղության ազգային դափնյա ոստով, իսկ ներքևում լոթ լեզուններով գրվել է՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՍԹԵՓՄԱՆ ԵՎ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԺՍԵՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ:

Մոսկվայի խաղաղության վեճաժողովը բացվում է էմբելի Կոտոնի (Ֆրանսիա) ներածական խոսքով:

«Հավաքվելով Կրեմլում, — ասում է հետո, — այս պատմական վայրում, այն մեծ երկրի սրտում, որն առաջինը աշխարհին առաջարկեց ընդհանուր և լրիվ զինաթափում, մենք համատեղ միջոցներ կորոնենք, որպեսզի անհնարին դարձնենք պատերազմը, իրականացնենք զինաթափումը»:

Այնուհետև ելույթներ են ունենում Խաղաղության Համաշխարհային Խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ պրոֆ. Ջոն Բեռնարդ, Կոնգրեսի Միջազգային կոմիտեի քարտուղար Ալվո Մոնտեգյուն (Անգլիա), Աֆրիկայի և Ասիայի երկրների համաբաշխության հնդկական ասոցիացիայի նախագահ տիկին Ռամնոյալի Ներուն, արոֆ. Կառուի Յասուին (Ճապոնիա), Գիլերմո Մոնտանոն (Մեքսիկա), ՍՍՏՄ Գիտությունների ակադեմիայի նախագահ Մ. Վ. Կելտիշը, չին գրող Մաո Դունը, պրոֆ. Դեյլ Պոմպիեր (ԱՄՆ) և ուրիշներ:

Սույն պլենար նիստում ընտրվում են չորս հանձնաժողովներ, որոնք աշխատելու են առանձին, եզրափակել նիստին բերելու համար իրենց որոշումներն ու բանաձևերը: Այդ հանձնաժողովներում քննվելու են հետևյալ հարցերը.

1. Զինաթափումը և նրա քաղաքական խնդիրները:
 2. Զինաթափման տնտեսական հետևանքները:
 3. Զինաթափումը և ազգային անկախության հարցը:
 4. Զինաթափումը և իրավունքի, մշակույթի, քաղաքականության խնդիրները:
- Կոնգրեսի հուլիսի 10-ի առափոտյան նիստում ելույթ են ունենում բազմաթիվ պատ-

դամավորներ, այդ թվում բողոքականության գործը Ալվիերո Լիսեր, պրոֆ. Ս. Կուլչինսկին (Լեհաստան), Հավանայի համալսարանի ռեկտոր Պոլո, Խուան Մարինելլոն, Գերմանական գիտությունների ակադեմիայի նախագահ Վեոնեհ Հաբոլեն, շվեդի բանաստեղծ Պարյո Ներոտյան, անգլիացի կանոնիկոս Կոլլինգը, կաթոլիկ եպիսկոպոս Լեդեր Խամմաշը և ուրիշներ:

Թուր հետադարձների ելույթները հնչում են որպես խաղաղության պայքարում ժողովուրդների միասնության հզոր կոչ:

Հուլիսի 10-ին, Ընդհանուր դինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսի երեկոյան նիստում, հանդես է գալիս նաև խաղաղության աննկուն մարտիկ, Սովետական Վառաժարության դեկավար, Նորին Գերազանցություն Ն. Ս. Խրուշչովը բովանդակալից, ընդարձակ մեծ ճառով, որը լրսվում է հարաճուն հետաքրքրությամբ, մեծ ուշադրությամբ և բազմիցս ընդհատվում է բուռն, սրտադին ծափահարություններով:

Ն. Ս. Խրուշչովը իր պատմական մեծ ճառում շարադրում է Սովետական Վառաժարության քաղաքականությունը ընդհանուր և լրիվ դինաթափման հարցերում խաղաղության և բոլոր ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարում:

«Ձինաթափումը, — հայտարարում է Ն. Ս. Խրուշչովը, — մեր ժամանակի հրամայական թելադրանքն է և բոլոր ժողովուրդների խաղաղության և անվտանգության երաշխիքը:

Անգեմ աշխարհը մեծ բարիք է համայն մարդկության համար:

Ժողովուրդները կարող են և պետք է հասնեն զինաթափման, սպանանեն խաղաղությունը:

Խաղաղությունը ստեղծագործության դուրսից հեղանկար է, երազանքների իրագործում, մարդկության հարստությունների բազմապատկում, տիեզերքի ճանաչում:

Թող ուրիշ ելնեն բոլոր ժողովուրդները և իրենց ակտիվ գործողություններով փակեն համաշխարհային պատերազմի ճանապարհը, հասնեն զինաթափման:

Այնուհետև, կոնգրեսի երեկոյան նույն նիստում, հրապարակվում են Ժընևի 18-ի կոմիտեի մասնակից երկրների կառավարություններից մի քանիսի պատասխան ուղերձները:

Ընդհանուր դինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսի հետագա աշխատանքները հաջորդ մի քանի օրերի ընթացքում, հուլիսի 12—14, շարունակվում

են համապատասխան վերահիշյալ շորս հանձնաժողովներում:

Միջազգային համաժողովում ծավալված լայն, ազատ բանավեճը նրա յուրաքանչյուր մասնակցի համար հնարավորություն է ստեղծում անկեղծորեն արտահայտելու իր տեսակետը հանձնաժողովներում քննվող հարցերի շուրջ:

Հանձնաժողովների աշխատանքներին մասնակցում են նաև ավելի քան 40 երկրների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մոսկվայի մարզի Զագորսկ քաղաքում, հնագույն ռուսական վանքերից մեկի՝ Տրոիցկ-Սերգիևյան վանքի մեջ, հավաքվել էին զրույցի Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիի հրավերով, Ընդհանուր դինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսի մասնակից տարրեր կրոնների և դավանությունների ներկայացուցիչներ, կրոնական մեծ առաջնորդներ, որոնց թվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ս. Ս. Վազգեն Ա-ր, Բուլղարիայի Պատրիարք Ամենապատիվ Ս. Կիրիլը, Սոնդալական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Լամա Սամա Գամբոշեր, Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայի պատու Մոխալսկին, Մալիի Ռեսպուբլիկայի Իսլամական ասոցիացիայի նախագահ Կոնեմա Մանանը, Սենեգալի, Գանայի և այլ երկրների կրոնական գործիչներ:

Զագորսկի վանքում, ընդհանուր և լրիվ դինաթափման հարցին նվիրված զրույցի ժամանակ, ճառով հանդես եկան Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսի, Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչներ, Անգլիայի, Ֆրանսիայի քրիստոնեական տարրեր եկեղեցիների և դավանությունների ներկայացուցիչներ:

Խորհրդակցության ընթացքում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

«Հանուն Հայաստանյայց եկեղեցվո, հայ ժողովրդի փրկությունեան հավատի հազար և վեց հարյուրամյա կենտրոն Ս. Էջմիածնից, Մենք ողջուն և օրհնություն ենք բերում համաշխարհային այս մեծ համագումարին, որտեղ խաղաղության ծայր, մարդկային խղճի ծայրը հնչում է ուժգին, աշխարհի բոլոր լեզուներով:

Ողջուն և օրհնություն և հաջողություն Ձեզ բոլորիդ, սիրելի եղբայրներ և քույրեր:

Քրիստոնեության մեծ ախոյանը Պողոս առաքյալ ասում է, բն սևեր դեպի Աստված մարդիկ կարող են ապացուցել սիրով

դեպի իրենց նմանները: Կարծում ենք, թե առափնական այս պատգամը մեր օրերին հետևյալ ձևը պետք է ստանա.— Եթե հավատում ես Աստծուն և սիրում ես Նրան, ապա այդ կարող ես ապացուցել ոչ խաղաղասիրությամբ: Վասնզի մեր օրերին մանավանդ, մարդասիրության գերազույն ապացույցը՝ աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարն է:

Քրիստոնեությունը ինքը, խաղաղության և մարդասիրության մի առափնություն է մարդկային աշխարհի մեջ:

Հետևաբար, երկյամպի և անստուգության մեջ տառապող այսօրվա մարդկության, պարտին, մանավանդ մենք, հոգեւորականներս, գույց տալ խաղաղության և ամբողջական զինաթափման ճանապարհը:

Աստմական դարաշրջանի պայմանների մեջ այլևս կարելի չէ փրկառեւյա լինել, մարդ լինել, և խաղաղության դատին պաշտպան չհանդիսանալ և չգործել խաղաղության հաղթանակի համար:

Ոչ մեկ ընկերային, բաղադրական, ազգային կամ միջազգային հարց այլևս կարելի չէ լուծել պատերազմով:

Պատերազմի հնարավորությունը պետք է մարդկային կյանքի մտածումից դուրս վանել, իբրև միջազգային իրավունքի գերազույն կանոն:

Աշխարհի խաղաղության դատի հաղթանակը, մեծագույն հաղթանակը պիտի լինի մարդկային բարոյական հաճախ: Մարդու իմացական հանճարի հրաշալի նվաճումների մեր դարաշրջանում, իրավունք և պարտականություն ունենք սպասելու նաև նրա բարոյական հաճախի հաղթանակը: Եվ միայն բարոյական հաճախի հաղթանակով կարելի պիտի լինի ապահովել իմացական հաճախի ստեղծած բարիքները՝ հեղափոխություն բոլոր մարդկանց և բոլոր ժողովուրդների:

Ուրեմն ամեն զնով խաղաղություն, ամեն տեղ խաղաղություն, բոլորի համար խաղաղություն՝ առաջադրության և ազատ ինքնորոշման սկզբունքով:

Աշխարհի ժողովուրդները պետք է վեհական կերպով պահանջեն, որպեսզի Միավոր-

ված Ազգերի Կազմակերպությունը և պետություններին միացյալ բոլոր ուժերը ծառայեն միայն մի բանի՝ ապահովել աշխարհի խաղաղությունը և հանապարհ բանալ ընդհանուր և ամբողջական զինաթափման: Եվ այլևս ոչ մեկ աստմական փորձարկում չպետք է հանդուրժել:

Եթե այս օրերին մենք բոլորս, աշխարհի վրա ապրողներս, չկարողանանք զսպել ու տապալել այն գազանը, որ կոչվում է պատերազմական ոգի, առդյո՛ք այլևս արժանի կլինենք մարդ կոչվելու, փրկառեւյա կոչվելու, և առհասարակ արդյո՛ք իրավունք կունենանք ապրելու բարիքներով և հրաշալիքներով լեցուն այս աշխարհի մեջ:

Անարգանքի սյունին գամենք կայունին, որպեսզի այլևս երկկից չկարողանա իր ոհմադործ ձեռքը շարժել, և որպեսզի Արեւիկայի փառս Աստուծո պատվիրանները և ի փառս մարդկության:

Ընդդիմանալ պատերազմին, նշանակում է հաղաթանակվել Աստծու կամքին:

Մենք խոսում ենք Հայ եկեղեցու և հայ ժողովրդի անունով, որ դարձեւ շարունակ բայց մանավանդ առաջին համաշխարհային պատերազմին, անավուր կերպով նահատակվեց իր իսկ պատմական Հայրենիքի մեջ, երբ զոհ գնացին երկու միլիոն հայեր և խառնակի վերածվեցին հազարավոր հայ գյուղեր ու քաղաքներ, և բազմահազարյան վանքեր ու եկեղեցիներ, արևմտյան պատմական Հայաստանի մեջ: Հայ ժողովուրդը մեծ զոհեր տվեց նաև համաշխարհային երկրորդ պատերազմին, Սովետական եղբայրական ժողովուրդների հետ միատեղ պայքարելով իր Հայրենի սրբազան հողը ֆաշիստական հարձակման դեմ:

Մեր ժողովրդի անթիվ անհամար, նահատակների հիշատակը մեր սրտի մեջ, Մենք պահանջում ենք բոլորից, մանավանդ մեծ պետությունների ղեկավարներից՝ արդարություն և զինաթափում:

Սիրելի եղբայրներ և քույրեր, վստահ եղե՛ք, թե Աստված ձեզ հետ է, որովհետև դուք խաղաղության հետ եք: Ձիւ Աստված սեր է՝ և խաղաղության Աստված է:

Հուլիսի 14-ին, շաբաթ, երեկոյան ժամը 18.30-ին, Կրեմլի Համագումարների պալատում գումարվում է Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսի եզրափակիչ նիստը, որը ներկայացվում են զեկուցագրեր չորս հանձնաժողովների կատարած աշխատանքների, վիճարանությունների և մշակված հանձնարարականների արդյունքների մասին:

ժամը 21-ին, Ընդհանուր պինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսն ավարտում է իր աշխատանքները: Կոնգրեսն ընդունում է հեռակալ ուղերձը, ուղղված աշխարհի ժողովուրդներին:

«Մենք Մոսկվա՝ Կոնգրեսին ենք հավաքվել աշխարհի բոլոր կողմերից: Մեր մասնագիտությունները տարբեր են: Մենք ունենք տարբեր հասկացումներ: Մի շաբաթ շարունակ մենք ամենամեծ անկեղծությամբ քննարկում էինք մարդկության գլխին կախված միջուկային պատերազմի սպառնալիքի հարցերը: Դիսկուսիայի ընթացքում մենք ավելի լավ հասկացանք միմյանց և այժմ մենք համոզված ենք, որ կարելի է կանխել այն սպառնալիքը, որին այսօր ենթարկվում է յուրաքանչյուր երկիր և յուրաքանչյուր ժողովուրդ:

Սպառապինությունների մրցավազքը ուժեղացնում է լարվածությունը և անվստահությունը պետությունների միջև, իսկ լարվածությունը և անվստահությունը պետությունների միջև՝ արագացնում են սպառապինությունների մրցավազքը: Այսպիսով, առաջ է գալիս արատավոր մի շրջագիծ: Ձենքի ավերիչ ուժը դառնում է սարսափելի, և ընդսմին, մնչում են պրեկենտիվ պատերազմի կոչող ծայրեր:

Եվ այնուամենայնիվ, մենք հաստատապես հավատում ենք, որ պինաթափումը ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ է, այլև հնարավոր: Երևի նաև մարդկության լավագույն մտածողների երազանքն էր: Այսօր պինաթափումը դարձել է գործնական խնդիր, որի լուծման համար պետք է պայքարի մեզանից յուրաքանչյուրը:

Սպառապինությունների մրցավազքի բեռից ապատվելը օգտակար կլինի բոլորի համար:

պինաթափումը կապատի միջոցներ, որոնք կարող են օգտագործվել լուր երկրներում կենսամակարդակի բարձրացման համար:

պինաթափումը թույլ կտա տնտեսել միջոցներ, որոնք կարող են կապիտալ արագացնել տնտեսական տեսակետից թույլ կարգացած երկրների կարգացումը:

պինաթափումը կնշանակի վերացնել օտարերկրյա ռապակական բազաները և դուրս բերել պորբերը ուրիշ տերիտորիաներից, մի բան, որ օգնությունը ցույց կտա ազգային անկախության համար մարտնչող ժողովուրդներին:

Ձինաթափումը պետք է լինի ընդհանուր և լրիվ ու անցկացվի միջազգային խիստ վերա-

հսկողությամբ: Ոչ մի պինաթափում չի կարող լինել առանց վերահսկողության և ոչ մի վերահսկողություն՝ առանց պինաթափման:

Մենք մանրակրկիտ կերպով ուսումնասիրեցինք ընդհանուր և լրիվ պինաթափման իրագործման ճանապարհին ծառացած խոչընդոտները և մենք գիտենք, որ դժվար կլինի հասնել դրան: Կան մարդիկ, որոնք նույնիսկ հանդես են գալիս բանակցությունների դեմ: Նրանցից ոմանք այդպես են վարվում, որովհետև կույր են և ինքնուրույն, մյուսները՝ հանուն հարստացման, ուրիշները՝ միլիտարիստական ձգտումներով: Այնուամենայնիվ, մենք համոզված ենք, որ բոլոր խոչընդոտներն էլ կարելի է հաղթահարել: Ձինաթափման ամեն մի պլանի մեջ կարելի է տեսնել ինչ որ թույլ կողմեր, բայց մենք համոզված ենք, որ ավելի լավ է դիմել բոլորի համար ընդունելի կոմպրոմիսի, քան շարունակել սպառապինությունների մրցավազքը:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ վտանգավոր պատրանք կլինի հավատալ, թե պինաթափումը կարող է գալ ինքնին: Ձի կարելի ուղիսը դնել միայն դիվանագետների և ռապակական մասնագետների վրա, որոնք տարեցտարի ձգձգում են իրենց դիսկուսիաները: Միայն բոլոր երկրների ժողովուրդների ջանքերը կարող են պետական գործիչներին հարկադրել գտնելու լուծում: Արդեն բավարար չեն անջատ-անջատ բողոքները: Հասել է ժամանակը՝ ստեղծելու սպառապինությունների մրցավազքի և բոլոր ռապակական պատրաստություններին դիմադրության հզոր շարժում:

Եթե մարդկությանը հաջողվեց վերջին տասնյոթ տարվա ընթացքում խուսափել միջուկային պատերազմի սարսափներից, ապա այդ բանը տեղի ունեցավ ամենից առաջ խաղաղության համար մարտնչող ժողովուրդների անդադրում ջանքերի շնորհիվ: Սակայն մենք պետք է բացահայտորեն ընդունենք, որ դեռ կան շատ մարդիկ, որոնք մի կողմ են կանգնած սպառապինությունների մրցավազքի դեմ մղվող պայքարից: Դեռ կան շատ մարդիկ, որոնք չեն գիտակցում նրա վտանգները, չեն հասկանում ո՛չ այդ սպառնալիքի ամբողջ լրջությունը, ո՛չ էլ իրենց պատասխանատվությունը խաղաղության պահպանման համար: Եվ նրանք բոլորին ասում ենք. «Հասկացե՛ք, թե ինչպիսի վտանգավոր օրերում ենք մենք

ապրում, մտե՛ք այն մարդկանց շարքերը, ովքեր պայքարում են պինաթափման և խաղաղության համար»:

Ժամանակը չի՝ սպասում: Զերմամիջուկային զենքը շուտով կարող է հայտնվել տասնյակ երկրների պինանոցում, և այդ զենքը տեղ հասցնելու միջոցների կատարելագործումը կարող է անհնարին դարձնել վերահսկողությունը:

Մենք վճռականորեն հանդես ենք գալիս միջուկային ռուբերի կամ սարքերի ամեն տեսակ փորձարկումների դեմ, նախ, որովհետև դրանք սպառնում են ներկայիս և ապագա սերունդների կյանքին ու առողջությանը, և, երկրորդ, որովհետև դրանք արագացնում են սպառապիությունների մրցավազքի տեմպերը:

Մենք՝ կոչով դիմում ենք բոլոր միջուկատեր տերությունների կառավարություններին, մենք նրանց խնդրում ենք առանց որևէ հապաղման պայմանավորվածության հասնել միջուկային զենքի բոլոր փորձարկումները դադարեցնելու մասին և կնքել այդ բոլոր փորձարկումները ամենուրեք՝ մթնոլորտում, տիեզերքում, գետնի տակ և ջրի տակ առհավետ արգելելու պայմանագիր:

Այդ համաձայնությունը առաջին քայլը կլինի խիստ վերահսկողությամբ ամբողջ միջուկային զենքի և այն տեղ հասցնելու բոլոր միջոցների լիակատար արգելման և ոչնչացման ճանապարհին:

Մեր գլխավոր և անհետաձգելի խնդիրն է՝ հասնել այն բանին, որ կառավարությունները կնքեն միջապգային խիստ վերահսկողությամբ ընդհանուր և լրիվ պինաթափման պայմանագիր: Այդ կապակցությամբ պետք է գտնվեն այնպիսի գործնական մեթոդներ, որոնք թույլ

տան արագորեն ու արդյունավետ կերպով ավարտել քննության դրված պինաթափման պլանների քննարկումը, որոնք նպաստում են պայմանագրի շուտափույթ կնքմանը:

Հասարակական կարծիքի ճնշման ներքո և չմիացած երկրների գործողությունների շնորհիվ, հաջողվեց հասնել բանակցություններ վարող գլխավոր տերությունների դիրքերի մասնակի մերձեցման պինաթափման սկզբունքների նկատմամբ, սակայն նրանց միջև եղած լուրջ տարածայնությունների պատճառով բանակցությունները մնում են փակուղում: Համաձայնություն կարելի է ձեռք բերել միայն այն դեպքում, եթե ժողովուրդներն ուժեղացնեն իրենց ճնշումը:

Հենց խաղաղության ուժերն են, որ պետք է տան լավագույն փոխըմբռնում հաստատելու և փոխադարձ անվստահությունը վերացնելու օրինակ: Մենք գտնում ենք, որ մեր կոնգրեսը մեծ ավանդ ներդրեց այդ խնդրի իրականացման գործում: Այժմ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր երկրում յուրաքանչյուր կազմակերպություն գտնի իր համար առավել հարմար ուղիներ շարունակելու այն, ինչ ձեռնարկեցինք համատեղ:

Պասսիվությունը վնասում է խաղաղության գործին: Մեկ բոլորիցս է կախված այն, թե երբ կհասնի միջուկային մահվան սպառնալիքից մարդկության ապատագրման օրը: Մենք՝ խաղաղություն ցանկացողներս, շատ ենք: Եթե մենք բոլորս գործենք, և եթե բոլորը, ովքեր գործում են, գործեն միաբանորեն, մենք կկարողանանք հարթել մեր ընդհանուր նպատակի իրագործման՝ խաղաղության պահպանման ուղին:

Մոսկվա, 14 Ռուկսի 1962 թվականի:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՆՈՎՈՍԻ ՊԵՋԱՏ»-Ի ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԻՆ

«Նովոստի պեչատ»-ի խմբագրության թղթակիցը գիմել էր Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Վազգեն Ա-ին հետևյալ հարցով.

ՀԱՐՑ.— Խնդրում ենք հայտնել Ձեր կարծիքը տիեզերքը նվաճելու և սովետական տիեզերագնացների խմբային թռիչքի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— ՍՍՌՄ-ում և նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր հայ հոգևորականությունը, հայ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ, հիացած է սովետական գիտության հսկայական հաջողություններով: Տիեզերական տարածությունը նվաճելու ասպարեկում եղած հաղթանակի ուրախությունը բաժանում ենք: Երկրագնդի շուրջ «Վոստոկ—3» և «Վոստոկ—4» սովետական տիեզերանավերի պատմական նոր խմբային թռիչքները, ղեկավարված Սովետական Հայրենիքի փառապանծ պալադներ Անդրիան Նիկոլանի և Պավել Պոպովիչի կողմից, հանդիսանում են սովետական մարդկանց հերոսական սխրագործությունը և գիտության ու տեխնիկայի խաղաղ պարգաքման մեծագույն նվաճումը: Թող մարդու վտքի բոլոր նվաճումները բացառաբար ծառայեն խաղաղության և առաջադիմության:

Ամբողջ սրտով Մենք շնորհավորում ենք և օրհնում խիպախ հերոսներին՝ տիեզերագնացներ Անդրիան Նիկոլանին և Պավել Պոպովիչին՝ բարեհաջող թռիչքի և հաջող վերադարձի համար Երկիր:

Կեցցե՛ աշխարհի խաղաղությունը:

18 օգոստոսի 1962 թ.

Էմիլաժի՛ճ





ԾԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՎԱԶԱՆԻ ՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 25-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 10-ին, Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, Վեհափառ Հայրապետի հրամանով, Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Ներսես և Տ. Եղիշե արեղաներին շնորհեց մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն:

Ժամը 9.30-ին Մայր Աթոռի միաբանությունը և Հոգևոր Ժեմարանի ուսանողությունը արդեն Օշականում էին:

Ժամը 10-ին ղողանելում են եկեղեցու գանգերը, մինչ ժամանում են Անթիլիասի օրինապահ միաբանության տեղապահ գերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աղապահյանը և Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը:

Հանդիսավորությամբ սկսվում է սկանոն մասնաւոր իշխանութեան:

Խարտավիլակի պաշտունը կատարում է Տ. Հակոբ քահանա Տ. Հակոբյանը:

Շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների համապատասխան կատարմամբ, աստիճան առ աստիճան, շնորհվում է աշակերտացն ճշմարիտ Թանին քարոզութեան զմասնաւորն իշխանութիւն, որ է յորս աստիճան... յօրինեալ Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ ճշմարտութեան վարդապետի, գերազանճար Հոնտորի և տնյաղի ախոյեանի սուրբ հաւատոյ:

Արդարեւ գեղեցիկ և իմաստալից է «մասնաւոր վարդապետական գաւազան տալոյ» կարգը: Դա թեկնածուների իմացական և հոգեկան աճի վկայութիւնն է, որով նրանք իրավունք են ստանում շնորհարաշխութեամբ քարոզելոյ գրանն կենաց ողջամիտ քարոզութեամբ, յունկն հաւատացելոց, «ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս», պահելու «զպատուէր օրինադութեանց հարցն սրբոց, ողջամիտ վարդապետութեամբ, ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ»:

Մասնավոր վարդապետական գավազանի իշխանութեան տվելութիւնից հետո, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը խոսում է գեղեցիկ խրատական «նշուք եղիցիք առաջի Տեսնեմ մշակք առանց ամօթոյ և ծառայ ազնուական» քնարանով:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, այսուհետեւ «սկանոն մասնաւոր իշխանութեան գաւազան տալոյ» արարողությունը կատարվելու է Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոցի հավերժական և ներշնչող դամբարանի մոտ, նրա անվան եկեղեցում:

Արարողությունից հետո, եկեղեցական թափօրը, «միք զարդարեցին» շարականի երգակցությամբ, աղոթքով և խնկով, իջնում է դամբարան, համբուրելու Մեծ Սրբի դերեզմանը:

Ժամը 12.30-ին, Օշականի ուխտավորները վերադառնում են վանք:


Նորընծա վարդապետները, գերաշնորհ Տ. Խաղ և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիս-

կոպոսների գլխավորությամբ, առաջնորդվում են Վեհարան, ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնությունները:

Հոգեշնորհ Տ. Գրիգոր, Տ. Մեսրոպ, Տ. Ներսես և Տ. Եղիշե վարդապետները նախապես պատրաստել և Վեհափառ Հայրապետին էին ներկայացրել իրենց վարդապետական ավարտաճառերը:

Նորին Ս. Սծության հրամանով քննիչ հանձնաժողովը, որի կազմի մեջ էին մտնում Մայր Աթոռի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ.

Հոգևոր Ժեմարանի տեսչարանում տեղի ունեցած վարդապետական ավարտաճառերի բանավոր պաշտպանության ժամանակ, թեկնածուները նախ ներկայացրին համառոտակի իրենց ավարտաճառերի բովանդակությունը, մշակման մեթոդները, աղբյուրները, և ապա պատասխանեցին քննիչ հանձնաժողովի հարցերին, որոնք ընդհանրապես վերաբերում էին Հայաստանյայց Եկեղեցու պատմության, դավանանքին, Ս. Գրոց մեկնություն և մատենադրության:



ԳԵՐԱԳՈՐԷ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՎԻՍԿՈՊՈՍԸ ԻՄ ԱՌԻՍԿՐԻՄՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻՆ ՏԱԼԻՍ Է ԽՐԱՏԱԼՈՒՄ:

Ուհակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արհամյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Մահակյանը, Հոգևոր Ժեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը և «էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ժեմարանի դասախոս Ա. Հատիսյանը, հանդամանորեն քննելուց հետո ներկայացված ավարտաճառերը, ոգոստոսի 23-ին նշանակել էր հրապարակային բանավոր պաշտպանություն:

Ներկայացված վարդապետական ավարտաճառերի հաջող պաշտպանությունից հետո, քննիչ հանձնաժողովը իր եզրակացությունները ներկայացրեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, թեկնածուներին արժանի դրոշմով մասնավոր վարդապետական գավաղանի իշխանության:

Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիանի ավարտաճառի նյութն էր «Ահոյայ ծավի նորագյուտ ձեռագրերը և չորս Ավետաբաններ»:

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պայլանի սավարտաճառի նյութն էր «Ունեղուցե»:



Տ. ԽԱԿԻ ԵՎ Տ. ՀԱՅԻԱԳՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՏՈՍԻՆՈՒՆԸ:
ՆՈՐ ՋԵՌԵԱԳՐՎԱՆ ՎԱՐԳԱՊԵՏՆԵՐԻ ՀԵՑ

թառականների ծագումը, բովանդակությունը
և արվեստը:

Հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոս-
պալյանի ավարտաճառի նյութն էր «Հայ իկե-
ղեցու պատմագրություն»:

Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Գարաշյա-
նի ավարտաճառի նյութն էր «Վաղարշապա-
տի պատմական հուշարձանները անցյալում
և այսօր»:





ՉԵՌՆԵԴԻՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՅՐ ԱԹՁՈՒՄ

Օգոստոսի 25-ը և 26-ը Մայր Աթոսում հանդիսացան հոգևոր ուրախության և շնորհաբաշխության խանդավառ օրեր, որպես նախատոնակը աշնան գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովի հանդիսություններին:

Օգոստոսի 25-ին, շաբաթ օրը, Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, մասնավոր վարդապետական իշխանություն ստացան Մայր Աթոռի յոթս երիտասարդ միաբաններ՝ հոգեշնորհ Տ. Գրիգոր, Ս. Մեսրոպ, Տ. Ներսիս և Տ. Նովիշ արեղանկրո:

Օգոստոսի 26-ին, կիրակի օր, Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հակապուն արքեպիսկոպոս Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և կուսակրոն քահանա ձեռնադրեց բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանին և բարեշնորհ Արշավիր սարկավագ Շաքարյանին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, կատարվեց «Կոչումն քահանայութեան» արարողությունը Մայր Տաճարում, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի նախագահությամբ:

Կոչման արարողության ընթացքում ընծայացումները հրապարակով հայտնում են իրենց խոստումը, որ «կամօք և յօժարութեամբ սրտիս պատրաստ են ստանձնելու կուսակրոն քահանայական ծանր բայց քաղցր լուծը և սերթայ կամաս զհետ կենարարին, յանսպառ ուրախութիւնս»:

Կոչման արարողությունն ավարտվում է ընծայացումների «ուղղափառ դաւանութիւն Հայաւոց» բառը ասելու և հրապարակելու ընթերցումով:

Կիրակի օր, Մայր Տաճարում, կատարվում է «Կանոն ձեռնադրութեան քահանայի»:

Հանդիսության ներկա են Վեհափառ Հայրապետը և գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Ազապահյանը:

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Զի ոյրում» և մարդասէր ևս Աստուածն արգթի:

«Այսօր աստուածութիւնն դուարճանայ յարականով ընծայայները ձախակոյմյան դասից ծնրադիր բարձրանում են և առաջնորդվում դեպի ձեռնադրող սրբազանի աթոռը»:

Խաղաղության պաշտոնը կատարում է Մայր Տաճարի փոխ լուսարարապետ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոպայանը:

Ձեռնադրության խորհրդի իմաստը նշող համապատասխան քովանդակալից սաղմոսների, շարականների և աղոթքների միջոցով ձեռնադրող սրբազանը հայցում է «աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ յնուղպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական եկեղեցւոյ»:

Ձեռնադրության ժամանակ հարկավոր է նաև ժողովրդի վկայությունը ընծայաների արժանավորության մասին:

Երգեցիկ խումբը երգում է միաբերան «Արժանի եմ»:

Նանդիսության ներկա հավատացյալները իրենց վկայությունն են հայտնում ընծայադրողների հուսալիության և արժանավորության մասին:

Այժմ ձեռնադրության խորհրդավոր պահն է: Ընծայալները ծնրադիր, լսում են սրբազանի ոգեկոչումը և աղոթքը:

— Ես դենմ ձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զատուիճան քահանայութեան անարատ պահն, առաջի Սեղանոյ Տեառն Աստուծոյ:

Այնուհետև սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջուն»-ի պահը, երբ ձեռնադրող սրբազանը աղոթքներով և օրհնու-

րոս սարկավազին վերանվանելով Տ. Արսեն կուսակրոն փաճառ, Արշավիր սարկավազին՝ Տ. Նարեկ կուսակրոն փաճառ:

Ապա ձեռնադրող սրբազանը աղոթքով և օրհնությամբ ընծայալներին հանձնում է սկիհը, մաշգոման և քուրմառը և հրահանգում է նրանց տալ խաղաղության ողջունը հավատացյալներին:

Նորընծաների այս օրհնությամբ վերջանում է օծման սրտառուլ արարողությունը:

Պատարագիչ սրբազանը այնուհետև զեղիցիկ խրատական է խոսում ժուխտս դիր և կատարեցէք՝ բնաբանով, բարեմաղթելով, որ նրանք լինեն՝ ժշակք սուանց ամօթոյս և հա-



ԸՆԾԱՅԱԼՆԵՐԸ ՏԱԼԻՍ ԵՆ ԱՇԽԱՐԶՈՅ ԶՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՈՐԽՏԸ

թյամբ «առկանէ զփիլոնն... դնէ զսաղաւարտն ի գլուխ... զգեցուցանէ զշուրջառն... կապէ ցգօտին»:

Փակվում է վարագույրը: Տաճարում հընչում է ձեռնադրող խորին»-ը, մինչ նորընծաները զգեստավորվում են քահանայաբար:

Այժմ օծման սրտառուլ պահն է: Սարկավազների խումբը ոգևորությամբ կատարում է «Կենդանարուր Աստուծո՞ւ շարականը, մինչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը օծմանէ Սրբալոյս Մեղուհաւ պճախս...», «զերկուս ձեռսն...», Պիտ-

վատում ու նվիրումով ծառայեն Մայր Աթոռին, Հայրենիքին և հավատացյալ հայ ժողովրդին:

Ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տրվում է ճաշկերույթ:

Սեղանը օրհնում է գերապատիվ Տ. Խաղարքեպիսկոպոս Աղապահյանը:

Ընդունելության ընթացքում հոգեշնորհ Տ. Արսեն և հոգեշնորհ Տ. Նարեկ նորընծա արքեպիսկոպոսները շնորհավորում են Վեհափառ Հայրապետը, գերաշնորհ Տ. Խաղ, Տ. Սահակ,

Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, Դերուսույն Հոգևոր հորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը, Այրարատյան թեմի փոխանորդ հոգևչնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուր Հասիսյանը:

Հոգևչնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և հոգևչնորհ Տ. Արսեն արևդա Բերբերյանը, հանուն իրենց ընկերների, երախտադիտական, շնորհակալական ջերմ խոսք են ասում Վեհափառ Հայրապետին, փրահարողելով իրենց ուխտը՝ ծառայելու Մայր Աթոռին և Հայաստանյալց Առաքելական եկեղեցուն:

Նվիրումի այս պահին,
Ազոթատան մեջ լսին,
Մենք հոգևին վերացած,
Տեսնում ենք քեզ ու լսում,
Ու քեզանով վեհանում:
Դու՝ ոգևղեն, մենք՝ հոգևղեն,
Դու՝ ուսուցիչ, մենք՝ աշակերտ,
Ոտներիդ մոտ, շիրմիդ առաջ,
Սրտատրոփ, դիտահակ,
Աստվածային ենք աղերսում,
Չորս արեղայք ծնրադիր,
Լույսին առջև կանթնդիրդ,
Շունչիդ մոտիկ, քո տեսիլքով
Մեր ուխտերն ենք կրկնում նորից»:



«ԵՍ ԴԵՆՈՒ ԶԻՌՈՒ Ի ՎԵՐԼՈՑ ՈՐՈՒՆ ԵՒ ԴՈՒՎ՝ ԱՄՈՆԵՔՆԱՆ ԱԶՈԹՈՒ ԱՐԵՐԷՔ»:


Հոգևչնորհ Տ. Ներսես վարդապետ Պողոսյանը ընթերցում է մի օր առաջ Ոչակալում, Ս. Մեդրուպ Մաշտոցի շիրմի մոտ դրած իր բանաստեղծությունը:

«Առ՝բը Մեսրոպ,
Ոչականի անմա՛հ մեռյալ,
Սուրբ վարդապետ,
Հետնորդներդ՝ մենք այսօր,
Քո շիրմի մոտ լուսն,
Մերադրել ենք, հայցելու
Քո կոչումից՝ մեզ կոչում,
Լո՛ւյս՝ Վարդապետ,

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Էջ Միածինն ի Հօրէ» հոգևղմայլ շարականով:

Երեկոյան ժամերգությունից առաջ Մայր Տաճարում կատարվում է «Վանոն օրհնութեան արեղայի», վեղարի տվչության հետ կապված աղոթքով:

Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը «հանէ դջրունն և զգեցուցանէ զվեղարն և ասէ. Աստուած զվեցուցանէ քեզ զնոր մարդն և եղիցիս զու հոլատակ և հնազանդ





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՕԳՈՍՏՈՍԻ 5-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա նղիայանը:



ՕԳՈՍՏՈՍԻ 9-ին, ՀԻՆԳՇԱՐԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ դերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանի, վերադարձավ Մայր Աթոռ Կիսլովոդսկից, ուր հանգստանում էր:



ՕԳՈՍՏՈՍԻ 11-ին, ՇԱՐԱԹ, «սոն Շողակաթի Սրբոյ էջմիածնի ըստ տեսիան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» Մայր Տաճարում պատարագեց արժանապատիւ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:



ՕԳՈՍՏՈՍԻ 12-ին, ԿԻՐԱԿԻ, «Վերափութումն Ս. Աստուածածնի» Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց խաղողորհների արարողությունը:



ՕԳՈՍՏՈՍԻ 13-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, «յիշատակ մեռելոց» Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նղիշ արեղա Գարաջյանը:



ՕԳՈՍՏՈՍԻ 19-ին, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողապալյանը, բնարան ունենալով «Աղայեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած. զի լոնսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի, աղաչեմք»:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՕԳՈՍՏՈՍԻ 20-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, Մայր Աթոռում տեղի ունեցավ ճարտարապետական հանձնախմբի ժողով, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետի: Քննարկվեցին Տրդատի դռան, նոր Վեհարանի վերանորոգման հետ կապված հարցեր և Գեղարդի վանքի միաբանութեան և ուխտավորների շենքերի նախագծերը:



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՐՈՍՅԱՆԻ

(1884—1962)

Հունիսի 1-ին, երկարատև և ծանր հիվանդությամբ հետո, Բաքվում վախճանվեց Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1884 թվականին Ալաշկերտում (Թուրքիայում), գյուղական ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում և ապա ընդունվել Կեդրային ճեմարան, որն ավարտել է 1907 թվականին:

1907—1913 թվականներին դրադվել է ուսուցչությամբ: 1913 թվականին դարձել է կուսակրոն քահանա:

1913—1923 թվականներին նշանակվել է Ամարասի վանքի վանահայր և մինչև 1945 թվականը միաժամանակ դրադվել է ուսուցչությամբ:

1943—1945 թվականներին նշանակվել է Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդ, իր րարվոր ծառայությունների համար նույն թվականին վարձատրվել է վարդապետական լանջախաչով:

1945 թվականին ձեռնադրվում է եպիսկոպոս և նշանակվում Ռուսիայի թեմի առաջնորդ:

1947—1954 թվականներին, առաջնորդական պաշտոններ է վարում Բաքվի, Հյուսիսային Կովկասի և Շիրակի թեմերում:

1955—1962 թվականներին, հիվանդության պատճառով, Սուրեն սրբազանը բաշվել էր աշխատանքից և մնում էր Մայր Աթոռում:

Հունիսի 3-ին, ուրբաթ օրը, Բաքվի հայոց Ս. Գրիգոր լուսավորիչ եկեղեցում կատարվեց հանգուցյալի վերջին օծման արարողությունը:

Բաքվի հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթրույանը մատուցեց Հոգեգալստյան սուրբ պատարագը:

Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը կատարեց հանգուցյալ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի վերջին օծումը և իր



դամբանական քարույում խոսեց նրա կյանքի և գործունեության մասին:

Հանգուցյալի վերջին օծման և թաղման արարողություններին իր մասնակցությունը բերեց նաև հոգեշնորհ Տ. Միսրոպ արևլա Պալյանը:

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Բաքվի հայոց դերեգմանատանը:

Գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը գիտակից, դարպաղած և հայրենասեր հոգևորական էր:

Հանգի՛ստ. նրա ոսկորներին:



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԳԵՐԱՇԵՆՈՐՀ Տ. ԵԶԵԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՒՐԾԱՆԻ

(1880—1962)



Հանգուցյալ սրբազանը ծնվել էր 1880 թվականի հունիսի 15-ին, Ալաշկերտում (Թուփրագկայի), երկրագործի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծնընդավայրի դպրոցում։ 1894 թվականին ընդունվում է Գեորգյան ճեմարանը, որի գասրնթացն ավարտելով 1902 թվականին, հրավիրվում է Նոր-Ջուղա՝ ուսուցչության։

1906 թվականին ուսուցչության պաշտոն է ստանձնում Կարսի և Արտաշանի հայկադան դպրոցներում մինչև 1912 թվականը։ Այս աշխատում է Լենինականում, Կիրովականում և Երևանում՝ որպես հաշվապահ։

1944 թվականի մարտի 1-ին ձեռնադրվում է վարդապետ։ 1945 թվականին նշանակվում է Ս. Գեղարդի վանքի վանահայր։

1954 թվականի սկիզբներին նշանակվում է առաջնորդ Թաթևի հայոց թիմի, որի վրա հպիսկոսանում է 1955 թվականին։

1955 թվականի աշնան, Աղզային-Եկեղիյան ժողովում ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և նշանակվում է Մայր Տաճարի ժամօրհնող։

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվեցին հինգշաբթի, օգոստոսի 9-ին։


Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Ուհակ արքեպիսկոպոսը Մայր Տաճարում պատարագեց և կատարեց հանգուցյալի վերջին օծումը։ Սրբազանը իր գամբանական ճառում խոսեց հանգուցյալի կյանքի և զործունեության գլխավոր գծերի վրա։

Կրկնյան ժամը 5-ին, Վհհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հանգուցյալի թաղման արարողությունը և աճյուներ ամփոփվեց Ս. Գայանեի վանքի միաբանական զերեզմանոցում։

Հանգի՛ստ նրա ոսկորներին։

Օգոստոսի 7-ին, Մայր Աթոռում, միաբանական իր սննդակում, հանկարծամահ եղավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Մայր Աթոռի երիցագույն միաբան գերաշնորհ Տ. Եզնիկ հպիսկոպոս Աղնավուրյանը, 82 տարեկան հասակում։





ՍՈՒՐԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՄԶՆԴԵԱՆ 1600-ԱՄԾԱԿԻ ՏՈՒՆԱԿԱՏԱՐՈՒԹԵՈՒՆԸ ԼՈՒԴՈՆԻ ՏԵՋ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԻ ՊԱՏԱՐԱԳ Ի ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԵՆՏՐԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հոնդոնի հայ համայնքը Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը ոգեկոչեց կիրակի, 22 հուլիսին, Ս. Սարգիս եկեղեցվում եջ հանդիսավոր սուրբ պատարագի մատուցմամբ:

Օրեր առաջ, Անգլիայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պատկ հայկական Թումայան շրջաբերականով մը բացատրած էր օրվան մեծ տոնին նշանակությունը և հրավիրած իր համայնքին անդամները, զարու և իրենց հարգանքի և երախտադրությունների տուրքը ընծայարեբնու ախ մեծ սուրբին և մեծ հայուն հիշատակի խորանին:

Այս տոնակատարությունը Հոնդոնի մեջ մասնավոր փայլ մը և նշանակություն մը կառնեք միջազգային լսականիդով այն պատճառով, որ այդ օր արարողության ներկա պիտի ըլլար և խոսք առնեք Քենտրերիորի Արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզի, իր հետ ունենալով անգլիկան հայկական պատկանեք և քահանաներ: Տեղվույն հույն օրթոդոքս հայկական պատկանեք ևս իր ներկայությամբ մեզ պիտի պատվերու Քի Քի Սիմոն կարդարած էր արարողությունը ձայնաուրիս սմբողություններ:

Գերաշնորհ Տ. Պատկ հայկական Թումայան ժամը 10.30-ին սկսավ սուրբ պատարագի արարողությունը, մինչ հյուր եկեղեցականները կզգեստավորվին եկեղեցատան մեջ: Խնկարկության թափորի պահուն դարաց դասը, սուրբ սեղանին սպասարկողները և պատարագի սրբազան ուղղվեցան դեպի եկեղեցատուն՝ ողջունելու Քենտրերիորի արքեպիսկոպոսը և մյուս եկեղեցական հյուրերը և զանաք առաջնորդելու Ս. Սարգիս եկեղեցին:

Կազմվեցավ պատկատելի թափոր մի հետևյալ կարգով: Քենտրերիորի Արքեպիսկոպոսի զավազանակիր Հ. Ջոն Հոնդոն, Անգլիկան եկեղեցու արտաքին հարաբերությանց դիվանի քաջառուդար Հ. Ջոն Սատերթուեյտ, Արտաքին հարաբերությանց դիվանի փոխ-քարտուղար Հ. Մ. Հեյուել, գերաշնորհ Տ. Հարոլդ Բանստոն հայկական պատկ, Քենդինգտոնի հայկական պատկ գերաշնորհ Տ. Հոլուարդ Ռոբերտս, Հույն եկեղեցու հայկական գերաշնորհ Տ. Վիրվոս, գերաշնորհ Տ. Պատկ հայկական Թումայան և Քենտրերիորի Արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզի:

Եկեղեցւո մէջ իրր ամեն ոք իր տեղը գրավեց, Պսակ սրբազան բարձրացաւ սուրբ սեղան խնկարկելու, մինչ գպրաց դասը քառաձայն և երգեհոնի ընկերակցութեամբ կերգեր «Ո՛վ քերական ձաղիկ» շարականը:

«Ողջոյն»-ի պահուն պատարագիչ սրբազան Քենտրերիի արքեպիսկոպոսն սկսելով բոլոր ներկա եկեղեցականներուն անձամբ տվաւ քրիստոնեական խաղաղութեան ողջոյնը: Իրապես հուզիչ էր պահը, երբ քրիստոնեական զանազան եկեղեցիներու ներկայացուցիչներ սուրբ ողջագոյրումով մտսիրո ողջոյն կփոխանակեին իրարու հետ:

յան, ընկերակցութեամբ երգեհոնի, զոր կնվազեր պր. Ք. Բերի:

Այնուհետե գերաշնորհ Տ. Պսակ սրբազանը քարոզեց անգլիկներին:

«Քանզի Ու լուսաւորեցան մանկունք Սուրբ Եկեղեցւոյ»:

Այս բառերով կվերջանա Թարգմանչաց տոնին «Մանկունք» շարականը: Արդարեւ, մեր Թարգմանիչ վարդապետները Թարգմանելով Ս. Գրքը, քրիստոնեական լուստով լուսավորեցին Հայաստանյայց եկեղեցւո զավակները, ու Ս. Մեսրոպ, որուն ծննդյան 1600-ամյակը կտոնենք այսօր, եղաւ մեր



ՋԵՅՄՍ ՎԻՐԼՈՍ ՍՐԲԱԶԱՆ, ՔԵՆՏՐԵՐԻԻ ԱՐՁԱՊԵՍԿՈՊՈՍ ԴՈՒՏ. ՄԱՏԻՍ ՌԵՄՋԻ, ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ ԵՎ ՀԱՅՐ ԶՈՆ ՍԱՅԵՐԹՈՒՆԵԱՏ

«Հայր մեր»-ն առաջ, պատարագիչ սրբազանը հրավիրեց հավատացյալները կանգնած ունկնդրել Սրբոց Թարգմանչաց շարականը՝ «Որք զարդարեցին», զոր Պսակ սրբազան ներդաշնակած էր քառաձայն խմբի համար այս մեծ տոնին առթիւ: Գպրաց դասին համար եկեղեցական երգեցողութեան կատարելու հաղթանակ մը եղաւ թե՛ այս շարականին և թե՛ ամբողջ պատարագի հոգեզմայլ երգեցողութիւնը, զոր ձեռնհասորեն կվարեն պր. Տիրան Ուրու-

թարգմանիչներն մեծագոյնը, ճայ մտքին լուսավորիչը, գրեթե գլուտով և Ս. Գրքի Թարգմանութեամբ քրիստոնեութեան լուստ տարածելով Հայաստան աշխարհի մէջ ու հիմը դնելով ազգային գրականութեան և մշակութի:

Ոչ մեկ տեղ քրիստոնեութիւնը այնքան կարեւոր գեր կատարած է ժողովուրդի մը կյանքին մէջ, որքան Հայաստանի մէջ: Այս իրողութիւնը հասկնալու համար բավական է ակնարկ մը նետել Հայաստանի քարտեզին

վրա, տեսնելու համար Հայաստանի աշխարհագրական դիրքը և բնութեւնը ոչ քրիստոնյա ու թշնամի ժողովուրդներն շրջապատված փոքր ազգի մը վերապրումի դաժնութիւնը հրաշքը:

Քրիստոնեութիւնը առաջին դարուն մուտք գործեց Հայաստան քարոզութեամբ Ս. Քաղեստ և Ս. Բարթողիմէոս առաքյալներուն՝ հաժարաբար պէս տեղ գտաւ թե՛ խոնարհ խաւերէն ներս և թե՛ արքունիքէն մեջ: Ս. Գրիգոր Լուսավորիչ մեծ քարոզիչը արեւի լուսինի բերաւ մինչ այդ դեռնադամբասներու մեջ միայն ապրող նոր կրօնքը: Հայաստան բոլոր ժողովուրդներէն առաջինը եղաւ քրիստոնեութիւնը իրրեւ պետական կրօնք ընդունող, 303 թվականին:

Հայ քրիստոնեութեան դարգացման մեջ առաջնակարգ դեր կատարած են երեք անուններ: Ս. Գրիգոր Լուսավորիչն է հայոց հոգեւեւուն: Ս. Ներսէս Պարթև, որ Ալեքսանդրի մօտ սկզբունքները կյանքի վերածեց հայ ժողովուրդին մեջ, լուսավորիչն է հայ սրտերուն: Սակայն շումեինք գրականութիւն, որովհետև շումեինք գիր: Ս. Մեսրոպի շանքերով, արդարեւ, և գործաւցոյթով օրվան կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթևի, լուսավորիչները հայ մտքին, ունեցանք դիր 404 թվականին և Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնը 433-ին:

Ս. Մեսրոպ ծնաւ 362-ին Տարոնի Հացեկաց գյուղը: Իր կրթութիւնը նախ Մեծն Ներսէսն հաստատված դպրոցներու մեջ ստանալի հետո, զայն կատարեալագործեց եղծսիւս: Բացի հայերէնէն գիտեր ասորերէն, հունարէն և պարսկերէն: Արքունիքի իր պաշտոնը թողնելով, քառասուն տարեկանին կրօնավորեցաւ և ամբողջութեամբ նվիրվեցաւ Ավետարանի քարոզութեան Հայաստանի և զրադի երկիրներուն մեջ: Ս. Մեսրոպի կրօնավորելու այս որոշումը մեծ նշանակութիւն ունեցաւ հայ ժողովուրդի ապահովութեան, ինչպէս նաև իր եկեղեցւոյն անկախութեան տեսակետէն:

Նախքան հայ աշուրներէ գլուտը, հայ եկեղեցիներու մեջ պաշտամունքը կկատարուէր ասորերէն կամ հունարէն լեզուներով, որոնք հաւասարապէս անհասկանալի էին հայ հաւատացւալին: Այս տխուր կացութեան մասամբ դարման տանելու համար էր, որ կազմված էին թարգմանիչներու խումբեր, որոնք տեղւոյն վրա, բերանացի, Ս. Գրքը կթարգմանեին ասորերէնէ և կամ հունարէնէ: Այս անշուշտ անգործնական և անբաւարար միջոց մըն էր հայ ժողովուրդի կրօնական դաստիարակութեան տեսակետէն: Միակ լուծումը, որեմն, հայ գիրբիւրու հնարումն էր, թարգմանութիւնը Ս. Գրքին և ծիսական և ժամապաշտական մատյաններուն: Ըստ այսմ

Ս. Մեսրոպ հայկական աշուրներէ մը կազմելու իր ծրագիրը հայտնեց Ս. Սահակի մէջ արդ օրերու արքային՝ Վառնապուհի, որոնք խոստացան ամեն կերպով աջակցիլ իրեն: Հոս պետք է մատնանշել, թե՛ գիր և գրականութիւն ունենալու անհետաձգելի կարիքը ցույց կուտաւ, թե՛ ժողովուրդ մը աւրգին հասած է մտավոր հասունութեան և իր քայլերը կուղղէ դեպի աղագային զարթոնք:

Բազմաթիւ անհաջող փորձերի հետ, Ս. Մեսրոպ գերազանցորեն հայեցողական պահումը, երկնային տեսիլքով մը, կզտնէ հայ գրերը: Շուտով րացվեցան դպրոցներ նոր աշուրները սորվեցնելու համար: Թարգմանիչացան Ս. Գրքն ու ժամապաշտական գրքերը և եկեղեցիներու մեջ արարողութիւնները սկսան կատարուիլ միմիայն հայերէնով: Իմացական և հոգեւոր այս մեծ շարժումը արժանապէս կոչվեցաւ հայ գրականութեան ամենափայլուն քաջանք՝ Ոսկեդարը:

Հայ գրերու գլուտը և Ս. Գրքի թարգմանութիւնը այն գլխավոր ազդակներն են եղան, որով քրիստոնեութիւնը համակեց հայ ժողովուրդը և այս վերջինն ալ ամբողջութեամբ հանձնվեցաւ անոր: Հայ ժողովուրդը այնքան խորունկ կերպով հետաքրքրվեցաւ և ներշնչվեցաւ քրիստոնեական իդէալով, որ Ավետարանները իր գոյութեան կենսական և անբաժանելի մասը կազմեցին:

Հայ աշուրներէ գլուտը, որուն մեծագույն նպատակն էր Ս. Գրքին թարգմանութիւնը, միևնույն ատեն ծառայեց իրրեւ միութեան կապ ժողովուրդի մը, որ քաժնված էր երկուքի, գտնվելով երկու կայսրութեանց տիրապետութեան տակ: Դ գարու վերջը Հայաստան կզտնվէր Բյուզանդիոնի և Պարսկաստանի տիրապետութեան տակ: Այս րաժանումը քաղաքականէն ավելի գաղափարական էր, այսինքն երկու գաղափարաբանութիւններ և մշակութիւններ իրարու դեմ կպայքարէին Հայաստանի մեջ, և ի գարու ազգային և եկեղեցական այս մեծ շարժումը կոչված էր ազատագրելու հայ միտքը այս երկու հակամարտ աղգեցութիւններէն: Այսուամենայնիւ, իմացական և հոգեւոր այս զարթոնքը կասկածանքով դիտվեցաւ պարսիկներէն և բյուզանդացիներէն հաժարաբար: Առաջինները զայն նկատեցին հայ միտքին ամբողջական և վերջնական հեռացումն ու րաժանումը արեւմտյան գաղափարաբանութեան:

Ազգային և օտար աղբյուրներու համաձայն, Ս. Մեսրոպ, այս սուրբ հանձնարը, իր ստեղծագործ տաղանդը ի սպաս դրաւ նաև դրացի ժողովուրդներու, անոնց ևս տալով իրենց աշուրներէ, ինչպէս վրացիներուն և աղվաններուն: Այս գործով ան կհանգիստ-

ևս քրիստոնեական միջազգային դեմք մը, քրիստոնեություն մեծ դատին իր բերած նպաստովը:

Մենք հայերս հատկապես երախտապարտ ենք Ս. Մեսրոպի, որովհետև հայ գիրը ստեղծելով, մեր հոգիներուն առջև բացավ Ս. Գրքի հոգևոր գանձերը: Ան մեր մեջ անշեշտ պահեց ազգային ոգին և ավելի հաստատուն հիմքեր վրա դրավ Հայաստանյայց եկեղեցվո անկախությունը:

Հայաստան իր աշխարհադրական դիրքով կգտնվի Արեւելքի և Արեւմուտքի քառուղիներուն վրա, Մեր այս գիրքին պատճառով հաճախ նվաճվեցանք և հարձակումներու կոխան դարձանք, բայց արշավանքներու դիմադրելու մեր համառությամբ, ճակատագրական դեր մը կատարեցինք արեւմտյան քրիստոնեության պաշտպանության ի նպաստ: Եվ եթե տակավին կապրինք ու դոյություն ունինք, այդ ամբողջությամբ կպարտինք քրիստոնեության, Ս. Մեսրոպի գյուտին շնորհիվ կրոնքը մեր անհատական, ընկերային և ազգային գոյության անբաժանելի մասը դարձավ: Հավետ երախտապարտ ենք իրեն, որովհետև ան քրիստոնեության լույսով լուսավորեց մեզ՝ Հայաստանյայց եկեղեցվո ղավակներս:

Այս մեծ հայուն ու սուրբին ծննդյան 1600-ամյակին առթիվ, մեր նախածրները անգամ մը ևս դարձնենք դեպի Օշական, Ս. Մեսրոպի գերեզմանը, ուր կհանգչի, և դեպի երկինք, ուր ան պսակված է հավիտենական փառքով:

Քարոզեն վերջ սրբազանը, ողջունելով հանդիսության ներկա բարձրաստիճան հոգևորականները, ըսավ.

«Գերաշնորհ Եղբայր.

Մեծ ուրախությամբ և անխառն հրճմանքով կողջունեմ Ձերդ Գերաշնորհության և Ձեզի ընկերակցող եպիսկոպոսներուն և եկեղեցականներուն և լոնդոնի Հույն Օրթոդոքս եկեղեցվո եպիսկոպոս Ջեյմս Վիրվոս սրբազանի ներկայությունը Ս. Սարգիս եկեղեցվո մեջ, ներկա գտնվելու համար Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին առթիվ մատուցված հանդիսավոր սուրբ պատարագին:

Այս սուրբ եկեղեցիին տված Ձեր այցելությունը, Ձեր իբրև Քենտրբերիի Արքեպիսկոպոս պաշտոնավարության երկրորդ տարին իսկ, կշնչտե այն իրողությունը, որ Դուք քրիստոնեական եկեղեցիներու միության ճշմարիտ շատագույն եք: Փոխադարձաբար, կվստահեցնեմ զՁեզ, որ Հայաստանյայց եկեղեցին ևս իր սրտին շատ մոտիկ կնկատե թուրք քրիստոնեական եկեղեցիներու միության հարցը: Մենք հաճախ

կխնդրենք մեր աղոթքներուն մեջ՝ «Ձի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից»:

Ուրախալի է տեսնել, որ դարուս սկիզբն ի վեր ամենասիրալիր հարաբերություններ գոյություն ունին Անգլիկան և Հայ եկեղեցիներուն միջև: Ոչ մեկ տեղ այս բարեկամությունը այնքան ակնհայտին է, որքան Երուսաղեմի մեջ, ուր անգլիկան եպիսկոպոսը կմասնակցի մեր Ուտնալվալի արարողության, Ավագ հինգշաբթի օրը, Ս. Հակոբյանց Մայր Տաճարին մեջ:

Սակայն, մեր երկու եկեղեցիներուն բարեկամության ամենամեծ արտահայտությունը եղավ անմոռանալի այցելությունը, զոր տվավ Ձեր նախորդին Նորին Ս. Օծություն S. S. Վաղգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, երբ դուրս. Ֆիշեր և Կաթողիկոսը միասին ներկա եղան այս սուրբ եկեղեցվուն մեջ հանդիսավոր սուրբ պատարագի և անգամ մը ևս հուշակեցին մեր երկու եկեղեցիներուն անկեղծ բարեկամությունը:

Հայաստանյայց եկեղեցվո հանդեպ Ձեր ունեցած բարեկամության պետք է վերագրել այն այցելությունը, զոր տվիք Կոստանդնուպոլսո մեր նոր ընտրված պատրիարքին, ուր առաջին անգամ ըլլալով նաև ներկա եղաք Հայաստանյայց եկեղեցվո մեկ արարողության:

Կվերջացնեմ խոսքերս կրկնելով աղոթքը, զոր հայ եկեղեցիներու մեջ կմատուցանենք Քրիստոսի եկեղեցվուն միության համար. «Ձխաղաղութիւն շնորհեալ եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն ի թշնամեաց պատեհաղմէ, և հաստատեալ ի մի հաւատ զԿաթողիկէ եկեղեցի: Զքեզ խոստովանիմք, Տէր և Աստուած, կեցո՛ղմեղ»:

Այնուհետև բեմ հրավիրվեցավ Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, որ տվավ իր պատգամը:

«Եւ եկեսցեն յաբեկից և յաբեկից... և բազմեսցին յաբեկալոսեան Աստուծոյ»:

Այս խոսքերը մեր Տիրոջ մարգարեությունն են:

Քրիստոսի, մեր Տիրոջ սիրովը կողջունեմ լոնդոնի հայ համայնքը և իր սիրելի եպիսկոպոսը:

Անգլիկան եկեղեցին մեծ սեր մը կտածե դեպի Հայաստանյայց եկեղեցին: Մենք կհիանանք անոր հավատարիմ վկայության երկար պատմության վրա, սկսյալ այն օրերն, երբ առաջին առաքյալները Քրիստոսի կրոնքը բերին Հայաստան Ա զարուն, և երբ Ս. Գրիգոր Լուսավորիչ քրիստոնեությունը ամբողջ ազդին կրոնքը բերավ: Աս-

տուծո զոհություն կմատուցանենք հայ սուրբերուն և մարտիրոսներուն, ինչպես նաև այն բյուրավոր մարգոց, կիներուն և փոքրիկներուն համար, որոնք ապրեցան Քրիստոսի սիրովը: Շնորհ և խաղաղութիւն թող ըլլա այսօր Հայ Եկեղեցիին:

Վերջերս Ստամբուլ ըրած այցելութեան ընթացքին մեծապես ուրախ եղա ընդունվելով այդ քաղաքի հայոց պատրիարքին և ողջունելու հայ ժողովուրդը իր գեղեցիկ Մայր Եկեղեցւոյն մէջ, Այսօր հավասարապես երջանիկ եմ Ձեր հետ ներկա գտնվելով սուրբ պատարագի մատուցման, երբ եկած ենք տոնախմբելու հայ Մեծ Սուրբը՝ Ս. Մեսրոպ:

Կհիշեմ, ինչպես Դուք ես, թե ան ի՞նչ եռանդով կրօնքը տարածեց հայ հոգիներու մէջ, ինչպես հնարեց հայ աշուրները և ուրիշներու ընկերակցութեամբ թարգմանեց Ս. Գիրքը և քաջալերեց վանական կյանքը: Թող ան ընդմիշտ աղօթե՛ն իր ժողովուրդին համար, և մենք այս երկրի վրա մեր աղօթքները և փառաբանութիւնները միացնենք իրենին և երկինքի սուրբերուն հետ:

Տեր Հիսուսի մարգարեութիւնն էր, որ շատերը պիտի գան Արեւելքն և Արեւմուտքն և բազմին Աստուծո թագավորութեան մէջ: Այդ մարգարեութիւնը այսօր հրաշալի կերպով իրականացած է քրիստոնեւորութեան տարածումով Արեւելքի և Արեւմուտքի շատ մը երկիրներուն մէջ, որոնք կուգան բազմիչ Քրիստոսի Ս. Եկեղեցւոյն մէջ այս երկրի վրա և բյուրավոր սուրբեր՝ երկնքի մէջ:

Այսուամենայնիւ, մեր սիրելի Տիրոջ սիրտը պետք է մեծ վիշտ զգա տեսնելով, որ բաժանումներ հառաչ եկած են քրիստոնեայ ժողովուրդներու միջև, որոնք իրեն կհավատան և իր անունը կկրեն: Այս բաժանումները մեծ նախատինք են քրիստոնեւորութեան համար, և անոնց դեմ մաքառումի և միութիւն հառաչ բերելու ձեռնարկները՝ զորութիւն և փառք: Այդ բաժանումներն ամենին ցավալին Արեւելքի և Արեւմուտքի բաժանումն է, որուն դարմանումին համար

պատրաստ ենք ջանք յանայնիւ, որովհետև անոնց, այդ դարավոր բաժանումներուն բարձումովն է, որ Աստուծո Եկեղեցին պիտի զորանա ներկա ժամանակներուս և ապագային:


Հայ Եկեղեցին ինքն իր մէջ հիանալի վկայութիւն մըն է միութեան գաղափարին, վասնզի արեւելյան եկեղեցի մը ըլլալով հանդերձ, մոտիկութիւն մը ունի արեւմտայնին, անկէ փոխ առած իր կետեւումը, Ի՞նչ Եկեղեցիս, Անգլիկան Եկեղեցին, Արեւմուտքի պատկանող Եկեղեցի մըն է: Աշխարհագրութիւնն ու պատմութիւնը մեզ արեւմտեան կընեն, և այս մեզմէ կախում չունի: Սակայն մեր Եկեղեցիին մէջ շատ մը կետեւ կան, որ կնանին արեւելյանին ու շատ մեծ է մեր երախտիքը դեպի Արեւելքը: Ուրեմն մեր Տիրոջ կամքն է, որ Հայ և Անգլիկան Եկեղեցիները իրենց փոխադարձ բարեկամութեամբը նվիրվին միութեան համար: Մեր հետապնդած միութիւնը սիրո միութիւնն է, միութիւն մը քրիստոնեական եղբայրութեան բոլոր արարքներով: Բայց նաև միութիւն մըն է դավանաբանական ճշմարտութեան, միութիւն մը, հիմնված հին Հավատո հանգանակներու և Ս. Եկեղեցւոյ վաղեմի ավանդութեանց վրա:

Թող Աստված գորացնէ և օրհնէ Ձեր Եկեղեցին հոս Լոնդոնի, ինչպես նաև Հայաստանի և աշխարհի բոլոր մասերուն մէջ: Մենք պիտի աղօթենք Ձեզ համար և Գուք պիտի աղօթեք անգլիկաններուս համար: Ու թող Տերը Ձեզի, սիրելի՛ ժողովուրդ, և Ձեր սիրելի եպիսկոպոսին տա իր ուրախութիւնը, թող մեզ միացնէ ճշմարիտ հավատքով և սիրո կապերով:

Արարողութեանց ավարտին, Քենտրբերիի Արքեպիսկոպոսը, պատարագիչ գերաշնորհ Տ. Պսակ սրբազանը և ներկա եկեղեցականները, զպրաց դասի առաջնորդութեամբ, վերադարձան եկեղեցատուն, մինչ Ս. Սարգիս եկեղեցւոյ գանգակները ցնծագին կղզւաշէին:

ԲՂԹԱԿԻՑ





Պ Ա Տ Մ Ա-Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏՆՐՑԱՆ

(Փոխտնօրդ Արտատպան քեմի)

ՀԵՄԵՌՈՑ ՊԵՏՄԵԿԵՆ ԵԿԵՆՐԿ ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ



եղ հասած պատմական տեղեկությունների համաձայն, Երեւանի եկեղեցիների շինությունը կապվում է Նահապետ կաթողիկոս Ուռհայեցու (1691—1705) անվան և գործունեության հետ:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին այս մասին վկայում է, որ զորէթէ յերկիրս Երեւանու որքան քարաշէն եկեղեցիք կան՝ ըստ մեծի մասին ի սմանէ (Նահապետ կաթողիկոսէ—Վ. Վ. Տ.) են շինեցեալք¹:

Երևան քաղաքի ամեն մեկ թաղը ունեցել է իր եկեղեցին, Այս երևույթը հատուկ է եղել նաև հայաբնակ շատ կենտրոնների համար:

Հին Երևանի վեց մեծ թաղամասերը ունեցել են իրենց թաղային եկեղեցիները:

Սագումով ֆրանսիացի, բայց դաստիարակությունը և գործունեությունը ունի ի վան ի վանովի Շոպենը (1798—1820), նշանավոր հնագետ և կովկասագետ պատմաբան, որը 1828 թվականի ուսուպարսկական պատերազմից հետո եղել է գորավար Պասկևիչի մոտ պաշտոնյա, որպես ռուսական նահանգա-ի եկամուտների և արքունի դուքսերի կառավարման նախագահ, գրել է Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի մասին ուսման մի ուսումնասիրու-

թյուն՝ ռուսական նահանգի պատմությունը Ռուսական կայսրության հետ միացման ժամանակաշրջանում, որը մասնագետ պատմաբանների կարծիքով կարևոր աղբյուր է ժողովրդի Հայաստանի պատմության համար: Շոպենի այս արժեքավոր աշխատությունը, հրատարակված Պետերբուրգում 1852 թվականին, վկայում է, որ այդ ժամանակ Երևանում կային վեց հայկական եկեղեցիներ՝ 1. Ս. Պողոս-Պետրոս, 2. Ս. Սարգիս, 3. Ս. Հովհաննես, 4. Ս. Կաթողիկե, 5. Ս. Գեղորդ, 6. Ս. Անանիա առաքյալ (Ս. Զորավոր)²:

Մայր Աթոռի միաբան և հայտնի բանասեր Հովհաննես Եպիսկոպոս Շահաթունյանցը նույնպես վկայում է, որ հին Երևանի վեց հայկական թաղամասերում կային 8 եկեղեցիներ հետևյալ հերթականությամբ: 1. Ս. Կաթողիկե, 2. Ս. Պողոս-Պետրոս, 3. Ս. Անանիա առաքյալ (Ս. Զորավոր), 4. Ս. Հովհաննես Մկրտիչ, 5. Ս. Գեորգ (Զորագլուխ Անապատում), 6. Ս. Հակոբ, 7. Ս. Սարգիս, 8. Ս. Սիմեոն (Նորք)³:

² Իվան Ի. Շոպեն, ռուսական նահանգի պատմությունը Ռուսական կայսրության հետ միացման ժամանակաշրջանում, Պետերբուրգ, 1852, էջ 468:

³ Հովհաննես Եպիսկոպոս Շահաթունյանց, «Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ դասուսն Արարատայ», Ս. էջմիածին, 1842, Բ, էջ 141—150:

¹ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, ռուսագր, Վաղարշապատ, 1873, էջ 26:

Շոպենի հաղորդածի և Շահասթունյանցի վկայության միջև հակասություն չկա, որովհետև Շահասթունյանցը Ձորագյուղի երեք փոքր եկեղեցիները հիշատակում է Ս. Սարգսի անվան տակ:

Մայր Աթոռի միաբան Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը, որը հեղինակն է բազմաթիվ պատմական, տեղագրական արժեքավոր աշխատությունների, իր «Գեղարքունիք գրքում հիշատակում է, որ 1862 թվականին Երևանում կային 1234 տուն հայեր, որոնք ունեցել են 7 եկեղեցի. 1. Ս. Սարգիս, 2. Ս. Պողոս-Պետրոս, 3. Ս. Կաթողիկոս, 4. Ս. Հովհաննիս, 5. Ս. Ջորափոր, 6. Ս. Սիմեոն և Ս. Գևորգ Նորքի թաղերի⁴, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը իր հիշատակած Նորքի Ս. Գևորգ եկեղեցու հիմնարկությունը կապում է Գևորգ Գ կաթողիկոսի անվան հետ 1867 թվականին:

Հետագայում Հ. Ղ. Ալիշանն իր «Այրարատ պատմական աշխատություն մեջ (էջ 311—316), ինչպես նաև Հ. Ս. էփրիկյանը իր «Բնաշխարհիկ բառարան»-ում (էջ 663—671), խոսելով հին Երևանի եկեղեցիների մասին, կրկնում են նախորդ երեք աղբյուրները:

Մեր օրերին ևս Երևանի եկեղեցիների մասին դեռ են սովորական բանասերներ և պատմաբաններ: Այսպես, Երվանդ Շահազիզը իր «Հին Երևանը» աշխատության էջերում մանրամասնորեն գրում է հին Երևանի եկեղեցիների մասին⁵, Նորբեր, Երևանում 1959 թվականին Ք. Խ. Հակոբյանը հրատարակեց «Երևանի պատմությունը» աշխատությունը, որտեղ հեղինակը խոսում է նաև Երևանի եկեղեցիների մասին⁶:

Թեև Երևանի եկեղեցիների մեջ ամենահինը Ս. Անանիա առաքյալի եկեղեցին է, հավատացյալների մեջ ծանոթ Ս. Ջորափոր անվան տակ, սակայն նախ պետք է խոսել Ս. Սարգիս եկեղեցու մասին, որովհետև վերջինս եղել է և է Երևանի եկեղեցիների մեջ աթոռանիստը:

Երևանի հնագույն թաղերից մեկն է եղել Ձորագյուղը, որը կոչվում է նաև Խնկելո ձոր, ըստ Զաքարիա սարկավագի վկայության⁷:

Ձորագեղի տեղը այժմյան Երևանի Կոմսոմոլսկ փողոցն է, որտեղ գտնվում է Ս.

Սարգիս եկեղեցին, Հրազդանի ձախ ափին, քաղաքի հյուսիս արևմտյան մասում:

Կաթողիկոսները Ձորագյուղում շինել են Հայրապետանոց, այն պարսպապատել են, ինչպես նաև կառուցել բուրգեր: Այս Հայրապետանոցը ծառայել է որպես իշխան կամ նոր բառով Երևանի Վեհարան, կաթողիկոսների համար, երբ վերջիններս հովվական այցելության էին Երևան և իշխանում Ձորագյուղի իրենց սեփական Հայրապետանոցում, որը գտնվելիս է եղել «ի սարահարթի աստի» Ձորագեղի Անապատ կոչեցեալ տեղին՝ որ է իշխան կաթողիկոպոս Աթոռոյ էջմիածնին⁸:

Ձորագյուղի Հայրապետանոցին կից եղել են նաև միաբանների համար առանձին սենյակներ և վանատուն՝ Անապատ անվան տակ:

Ձորագյուղում եղել են նաև, բացի Ս. Սարգիս եկեղեցուց, ևս երկու մատուռներ՝ Ս. Գևորգ և Ս. Հակոբ:

Ս. Սարգիսը եղել է թաղային ծխական եկեղեցի, կառուցված «ի նահապեա կաթողիկոսէ»⁹, իսկ Ս. Հակոբը եղել է գաղթական վաճառականների եկեղեցին: Այս եկեղեցին գտնվել է «ի հիսիսակողմն» նույնպես ի վերայ նույն քարափան ձորոյն, յորում է եկեղեցի Սրբոյն Տակոբայ հայրապետի, կառուցեալ ի վերայ յորից սեանց որմունք ի հասարակ քարանց և ի հողոյ, իսկ սինքն և կամարքն հանդերձ առաստաղօք ի թրծեալ աղիւսոյ¹⁰:

Ձորագյուղի Ս. Գևորգ փոքրիկ եկեղեցին, Շահասթունյանցի վկայությամբ, սգոր շինեալ յառաջագոյն՝ թերևս յեղիազար կաթողիկոսէ՝ զոր զկին ի մերում ժամանակի Դաւիթ կաթողիկոս էնէկեթեցի նորոգ հիմնարկութեամբ ետ կառուցանել հանդերձ ներքնատամբ ի վիմի անդ¹¹, Այս եկեղեցին հանդիսացել է վանական եկեղեցի, այսինքն կաթողիկոսների և նրանց փոխանորդների եկեղեցի:

Ձորագյուղի իշխան-Հայրապետանոցը կառուցել է Նահապետ Ռուհայեցի կաթողիկոսը 1690-ական թվականներին, իսկ Ս. Սարգիս եկեղեցին՝ ավելի հին մատան վրա:

Հետագային, 1769 թվականից հետո, Հակոբ կաթողիկոսը վերանորոգում է այն, «Երևանաց (Հակոբ Շամախեցի—Վ. Վ. Տ.) և հայրապետանիստս, և պատեաց բարձրաբերձ պարսպօք և բրգօք՝ արպէս այժմ նըս-

⁴ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, «Գեղարքունիք», Վաղարշապատ, 1896, էջ 7:

⁵ Երվանդ Շահազիզ, «Հին Երևանը», Երևան, 1931, էջ 187—218:

⁶ Ք. Խ. Հակոբյան, «Երևանի պատմությունը», Երևան, 1959, էջ 245—252 և 260—262:

⁷ Զատուրտ Սարկավագ, «Պատմագրություն», էջ միածին:

⁸ Շահասթունյանց, հիշված աշխատությունը, էջ 146:

⁹ Նույն տեղում, էջ 148:

¹⁰ Նույն տեղում, էջ 147:

¹¹ Նույն տեղում:

տին հայրապետը ի զնալն իւրեանց յմրե-
ւան»¹²։

Ձորագլուղում, բացի վերոհիշյալ շենքե-
րից, Մայր Աթոռն ունեցել է ընդարձակ այ-
դիներ, բանջարանոց։

Ի՞նչ գրութիւն մեջ և ինչպիսի՞ն է եղել
Ձորագլուղի Անապատը։ Այդ մասին մեզ
տեղեկութիւններ է հաղորդում Քաղիադ-
յանցը իր «Ճանապարհորդութիւն ի Հայաս-
տան»-ում։ «Անապատ Ձորագլուղայ՝ զորն հս
Արամոնս համարիմ կալուած Կաթողիկոսա-
րանին, ի վերայ Մեծի Սնակոյն կառուցեալ,
ապարանք իմն է համարելի, քան զհոգե-
րականդ՝ Անապատ։ Դիրքն ուրա, աւաղանք,
յուրք պարտէղ զառաջինս, և ամենայն վա-
յելութիւն դաշտին ընթերակայ, և դետոյն
խոխոջին, բնակարան երջանկութեան Սույ-
թանի Քուրքաստանի յօրինեն զնա ո՛ւր թէ
այնարհատեաց վանականին»¹³։

Քաղիադյանցն իր գրքում Ձորագլուղի
անապատը նկարագրելուց հետո, մեզ հա-
ղորդում է տեղեկութիւններ նաև Ձորագլու-
ղի Անապատի եկեղեցիների մասին։ «Երեք
եկեղեցիք են ի սմա. մին յատկապէս
անուանեալ Սուրբ Սարգիս՝ պատկանի ժո-
ղովրդեան Ձորագլուղայ և Կարենոյ. երկրորդն
Անապատ՝ մատուռն փոքրիկ, ուր առաջ-
նորդ Երեմանայ՝ այսինքն Կաթողիկոսն Հա-
յոց, կամ յաջորդ նորա կատարեն զառնին
աղօթս իւրեանց, իսկ երրորդն Սուրբ Ցա-
կովբ, որ է ի միւս բուն Անապատին, առ
որով էր ի հնումն աւերակ ինչ ապարանից,
և ի միջի նոցա աշտարակ հզօր, զոր յետոյ
զկնի յաղթութեան ռուսաց կործանեցին և
մաքրեցին զտեղին, յարմարելով զայն պար-
տէզ խաւարտից ի պէտս յաջորդի Երեմա-
նայ»¹⁴։

Ժէ դարի վերջերից մինչև 1835 թվականը
Ս. Սարգիս եկեղեցու մասին մենք չենք
գտնում այլ հիշատակութիւն։

1834 թվականին Երեմանի թեմի փոխա-
նորդ է նշանակվում Շահաթունյանցը, ինչ-
պես այդ մասին հաղորդում է Սեդրակյան
սրբազանը։ «Սինոդի անդամակցութիւն մեջ
մտնելուց հետո, Շահաթունյանը շուտով
նշանակվում է Երեմանի վիճակի առաջնոր-
դական փոխանորդ կամ յաջորդ, ուր մնում
է 18 ամիս, 1834—35 թ. ընթացքում»¹⁵։

Գիտնական և գործունյա առաջնորդական
փոխանորդ Հովհաննէս վարդապետ (եպիս-
կոպոս) Շահաթունյանցը հիմնովին վե-

րանորոգութիւն է ենթարկում նահապետ
կաթողիկոսի կառուցած Ս. Սարգիս եկեղե-
ցին։ «Իսկական եկեղեցի ժողովրդոցն յա-
նուն Սրբոյն Սարգիս զօրավարի՝ շինեալ ի
նահապետ կաթողիկոսէ, այլ յաղագս կարի
հնութեանն և վտանգաւոր գոյոյն աղօթաւո-
րացն ի նմա ժողովրդոց ըստ խաբիսոյ շի-
նուածոյն՝ յամի 1835, ի ժախանակի պաշ-
տաման մերում հոգևոր այցելութեամբ տուաք
քակել զայն ըուրոպիկն ի հիմանց՝ հրամա-
նաւ Վահագա Վաթուղիկոսին, և նոր ի նո-
րոյ ի նոյն տեղուց ընդարձակ ևս հիմնա-
գրութեամբ տուաք կառուցանել զորմունսն՝
որոյ շէնք հանդերձ շորս սեամբք ի տաշա-
ծոյ և ի հասարակ քարանց և ի կրոյ, հասա-
նի գրեալ թէ ի կատար յայս ամ»¹⁶։

Արդարև, Ս. Սարգիս եկեղեցին կառուցվի
է շորս սյունների վրա, գմբեթազարդ է, ունի
մեկ սեղան, երկու ավանդատուն, եկեղեցին
իր մեջ կարող է ընդգրկել 1 000 հավատաց-
յալ։

1836 թվականի «Պոլսեմեհա»-յի համա-
ձայն, Ռուսաստանում Հայ եկեղեցին ունի
վեց թեմ՝ 1. Նախիջևանի և Բնասարախայի,
2. Աստրախանի, 3. Երևանի, 4. Վրաստա-
նի, 5. Ղարաբաղի և 6. Երվանի։ «Պոլսե-
մեհա»-ն սահմանում է յուրաքանչյուր հայ
թեմի ընդարձակութիւնը։ Մեծ թեմերից
մեկն էր Երևանի կամ Արարատյան թեմը,
Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ըստ հին սո-
վորութիւն, համարվում էր Արարատյան թե-
մի առաջնորդը։ Թեմը կառավարվում էր
կաթողիկոսի փոխանորդի ձեռքով, որը նըս-
տում էր Երևանում, Ս. Սարգիս եկեղեցում։

Երևանի թեմին պատկանում էին Երևանի,
Նախիջևանի և Օրդուբադի գավառները։
Նախիջևանի Եւրազայի գավառակի և Ղարսի
Դահանգի եկեղեցիները, Ղարաբաղի վիճա-
կից կտրվում և այս մասը ընկնում է Տաթևի
մետրոպոլիտութիւնը յուր հոտով։ Այս թե-
մի առաջնորդը, վաղեմի սահմանագրու-
թյամբ ինքը Պատրիարքն է, որը կառավա-
րում է թեմը յուր յաջորդների ձեռքով, որոնք
նստում են Երևանի, Նախիջևանի, Եւրա-
զայի, Տաթևի և Ղարսի մեջ»¹⁷։

Կարսի շրջանը, սակայն, Երևանի թեմին
է միանում հետագային, 1877—1878 թվա-
կանների ոռոս-թուրքական պատերազմից
հետո։

Ավելի ուշ, 1860 թվականին, Ս. Սար-
գիս եկեղեցու բակում, Հրազդանի գեղատե-
սիլ ափին, կառուցվում է Արարատյան թեմի

¹² «Ջամբոռ», էջ 33։

¹³ Մ. Քաղիադյանց, «Ճանապարհորդութիւն ի Հայաս-
տան», էջ 125։

¹⁴ Նույն տեղում, էջ 126։

¹⁵ Արիստակէս Եպիսկոպոս Սնգրակյան, «Հովհան-
նէս Եպիսկոպոս Շահաթունյանցի կենսագրութիւն-
ը», Ս. Պետերբուրգ, 1898, էջ 102։

¹⁶ Շահաթունյանց, Բ, էջ 148։

¹⁷ Ներսէս վառդապետ Միլի-Փաւլյան, «Հայոց
եկեղեցական իրավունք», Եւդի, 1903, էջ 690։

առաջնորդարանը, որին և կից կոնսիստորիան (գրագրանոցը)։

Երևանը, որպես Արարատյան թեմի կազմակերպչական կենտրոն, առաջին անգամ հիշատակվում է 1837 թվականին։

Ըստ Շահաթունյանցի վկայության, Ձորագյուղի Անապատում, Կաթողիկոսարանին

խորհրդարան և միան գրագրանոց (դիւանատուն), Այս եկեղեցի փոքրիկ յանուն Սրբոյն Գէորգայ... ուրանօր նստի այժմ արքեպիսկոպոս փոխանորդն թեմակալի»¹⁸,

1837 թվականին բացվում է Երևանի թեմական դպրոցը, որի պատմությունը գրել է Հենն¹⁹,



ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԿԻՆ ՓԱՅՏԱՍ ՍԵՂԱՆԸ

կից, Ս. Գևորգ եկեղեցում կենտրոնացնում են թեմի գրագրանոցը։

Այսպես Ձորագյուղի քաղաքիկ եկեղեցի կաթողիկոսական՝ զոր ի 1837 ամի յարդարեցին տեղի հոգևոր ատենի վիճակին Երևանայ՝ բաժանեալ յերկուս սենեակս՝ մին

Հաջորդ փոխանորդների օրով, կատարվում են մի շարք ոչ արժատական նորոգություններ Ս. Սարգիս եկեղեցում։

¹⁸ Շահաթունյանց, Բ, էջ 147.

¹⁹ Լեռ, «Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի» (1837—1918), Թիֆլիս, 1914, էջ 585.

Եկեղեցու նախկին խորանը և խաչկալը ժամանակին կառուցվել են խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանցի փոխանորդության օրով (1912)։

1954—1955 թվականներին, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի օրով, Ս. Սար-

շատ աշխատանքներ կատարվեցին ինչպես մի շարք եկեղեցիներում, այդ թվում նաև Ս. Սարգիս եկեղեցում։ 1960 թվականին եկեղեցու տանիքի հին թիթեղները փոխվեցին նոր ցինկապատ թիթեղներով։ խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի կողմից



ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵՆԵՂԵՑՈՒ ՆՈՐ ԱՆՂԱՆԸ ՍՐԲԱՅԱԾ ՔԱՐԻՑ

գիս եկեղեցում կատարվում են հիմնական վերանորոգություններ։ Արկամյան մասում կառուցվում է այժմյան վերնատունը 1954 թվականին։

Նորին Ս. Օծոթյուն Տ. Տ. Վազգեն Ա-ի զահակությունից հետո, շինարարական

կառուցված հին խաչկալը և սեղանը փոխարինվեցին նոր ֆիլզիտ սրբատաշ քարից խաչկալով և սեղանով, Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանի նախագծով։

Ս. Սարգիս եկեղեցու ավագ սեղանի ծախսը հոգացին տեր և տիկին Արամ և Սաթև-

նիկ Կարապետյանները (Ռիչմոնդ, ԱՄՆ), որոնց շնորհակալություն ենք հայտնում: Արդեն վերջացել են ավագ սեղանի շինարարական աշխատանքները, որի կառուցողներն են հայր և որդի Պալյան Գևորգն ու նազարը, մասնակցությունը Կիրակոս Յափալյանի:

Ս. Սարգիս եկեղեցու կառուցման պատճառությունը տալուց հետո, անհրաժեշտ ենք համարում տալ նաև Արարատյան թեմի փոխանորդների գավազանագիրքը:

Հստ պատմական տվյալների, երևանի եկեղեցիները նախկինում ղեկավարվել են Ս. Էջմիածնից եկած վարդապետներով՝ եպիսկոպոսներով: Ձեռնարկ Անապատ անուանեալ տեղում (Ձորագյուղ — Վ. Վ. Տ.) նրատեր առանձին վարդապետ ունեւորաքեալ Աթոռոյ Էջմիածնի յաղագս պահպանութեան տան Կաթողիկոսարանին և վերահասութեան ալլոց կալուածոց Աթոռոյն ալլոց և ջրաղացից եղելոց յայս քաղաք երևան. և տունալ էր նմա և երթեկացն Աթոռոյն ի սնունդ վարձք յառաջագոյն աստէն եղեալ կրպակացն, արդինք ջրաղացիցն որ ի ձորամիջի աստ, և յատկացեալ առանձին ալլոյ միոյ, և նուէրքն ըստ հոգեւոր մասի ի ժողովրդոց ալլո թաղի: Այլ ի փոխարկութեան իշխանութեանն նահանգիս ի 1827 ամի վերջացաւ և այն յաշորդութիւն վարդապետաց աստիքս²⁰:

Արեւելյան Հայաստանի Ռուսաստանին միացումով վերացվում է նաև Ձորագյուղի վանահայրությունը և ստեղծվում է Երևանի թեմը: Առաջինը փոխանորդ է նշանակվում Զաքարիա եպիսկոպոս Գյուլասպյանցը:

Ուսումնասիրությունից և մեր ձեռքի տակ կղած աղբյուրներից (Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի պետական Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ № 19—20) պարզվում է, որ 1830 թվականից սկսվել է Երևանի կամ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդների են եղել հետևյալները:

1. Զաքարիա եպիսկոպոս Գյուլասպյանց, թիֆլիսեցի, 1830:

2. Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանց, 1834—1835:

3. Ստեփանոս արքեպիսկոպոս Արզուիսյանց, թիֆլիսեցի, 1836:

4. Ստեփանոս վարդապետ Զոհրապյան, 1857:

5. Գրիգոր եպիսկոպոս Հովսեփյանց, վարդապատցի, 1860:

6. Մովսես եպիսկոպոս Մաղաքյան, գանձակեցի, 1862:

7. Սարգիս վարդապետ Տ. Գասպարյան, 1864:

8. Ստեփանոս եպիսկոպոս Զոհրապյան (վերստին), 1865:

9. Արեւ եպիսկոպոս Մխիթարյանց, վարդապատցի, 1866:

10. Հովհաննես եպիսկոպոս Արշարունի, 1866:

11. Մկրտիչ եպիսկոպոս Բարամյանց, երևանցի, 1866:

12. Սերոբեյ եպիսկոպոս Սմբատյանց, նախիջևանցի, 1868—1870:

14. Մկրտիչ եպիսկոպոս Բարամյանց (վերստին), 1870:

15. Նդիազար արքեպիսկոպոս արնշեցի, 1871:

16. Գևորգ եպիսկոպոս Սուրենյանց (հետագային Գևորգ Ե կաթողիկոս), 1873—1880:

17. Սուքիաս եպիսկոպոս Պարզյանց, 1880—1890:

18. Գրիգոր եպիսկոպոս Գառնակերյանց, վարդապատցի, 1890:

19. Կյուրեղ եպիսկոպոս Սրապյան, կիեցի, 1892—1895:

20. Անանիա եպիսկոպոս Համազասպյան, երևանցի, 1895—1897:

21. Սուքիաս եպիսկոպոս Պարզյանց (վերստին), 1897—1903:

22. Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյան, 1903—1905:

23. Հուսիկ եպիսկոպոս Մովսիսյան, 1906—1910:

24. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան (հետագային Խորեն Ա Կաթողիկոս), 1910—1926:

25. Հակոբ ավագ քահանա Խաչվանքյան, 1926—1929:

26. Արտակ եպիսկոպոս Սմբատյան, 1930—1937:

27. Գևորգ արքեպիսկոպոս Զորբջյան (հետագային Գևորգ Զ Կաթողիկոս), 1937—1945:

28. Փոխանորդությունը վարել է թեմական խորհուրդը, 1945—1957:

29. Վահան վարդապետ Տերյան, 1957 նոյեմբերից:

²⁰ Շահխաթունյանց, Բ, էջ 148:





11. ՔՈՒԱՆՋՅԱՆ

ՀԱՅ ԶԵՌԱԿՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ Վ ԱՍՏԻԿԱՎՈՐԸ*

Ե. ՀԱՅԵՐՆԵՆ ԶԵՌԱԿՐԱՅԻՆ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԽՈՆՋ ՀԱՎԱՔՈՂԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՂԸ

«Յիշեսցի՛ր յաղաւթս ձեր զգրող սորա՝ դժնորունի հայրապետն՝ մեր և ղաշխատակից նորա և զտպողն և զկաղմողս և ղբարգողս կապարեալ տառիցն մատենիս այսորիկս»:

Ահա վերահիշյալ ամանդական դարձած հիշատակագրութեամբ է, որ բացվում է Գարեգին Ա Կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրաց» ստվարածավալ և մեծարժեք գործի Ա հատորը, որի մեջ ամփոփված են ըստ բովանդակութեան Ս դարին վերաբերող, իսկ իբրև սկզբնագիր Թ դարից սկսած մինչև 1250 թվականը գրված և այժմ աշխարհում ցրված հայերեն ձեռագրերում գտնվող գրիչների, ծագողների, կազմողների, մեկենասների, պատվիրատուների, նվիրատուների, ստացողների, փրկողների և ձեռագրերի հետ կապված այլ երախտալուրիների թուղած հիշատակարաններն ու հիշատակագրությունները:


Գեոեա 1898 թվականից Գարեգին Կաթողիկոսը, այն ժամանակ դեռ վարդապետ, էջմիածնի մատենադարանում մեծ ջանասիրութեամբ հավաքում էր ձեռագրերի հիշատակարանները: Երբ 1912 թվականին քանասեր Հ. Ն. Ակիբյանը այցելել էր Գարեգին վարդապետ Հովսեփյանին, որն այն ժամանակ Ս. Հովսեփսմեի վանքի վանա-

հայրն էր, վերջինս ցույց էր տվել մեծագիր թղթերի մի դեղ, «դրված հիշատակարաններով ժամանակագրական կարգով դասավորված» 1925—1928 տարիներին, երբ երկրորդ անգամ Հ. Ն. Ակիբյանը էջմիածնում էր գտնվում, նկատում է, որ Գարեգին եպիսկոպոսը դարձյալ շարունակում էր հիշատակարանների հավաքումը, ունենալով նաև իր օգնական արտագրիչը⁹⁸, Հետագա տարիներին ևս, իր դիտական աշխատանքներին զուգընթաց, անզուգական պրպտողը շարունակեց անընդհատ հավաքել և հարստացնել իր հիշատակարանների ժողովածուն: Սակայն այդ վիթխարի գործի միայն առաջին հատորը նա բախտ ունեցավ տեսնելու, երբ արդեն հիվանդ տառապում էր անկողնում:

Գարեգին Կաթողիկոսից առաջ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը, Հ. Ղևոնդ Ալիշանը, Ղևոնդ վարդապետ Փիրդալեմյանը և ուրիշները մեծ թվով ձեռագրերի հիշատակարաններ են հավաքել և մասամբ հանձնել են տպագրութեան, սակայն հակառակ նրանց շնորհակալ մեծ աշխատանքի, ոչ ոք չի փորձել այդքան վիթխարի շափնչի բարձրացնել իր աշխատանքը և չի փորձել

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1967 թվականի № Թ 9-ից և է-ից:

98 Հ. Ն. Ակիբյան, «Գարեգին Ա Կաթողիկոս (Հովսեփյան)», «Հիշատակարանք ձեռագրաց» (գրախոսություն), «Հանդես» ամսագրում, 1952, էջ 153:



ԳՐԵԳՐԵ Ա ԿԱՔՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԱԳԻՄԱԿԸ

այնպիսի գիտական բարձրության հասցենել այդ գործը, ինչպես այդ արեւ է ռեշատակարանը ձեռագրաց-ի հեղինակը:

Գրեգորի Կաթողիկոսը, սկզբնական շրջանում երբ սկսել էր հավաքել ձեռագրերի հիշատակարանները. երբեք էլ նպատակ չի ունեցել աքն հրատարակելու մատին: Անվանի գիտնականի բազմավաստակ գիտական գործունեության համար ձեռագրերի հիշատակարանների ժողովածուն միշտ էլ հանդիսացել է անսպառ նյութերի մի շտեմարան: Իր ասելով, «Սորանից հիսուն-վաթսուն տարի առաջ դեռ նոր էին սկսում մեր մեջ ձեռագրերի գիտական ցուցակ կազմել, ինչպես Քարամյանի Բեռլինի և Տաշյանի Վիեննայի Միսիթարյանց ձեռագրերի ցուցակներն են, էջմիածնի Կարինյան ցուցակը, թեև, ամենի հին, միայն սուրբուններ ունեւ հիշատակարանների մասին: Ստիպված էինք ձեռագրերի մեջ անձամբ որոնել մեր նյութերը, մի դժվարին գործ, բայց որը օրհնութիւն դարձավ մեզ համար (ընդգծումը մերն է— Ս. Ք.) և առիթ՝ ավելի ընդարձակ լսփով ծանոթանալու ձեռագրական արվեստի մանրամասնությունների և

առանձնահատկությունների հետ՝ ավելի հմտություն ձեռք բերելու նրանց հասկացողության մեջ»:

Հայագիտության համարյա բոլոր բնագավառներին թարմ և առատ նյութեր ընձեռող ձեռագրերի հիշատակարանները իրենից բացի նաև այլ հայագետների և մատչելի դարձնելու նպատակով, նա ի վերջո որոշել էր հանձնել այն տպագրության:

Ինչպես հայտնի է, այս գործը նախապես ավելի սահմանափակ ծավալով հրատարակվելու էր 1934 թվականին Երևանում Մեծնյան ֆոնդի հրատարակչությամբ և ներգրավելու էր ոչ միայն էջմիածնի, այլև Երուսաղեմի, Փոքր Ասիայի զանազան հայաշատ քաղաքներում, ինչպես նաև Բեռլինում տեսած ձեռագրերի հիշատակարանները: Նրանց հրատարակվելու էին ընտրովի ձևով, ելնելով միայն նրանց բնագրական, մանրանկարչական և այլ կարևոր հանգամանքներից: Սակայն այդ գործի հրատարակության հապաղումով, գոհունակությամբ պետք է նշել, որ աքն ավելի ճոխացավ: 1934—1947 թվականներին, երբ հեղինակը նախ իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոսության լիազոր պատվիրակ շրջագայում էր բազմաթիվ հայաշատ գաղթավայրեր, և ապա, իրեն Ամերիկահայ թեմի առաջնորդ, և ի վերջո իր կաթողիկոսության շրջանին իր կատարած նորանոր պրպտումներով մեծապես հարստացավ նաև հիշատակարանների ժողովածուն, Ըստ Սիմոն Սիմոնյանի տվյալների, ռեշատակարանը ձեռագրաց-ի միայն առաջին հատորը, որն ունեւ 1934 թվականին 248 հիշատակարաններ գրված մինչև 1250 թվականը, հասավ 458 + 14 հիշատակարանների, այսպիսով գրեթե կրկնապատկելով իր նախորդ թիվը:

Հայագիտության համար անգնահատելի մեծ նպաստ էր հայերեն ձեռագրերի հիշատակարանների հավաքման և գիտական սկզբունքների հատուկ եղող ձևով հրատարակելու գործը: Հայ ձեռագրական մշակույթի անձնվեր երախտավորների կողմից մեզ ավանդ թողնված հիշատակարանները կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի ընդհանուր պատմության դեռևս սպիտակ մնացած կետերը լրացնելու գործում, իրեն դեպքերին ժամանակակից ու շատ անգամ էլ ականատես անձնավորություններ, հիշատակագրողները կարող են նորանոր ճշտումներ մտցնել Հայաստանի, հայ գաղ-

98 Գրեգորի Ա Կաթողիկոս, «Էշատակարանը ձեռագրաց», հատոր Ա, Ե դարից մինչև 1250 թ., 48 նմանահատկություններով, Անթիլիաս, 1951, է. Ժ Գ—ԺԴ:

թավայրերի, ինչպես նաև հարեան երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պատմության մեջ:

Գարեգին Կաթողիկոսը այս կապակցությամբ գրել է. «Հիշատակարաններով պիտի պարզվին հայ մանրանկարչության պատմությունը, մեր ներքին, մտավոր և մշակութային կյանքի այլևայլ երևույթները, նույնիսկ տնտեսական, փոխարժեքների, հարկապահանջության, վաճառականության և այլ բաղադրիչի խնդիրները: Մեր պատմական մատենագրության կողքին հիշատակարանների ժողովածուները հայ պատմության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներ են, ինչպես և վիժական արձանագրությունները»¹⁰⁰:

Անկասկած շատ մեծ պետք է եղած լինե՞ր անկույն գիտնականի ուրախությունը ի տես այն բանի, որ հայրենի Գիտությունների ակադեմիան ևս մեծ ուշադրություն էր դարձնում դեպի հայերեն ձեռագիր հիշատակարանների մեծ արժեքը, և այդ շնորհակալ գործը մեծ ջանասիրությամբ սկսել էր գլուխ հանել Մեսրոպ Մատուցի անվան Մատենադարանի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Լ. Ս. Խաչիկյանը, որի կազմած ԺԳ և ԺԴ դարերի հայերեն ձեռագիր հիշատակարանների շորս հատորներից երեքը արդեն լույս են տեսել:


«Հիշատակարանք ձեռագրաց»-ը կազմելու ժամանակ հաղթահարվել են բազմաթիվ դժվարություններ: Ոչ միայն հնարավորության ներած չափով ուսումնասիրվել են աշխարհում ցրված հայերեն ձեռագրերը, այլև նկատի են առնվել ձեռագրերի տպագիր և անտիպ ցուցակները, հիշատակարաններ պարունակող մենագրությունները, ինչպես նաև հանդեսներում և թերթերում ցրվածները և այլն:

Գարեգին Ա Կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրաց» գործի ամենամեծ արժանիքը ոչ միայն հայերեն ձեռագիր հիշատակարանների բոլոր տարբերակների հավաքման և դասավորման տիտանական աշխատանքն է, այլև հիմնականում յուրաքանչյուր ձեռագրին բնակրակցող հարուստ և մեծարժեք ծանոթագրությունների կուտակման գործն է: Գրքում գրեթե յուրաքանչյուր հիշատակարանի կողքին կարելի է գտնել հեղինակի կողմից կատարված մեծ թվով նշտումների, լրացուցիչ մատենագրական տեղեկությունների, այլ սկզբնաղբյուրների մեջ կատարված համեմատությունների, բուն ձեռագրի հնագրական, մանրանկարչական, կազմագիտական և այլ ուղագրով տվյալների վերաբերյալ

թանկագին և միանգամայն ուսանելի և օգտակար ցուցմունքների և դիտողությունների: Մեծանուն գիտնականը հիշյալ ծանոթագրությունների մեջ կուտակել է իր վաթսուամյա խստապահանջ և մանրազնին ուսումնասիրությունների հանրագումարը, նրա այդ թանկարժեք ցուցմունքները առատ նյութ կարող են մատակարարել բանասերին և մեծ չափով հեշտացնել ձեռագրագիտական հետազա աշխատանքները: Տեղի սղության պատճառով հնարավոր չէ գեթ մի քանի օրինակներով ցույց տալ և ապացուցել նաև այս աշխատության ունեցած մեծ արժանիքները, սակայն պետք է կարծել, որ այս թուղթիկ ակնարկն իսկ լիովին իրավունք է տալիս ասելու, որ Գարեգին Կաթողիկոսի «Հիշատակարանք ձեռագրաց»-ը ևս հանդիսանում է գիտական մեծարժեք աշխատություն:

Երբ խոսվում է Գարեգին Կաթողիկոսի այս գործի մեծ արժանիքների մասին, անկարելի է մոռանալ նաև վեհ գիտական քարտուղար, բանասեր և հրապարակագիր Սիմոն Միմոնյանի ցուցաբերած կարևոր օժանդակությունը այս գործի ամբողջացման և տպագրման համար:

Գարեգին Կաթողիկոսը իր վախճանումից ամիսներ առաջ, երբ դարձյալ հիվանդ պառկած էր անկողնում, դեկտեմբերի 17-ին, որն իր ծննդյան օրն էր, նրա մի խումբ սիրելի-



«Հիշատակարանք ձեռագրաց»-ի Ա շարքի ԳԵՂՈՍԹԵՐԹԸ

¹⁰⁰ Գարեգին Ա. Կաթողիկոս, «Հիշատակարանք ձեռագրաց», Ա, էջ ԺԶ:

ները բերեցին «Հիշատակարանը» ձեռագրացք-ի Ա հատորը, նա մի շարք օրեր նախապես հատկացրել էր իր այս գործի բնթերցման և սրբագրման աշխատանքներին: Սակայն հոր նա իր աշքերով կարողացավ տեսնել իր այդ գործի տպագրության ավարտը, իր ուրախությունը այլևս չափ ու սահման չունեի, աչքերը արցունքներով էին լցված: Իր կյանքում այդ խոշոր իրադարձությունը կարծես հոգեպես կազդուրել և նոր կյանք էր տվել իրեն:

— Այս գիրքը մի մեծ շարժում պիտի առաջացնի, — հաճախ կրկնում էր նա:

Իրեն խնամող հիվանդապահուհու թողած օրագրության մեջ գրված է հետևյալը. «Վեհ գրասենյակին թե վերմակին վրա կգրկեր գիրքը և կգար անբացատրելի երանություն մը, կգրկեր զայն, կարծեք իր զավակն ըլլար այդ գործը»:

Է՛ր հիվանդ ծանր օրերուն իր գիրքը կրեին ու նա կգրկեր ու կքննարկէր կարծեք բժշկական նոր դեղ մը գտած էինք... մանավանդ կրանար իր «Հիշատակարանը» ձեռագրացք այս գործի 455—456 էջերը, ուր կար ներսես Շնորհալիի Ավետարանին սքանչելի մեկ նկարը, որ կարծեք կրուծեր զինք»¹⁰¹:

Վեհի կյանքի վերջին օրերին տրված հոգեկան այս մեծ մխիթարությունը գործում կարևոր րաժին ունեին գործի մեկնեան «Տա-

տուրյան րնտանիքն ու մանավանդ նրա աչակից Սիմոն Սիմոնյանը և բոլոր նրանք. ուղեք արագացրին այդ գործի տպագրությունը: Եվ ինչպե՞ս իր կյանքի վերջալույսին անսահման ուրախություն չգար Վեհը. էրբ այս գործի տպագրությամբ հայ րանասիրության մի խոշոր ծառայություն էլ էր մատուցում:

Անվանի րանասեր Հ. Ն. Ակիևյանը «Հիշատակարանը» ձեռագրացք-ի Ա հատորի լույս րնծայման առթիվ իր գոհունակությունն էր հայտնում և մաղթում էր աննկուն հեղինակին տեսնելու նաև այդ գործի մյուս հատորների հրատարակումը: Ըստ Հ. Ն. Ակիևյանի, այս գործը «պիտի մնա ամենալի շտեմարան մը, ուսկից պիտի կրն հայագիտությունը ամենագոյ ատաղծ, կառուցանելու համար ի պարծանս հայ մշակույթին փառահեղ ապարանքներ»¹⁰²:

Նույն գործի երկրորդ հատորի տպագրությունը սկսել էր դեռևս 1951 թվականին և ընդգրկելու էր 1251—1400 թվականներին գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները, սակայն մեծանուն հեղինակի մահով դադարեցվեց նաև այս գործի տպագրությունը, ու մինչ այժմ էլ այն լույս չտեսավ: Գարեգին Կաթողիկոսի «Հիշատակարանը» ձեռագրացք գործի Ա հատորը և նրա անտիպ մնացած շուրջ շորս հատորները մեծ ավանդ են հանգիստանում հայագիտության համար:

9. ԵՆԴ ՊԵՏԻ ԼԻՆԵՆ ԻՄ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Անսահմանորեն խստապահանք և խղճամիտ էր Գարեգին Ա Կաթողիկոսը իր ուսումնասիրությունների նկատմամբ:

Քանասեր Հ. Ն. Ակիևյանը, որ էլմիածնի մատենադարանում երկար տարիներ շատ մոտիկից հաղորդակից էր եղել նրա աշխատանքներին, հիացմունքով էր խոսում նրա ունեցած գիտական րարեխղճության մասին. «ոչինչ արագ իր գրչին տակ, րանասերի խղճամտությամբ կկանգնի ժամերով մեծ-մի հուշարձանի առաջ, կգնեն, կհետազոտեն ամենայն ինչ լուր մանրամասնություններով մեջ, և այնպես կառնե գրի. և եթե մնաց տակավին դժգոհ մեկ կամ մյուս կետի մեջ, կդիմե մյուս անգամ նույն տեղը՝ լրացնելու թերին, փարատելու տարակույսը: Նա չի գիտեր հոգելի. անխոնջ և աննկուն նվիրված է գործին»¹⁰³:

Եվ ահա այսպիսի մանրազնին պրպտումներով են անցնում նրա աշխատանքային

ամիսներն ու տարիները: Նոր գյուտեր ու հիացական րացականություններ... և դարձյալ անխոնջ աշխատանքի տարիներ...

Գարձյալ անվանի րանասեր Հ. Ն. Ակիևյանն է, որ կտրելով աշխատանքային լուծությունը, թախանձագին խնդրում է նրանից վերջապես տպագրության հանձնելու իր վաստակները:

— Սրբազան, րավական է, ինչ հավաքած եք մինչև ցայժմ. դասավորեցեք, վերջին գույեր տվեք և հանեցեք լույս աշխարհ հայ գեղարվեստի անհամեմատ գանձերդ. ինչո՞ւ մնան անոնք Ձեր գործոներու մեջ, անմատչելի գիտություն...: Սրբազան, լավագույնը լավին թշնամին է»¹⁰⁴:

Սակայն անվանի գիտնականը շարունակում է իր աշխատանքները, անհադորեն մաղում է մի շարք մատենադարանների ձեռագիր դանձերի ողջ էությունը, ամբողջ հոգով նվիրվում իր գործերին, Հազարավոր նորություններ և թանկարժեք նշումներ...

¹⁰¹ «Հասկ», 1952, էջ 418.

¹⁰² Հ. Ն. Ակիևյան, «Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Հուլիս», «Տաթև», տարեգիրք գրականության և արվեստի, Հայկպ, 1930, էջ 380.

¹⁰³ Հ. Ն. Ակիևյան, նույն տեղում, էջ 157.

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 379.

Ինչպիսի մեծ գիտական ժառանգություն է թողել նա անտիպ վիճակում:

Ո՛չ, միայն Վեհի արտակարգ խստապահանջությունն ու բարեխղճությունը չեն պատճառը, որ նրա գործերի հրատարակումը այդքան ձգձգվեց, այլև տպագրության համար անհրաժեշտ եզոզ նյութական միջոցների պակասը:

Դեռևս 1947 թվականի սեպտեմբերի 10-ին Իր դրած նամակի հետ գրության մասում Գարեգին Ա Կաթողիկոսը 1948—1952 տարիների համար պատրաստել էր Իր գործերի տպագրության համար հոյակապ մի ծառիկը, որն իրականանալու դեպքում նոր նվաճում էր ապրելու Իր հետ նաև հայ մշակույթի: Մական այդ ծրագիրը, ավաղ, կազմվել էր այն ժամանակ, երբ վաստակավոր հեղինակը 80 տարեկանը անց էր արդեն, այնինչ այս ծրագրի իրականացումը անհավատալի կարող էր լինել նույնիսկ ծաղկուն տարիքի պատկանող գիտնականների մի ամբողջ հույլի համար:

Ահա այդ սքանչելի ծրագիրը, որից որքան մեզ հայտնի է, միայն ձեռագրաց հիշատակարանների Ա հատորը իրականացվեց:

Ե. Գ. Չտպագրված գործերի տպագրության համար որոշված է հետևյալ ժամանակացույցը, եթե անակնկալ դժվարություններ չծագին.

1948 տարին.

ա. [Զեռագրաց] հիշատակարանների Ա հատորը.

բ. Իրզնկայի դպրոցի երկու գեղարվեստական գործեր.

գ. Օրբելյանց նորավանքը հայ արվեստի և մշակույթի պատմության մեջ:

1948—1949 տարին.

ա. Հիշատակարանների Բ հատորը.

բ. Գրչության արվեստը (Ա հատոր).

գ. Ժէ դարի վերածնությունը և Աստվածաշունչների պատկերազրույթությունը:

1949—1950 տարին.

ա. Հիշատակարանների Գ հատորը.

բ. Մանրանկարչության Ա հատորը:

1950—1951 տարին.

ա. Մանրանկարչության Կիրիկյան շրջանը (ԺԲ—ԺԳ դարեր):

1951—1952 տարին.

ա. Մանրանկարչությունը ԺԳ դարում և հետո...¹⁰⁵,

Այս խեղապես խիզախ կոչվելիք ծրագիրը միայն Գարեգին Կաթողիկոսի նման աննկուն դիտնական կարող էր կազմել: Նրա կյանքը լուկ նվիրում էր եզել և Իր մտքի ցւլքերը իրեն յույս բաշխել էր բոլորին: Նա 76 տա-



ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՄԱՐՆԵՆ ԷԶԵՐԸ
«ՀԻՇԱՏԱԿՐԱՆՔ ՁԵՆԱԳՐԱՅ»-ԻՅ

րեկան էր, երբ ընտրվեց Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Պատմում են, որ նա մեծ ոգևորությամբ և անսահման նվիրումով էր ստանձնել այդ ծանր յուծը, մի տարիքում, երբ մարդը միայն հանգստի մասին կարող էր մտածել:

«Յոթանասուն և վեց տարեկան եմ,— ասում էր նորընտիր Կաթողիկոսը,— ուրիշ ծերերի նման դեպի հոտ չեմ նայում և չեմ մտածում իմ կատարած գործերի մասին, այլ մտածում եմ ապագայի անելիքների մասին...»: Եվ իսկապես այս նրա նշանաբանն էր եղել ամբողջ կյանքի ընթացքում: Երբ նա 80 տարեկանից հետո կազմում էր Իր գիտական գործերի տպագրության վերահիշյալ ծրագիրը, այդ նույն լավատեսության և չեքմ հայրենասիրության անմար կայծն էր, որ առաջնորդում էր Իրեն և բողավառում Իր սիրան ու հոգին:

«Ազգի գոյության հիմը նրա անցյալի գիտակցությունն է, նրա մշակույթի, Պետր է ճանաչենք այդ մշակույթի իսկական արժեքը և պահենք դայն»: Այս էր նրա վսեմ պատգամը: Ահա այս ոգին էր, որ կյանքի էր կոչում նրան և նախապատրաստում գիտական նոր սխրանքների:

Գարեգին Կաթողիկոսը 1948 թվականին Իր դրած մի հողվածում դարձյալ Իր ծրագրի մասին էր խոսում, հույս հայտնելով,

105 2. Օշական, «Արևելահայ բանասիրությունը և էյմիաթին. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան», էջ 76.

որ շուտով իրար ետևից տպագրության կհանձնվեն Իր գործերից «Հիշատակարանը ձեռագրաց», «Երգչկայի մանրանկարչական դպրոց» 130-ից ավելի գունազարդ և սև պատկերներով, «Օրբելյանների նորավանքը և նորա դերը հայ արվեստի և մշակութային պատմության մեջ», հարուստ պատկերներով և սև մանրանկարչական, ճարտարապետական և քանդակագործական նյութերի պատկերներով, Հեղինակը հիշյալ վերջին աշխատության մասին հույս է հայտնում, որ նույն տարվա վերջերին կկարողանա մամուլին հանձնել այն, ինչպես նաև Իր «Գրչության արվեստը հայոց մեջ» գործի պատրաստ իննելու և միայն փոքր լրացումների անհրաժեշտությունը մնացած իննելու մասին¹⁰⁶:

Սակայն ավա՜ղ, Գարեգին Կաթողիկոսը զարնվեց Իր սրտից և նրանից հետո այլևս չկարողացավ նստել Իր այնքան սիրելի գրասեղանի մոտ և ավարտին հասցնել Իր կազմած մեծ ծրագիրը, որ ծրագրին էր նաև հայ մշակույթի և հայ արվեստի զարգացման նա լքր կարողանում հաշտվել հիվանդի անկողնի և փակ սենյակի հետ, ցանկանում էր վեր կենալ և սկսել աշխատել ու որոնել... Զե՛ որ Իր բովանդակ կյանքը անվերջանալի որոնումների և հայ մշակույթի անգին գոհարները լույս աշխարհ բերելու մի հսկա խիզախում էր հանդիսացել...

Հատկապես նա շատ էր մտահոգվում Իր անտիպ գործերով և հաճախ կրկնում էր.

— Ի՛նչ հարստություն կա նրանց մեջ... Իր հիվանդության ծանր պահերին շատ էր հուզվում և ասում.

— Ախր, ի՛նչպես չհուզվեմ, Ես գործ ունեմ կատարելիք հայ ժողովրդի և Եկեղեցու համար: Ի՛նչ պիտի լինեն Իմ ձեռագիրները...:

Ահա՛ մեծանուն գիտնականի վերջին մտահոգությունը... Ինք, որ ավելի քան վաթսույն տարի Իր կյանքն էր նվիրաբերել հայ մշակույթի զոհարները հայտնաբերելուն, արժեքավորելուն և նրանցով մեր ժողովրդի անունը բարձրացնելուն և նրա ուժով աստանդական պանդուխտ հայորդիների ազգային ինքնագիտակցությունը պահպանելուն, այժմ հիվանդ ընկած մահիճում, նախազգալով Իր կյանքի վերջալույսը, Իր թողած մեծ ժառանգության ապագան էր ստանշում Իր մշտավառ հոգին ու ողջ էությունը:

Եվ իսկապես Իր անտիպների ճակատագրի հարցն էր, որ անհուն վիշտ էր պատճառում մեծ վաստակավորին: Ի՛նչ-

քան նորաձուր լրացումներ, նոր գյուտեր և եզրակացություններ դեռ կարող էր անել նա Իր գործերը ավարտելիս...

Գարեգին Կաթողիկոսին մոտ կանգնած մարդկանց կարծիքով, նրա գիտական ամենամեծ նվաճումն զործերը հանդիսանում են Իր անտիպ աշխատությունները: Այդ շատ պարզ է ու հասկանալի, քանի որ նրա անտիպ գործերի անունների թվարկումն իսկ կարող է վկայել այդ մասին: Զե՛ որ նրա անտիպները հանդիսանում են Իր վաթսույնամյա գիտական կյանքի կոթողական արգասիքները: Օր-օրի Իր հայտնաբերած փաստական անգին քարերով, միացած Իր կուռ դատողության շաղախով, բարձրացրել էր Իր դիտության բերդերը՝ Իր հոյակապ աշխատությունները:

Ահա ոչ լրիվ ցանկը Գարեգին Կաթողիկոսի անտիպ վաստակի.

«Հիշատակարանը ձեռագրաց»-ի Բ հատորը, որ մամուլի տակ էր դնում հեղինակի կենդանության օրոք և ցարդ լույս չտեսավ: Անտիպ են մնում առնվազն երեք հատորներ:

«Հայ գրչության արվեստը հին հայոց մեջ», որը պետք ունի լրացման և խմբագրման, «Հիշատակարանը ձեռագրաց»-ի լիակատար օգտագործմամբ:

«Բարտեզ հայ մանրանկարչության», որը համարվում է հեղինակի պոստ-գործերը, բաղկացած է մանրանկարների 120 գունավոր և 2500—3000 սև նմանահանությունների, ներածականի մասն է մնում գրել:

«Երգչկայի մանրանկարչական դպրոցը», որը 1952 թվականին մամուլի տակ էր:

«Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», հավանաբար երեք պրակներ (2—Ը):

Հայ փիմական արձանագրությունների ժողովածու (դասավորելի և խմբագրելի):

Գրիգոր Մագիստրոսի թղթերը:

«Հատակոտորք Որոգիների, Հիպպոլիտի, Յովհան Ոսկերեքների և այլոց հարանց»:

Բառասիրական հոգվածներ:

Քարոզներ և գրական ու հրապարակագրական գործեր:

Օրբելյան իշխանության պատմություն (անավարտ) և այլ գործեր¹⁰⁷:

1952 թվականի դեկտեմբերից մինչև 1953 թվականի փետրվարը, այսինքն երեք ամիսների ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսի թողած գիտական ժառանգությունը քննող մարմինը 12 խմբավորումների բաժանեց այն: Այդ ժառանգությունից ամենից ավելի հրատարակելի համարվեցին, հակառակ մեծ

¹⁰⁶ Գարեգին Կաթողիկոս, «Ստեղծված հոգևոր կրթիկան», «Հասկ», 1948, էջ 119:

¹⁰⁷ Սիմեո Սիմեոյան, «Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակը», «Հասկ», 1952, էջ 253:

մասամբ ոչ բուրգովին ավարտված լինելուն, ձեռագրերի հիշատակարանների ժողովածուները, «Քարտեզ հայ մանրանկարչության», «Երգչկայի մանրանկարչական զբաղումը», «Գրչության արվեստը հին հայոց մեջ», բնագիրները (Որոգիներսի և Հիպպոլիտի հատակապատկերները և Գրիգոր Մագիստրոսի նամակները) և լուս Ավետարանների աշխարհաբար թարգմանությունը, նույնպես նկատվեց նաև, որ անտիպ մի յարք նյութերում կան անավարտ գործեր, որոնց հրատարակման համար անհրաժեշտ են յուրացրել աշխատանքներ, Գտնվում են նաև բազմահազար կարևոր դիտողություններ ու նշումներ, արված թզթի մանր կտորների վրա, և որոնք պետք է մտնեն անտիպ գործերի համապատասխան տեղերում:

Գիտենք, որ Իր նշանավոր գործերից մի քանիսը մասամբ անավարտ են մնացել: Սակայն, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում կարելի է գտնել գործը ամբողջացնող, դասավորող և տպագրության հրավոր ձեռնհաս և բարեխիղճ գիտնականներ: Օրինակ, «Քարտեզ հայ մանրանկարչության» գործի մասին անհրաժեշտ ենք դիտում վերահիշման կարգով ասել, որ դեռ տաս տարի առաջ, մեծանուն հեղինակի մահվան օրերին, հայ մանրանկարչության բեղուն մասնագետ օրիորդ Սիրարփի Տեր-Ներսեսյանը կոչ էր ուղղել հրապարակով այդ գործը տպագրել տալու մասին, նույն ժամանակ խոստանալով նաև, որ ինքը միշտ պատրաստ է անհրաժեշտ աջակցությունը րեբելու, ինչպես նկարները տպագրության համար դասավորելու, նրանց մասին հակիրճ տեղեկություններ տալու և ի հարկին տպագրության հսկելու համար¹⁰⁸, Ինչ վերաբերում է ՇՀայ գրչության արվեստը հին հայոց մեջ՝ Վեհի մյուս կոթողական գործին, Սիմոն Սիմոնյանի ասելով, թեև տարիների ընթացքում հեղինակի կողմից այդ ուղղությամբ հավաքված նորանոր նյութերը կարելի չեղավ նրա կողմից մտցնել գործի մեջ, սակայն աշխատության լավածանոթ մեկը կարող է վերջնական տեսք տալ գործին¹⁰⁹,

Վեհի մյուս անտիպների մասին կարելի է ասել, որ հնարավոր է գտնել գիտնականի պայծառ հիշատակը հարգող և հայ մշակույթի զարգացմանը տեղացող մտավորականներ, որոնք անձնվիրաբար օրիորդ Սի-

րարփի Տեր-Ներսեսյանի և Սիմոն Սիմոնյանի նման նվիրվել ցանկանան հիշյալ գործերի տպագրության:

Գարեգին Ա Կաթողիկոսի մահվան տասնամյակի այս օրերին անհուն ցավ է մեղ համար, որ նրա թողած հայագիտական վերահիշյալ անտիպ գոհարներից և ոչ մեկը չարժանացավ ցարդ տպագրության:

Անցնող տասը տարիների ընթացքում, բացի «Հասկա-ի 1954 թվականի և «Հասկա հայագիտական տարեգրքի 1957 թվականի էջերում լույս տեսած նրա մի քանի հոդվածներից, որքան մեղ հայտնի է, Վեհի ոչ մի գործը չհրատարակվեց, իսկ մամուլի տակ եղած գործերն էլ լույս չտեսան: Ժամանակն է, որ հայագիտության մեր հովանավորներն ու մշակները, ի փառս հայ մշակույթի, նյութական և բարոյական օգնությամբ սատարեն և մթնոլորտից լույսին հանձնեն մեծ երախտավորի կողմից մոռացության փոշիների կույտներից հայտնաբերված և հայ մտքի ու հայ արվեստի հրաշալիքների փառաբանությանը նվիրված մեծագույն գործերը:

Մի անգամ ես այսօր լսեմք Գարեգին Կաթողիկոսի ամենավերջին ու մեծ կտակ:

«Ձեռագիրներս հոգ տարեմ, փրկեցեմ զանոնք կորուստի: Վաքսուն տաբի աշխատել եմ նրանց վրա...»¹¹⁰,

Այսօր արդեն տաս տարի է անցնում անվանի գիտնականի, մեծ հայրենասերի, Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանի մահից: Գիտակցում ենք, որ նրա մասին իբրև հայ ձեռագրագիտության մեծ վաստակավորի գրված սույն կցկտուր տողերը չէ, որ պիտի ոգեկոչեն հիշատակը նրա մեծության, նրա բազմաբովանդակ կյանքը արժանի է հանգամանալից ուսումնասիրության և առանձին մենագրությունների նյութ կարող է կազմել, սակայն ամենից ավելի հրատապ գործը մնում է նրա տիտանական վաստակի հրատարակումը: Այդ է եղել մեծանուն հեղինակի մեղ թողած վերջին կտակը: Չմոռանանք այդ վսեմ պարտականությունը:

Եստ մեծ է Գարեգին Ա Կաթողիկոսի անձնավորությունը, սակայն նրա անտիպների հրատարակումով է, որ միայն պիտի կարողանանք անմահացնել նրա անկորնչելի հիշատակը, միևնույն ժամանակ հավերժացնելով նաև հայ մշակույթն ու հայ արվեստը, և որոնց պանծացման համար նա նվիրեց Իր մեծ կյանքը:

«Ի՛նչ պիտի լինեն Իմ ձեռագիրները...»:

¹⁰⁸ «Հասկա», 1952, էջ 286.

¹⁰⁹ «Հասկա», 1953, էջ 253.

¹¹⁰ Գեորգի Եղիսկոպոս, հիշված աշխատությունը:



ԷԶԵՐ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԻՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ազմադարյան անգլյալ ունի եգիպտահայ գաղութը՝

Դեռևս ուրարտյան ժամանակներից մեզ հասած քաղմաթիվ հուշարձանները վկայում են Հին Արևելքի տարբեր երկրների փոխադարձ կապերի մասին։ Կարմիր բլուրից հայտնաբերվել են հախճապակուց պատրաստված եգիպտական Սոխմետ դիցուհու արձանիկը, հիերոգլիֆագիր եգիպտական համայնիկներ, Ասորեստանում պատրաստված կնիքներ, ուլունքներ, մետաղյա իրեր, էգեյան ծովի շրջանից՝ ոսկի օղբեր, սկյութական ձիասարքի մասեր, բրոնզե նետասլաքներ և այլն։ Ուրարտական մետաղյա իրեր հայտնաբերվել են Ասորեստանում, Միջագետքում, Իրանում, Փոքր Ասիայի տարբեր վայրերում, էգեյան ծովի շրջանում և այլ երկրներում։

Կան գրավոր վկայություններ նաև այդ երկրների հետ հայերի հետագա դարերի առևտրա-տնտեսական կապերի մասին։ Գովերգելով Տյուրոս քաղաքի առավելությունները, Եղեկիել մարգարեն (592—570 թ. թ. մ. թ. ա.) վկայում է. «Եւ տանէ Թորգոմայ ձիովք և հծծելովք և ջորովք լցին զվաճառաքո՛ւ։ Հայտնի են նաև Հերոդոտոսի և Ստրաբոնի հաղորդումները Մերձավոր Արևելքի տարբեր երկրների հետ հայերի պահպանած առևտրա-տնտեսական կապերի մասին, որոնք նպաստում էին հայկական գաղութների հաստատմանը, Հռոմայեցի պատմիչ Սալլիստոսը, որ 46 թվականին (մ. թ. ա.) Հյուսիսային Աֆրիկայի կառավարիչ Նշանակված էր, վկայում է, որ Պտղոմեական պետության ժամանակաշրջանում (325—330 թ. թ. մ. թ. ա.) հայերը սմնայուն տարր դարձած էին Եգիպտոսում՝

Գ դարում, հայ առաջին քրիստոնյա թագավոր Տրդատը, հետևելով Հեղինե կայսրուհու օրինակին, վանքեր կառուցեց Երուսա-

ղեմում։ Վանական կյանքով ապրելու սովորությունը սկիզբ էր առել Եգիպտոսից և անցել Ասորիք, Հայաստան և այլ երկրներ։ Է դարի վերջերին կամ Ը դարի սկզբին, Անաստաս վարդապետ Հերակլոսեցին կազմել է Պաղեստինի հայկական վանքերի ցուցակը, որից իմանում ենք, որ հայերն ու աղվանները այդ երկրում ունեին յոթանասուններկու վանքեր և կուսանոցներ²։ Խե սրբան քաղմամարդ էին դրանք, ցույց է տալիս Երուսաղեմում ապաշխարող հայ իշխանների կողմից Հովհաննես Բ կաթողիկոսին գրված թուղթը, որն ստորագրել էին հինգ հարյուր հոգի³։ Սեբեոս պատմիչը հաղորդում է, որ հայ ժողովուրդը մեծ սիրով ուխտավորական ճանապարհորդություններ էր կատարում դեպի Երուսաղեմ, Կա հիշատակություն այն մասին, որ Սինա լեռան Ս. Կատարինն պանքն էին այցելում նաև Մերձավոր Արևելքի տարբեր երկրներից Երուսաղեմ ուխտի ղնացողները։ Քրիստոնեության առաջին դարերից հայերը մշակութային-դավանական սերտ կապեր էին պահպանում Ալեքսանդրիայի պատրիարքության հետ, և պետք է ենթադրել, որ հայ ուխտավորական որոշ խմբեր այցելում էին նաև Եգիպտոսի վանքերը։

Քաղաքացուհի ժողովից (451 թ.) հետո, հույների ցուցաբերած անհանդուրժողությունը զոմարին դրույթյան մատենեց նաև երուսաղեմահայ կրոնական գաղութը։ Պատմական տվյալների համաձայն, Զ դարի կեսերից հետո, երբ հայերի դեմ հույն կղերի հալածանքը հովանավորվում էր Հուստինիանոս կայսեր կողմից, երուսաղեմահայ վանականները յթեցին իրենց վանքերը և ապաստան գտան Եգիպտոսում, որտեղ միաբնակ զպատիները կազմում էին բնակչության կարևոր տոկոսը։

² Զ. Ղ. Ալիշան, «Հայապատմ», Վենետիկ, 1801

թ., Ա, էջ 514—515։

³ «Վասն Վանթրեից որ ի Ս. քաղաքն Երուսաղեմ, Վենետիկ, 1895 թ., էջ 11։

¹ Ա. Ալադյանյան, «Արարական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը», Կահիրե, 1960 թ., էջ 4։

Ալեքսանդրիան, իբրև գիտությունների այն ժամանակվա հռչակավոր կենտրոններից մեկը, ուսանողներ ներգրավում էր նաև Հայաստանից, Եփեսոսի ժողովից (431 թ.) առաջ, Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը կարիք դրավով քաջ հունազետներ, քերթողական արվեստի հմուտ գիտնականների, իրենց ամենաընդունակ աշակերտներին ուղարկեցին Ալեքսանդրիա՝ Մովսես Խորենացին, Ալեքսանդրիայում ուսում ստացած վերջին թարգմանիչ վարդապետներից մեկը, հիացմունքով է նկարագրում իր ճանապարհորդությունը, իր ուսուցիչներին նմանեցնելով արեգակի, իսկ իրենց՝ այդ արեգակից լույս ստացող աստղերի, Ալեքսանդրիայի աշխարհահռչակ մատենադարանը հնարավորություն էր տալիս ուսումնասիր հայ երիտասարդներին՝ կարդալու հույն բանաստեղծներին, փրիսոփաներին, պատմագիրներին և այլ գիտնականների գործերը։ Որ Հայաստանից Ալեքսանդրիա էին գնում հունարեն լեզվի հմտություն ձեռք բերելու համար, վկայում է հայտատու հունարեն մագաղաթի այն բեկորը, որ հայտնաբերվել է Եգիպտոսի Ֆայում քաղաքում։ Այդ մագաղաթը գրված է հունարեն սովորելու նպատակով Հայաստանից Եգիպտոս զնացած մի հայ ուսանողի կամ առևտրականի կողմից⁴։

Ուշագրավ փաստ է նաև հայ զինվորական պաշտոնյաների գոյությունը Եգիպտոսում։ Հայտնի է, որ հռոմայեցիները Փոքր Հայքի և բուն Հայաստանի բնիկներից համարված դունդեր էին ուղարկում Եգիպտոս, բնակություն հաստատելու ժամկետով։ Նույն սովորությունը շարունակվեց նաև բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում, Հուստինիանոսի հայ զորավարներից ներսեհ Բասենցին գլխավորում էր Հյուսիսային Աֆրիկա ուղարկված բյուզանդական զորքերին։ 545 թվականին Լիբիա արշավող բյուզանդական բանակին մաս էր կազմում նաև հայկական մի զույգ Արտավան Արշակունու և նրա եղբոր հրամանատարությունների իր հերոսությունը աչքի բնկնելով, Արտավանը հետագայում նշանակվեց Լիբիայի բյուզանդական զորքի ընդհանուր սպարապետ՝ «դուքս Աֆրիկայի» տիտղոսով։

Եթե Եգիպտոս կամ Հյուսիսային Աֆրիկա զնացած հայ առևտրականներից, կղերականներից, ուսանողներից և զինվորականներից շատերը վերադառնում էին հայրենիք, ապա նրանց մի մասը մնում էր տեղում։ Վերադարձողները Հայաստան էին բերում ոչ միայն այն ժամանակի առաջավոր մտքի նվաճումները, այլև եգիպտական

ժողովրդի կյանքի ու կենցաղի ճանաչողությունը, կենդանի կապ ստեղծելով Հայաստանի և Եգիպտոսի միջև։ Իսկ մնացողներն արմատ էին արձակում Նեղոսի հովտում, նպաստելով եգիպտահայ գաղութի կազմավորմանը։ Այդ մասին են վկայում լատինական և հունական աղբյուրներում պահպանված այն հայերի անունները, որոնք Ջ դարի վերջերս ու հանրագուտ շենքեր են կառուցել Եգիպտոսում և առհասարակ Հյուսիսային Աֆրիկայում։ Է դարում Վալ գաղութը արդեն մեծ թիվ մը ուներ Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկայի մեջ⁵։

Տեղեկություններ կան արաբական գրավումից առաջ Եգիպտոսում ապրող հայերի մասին, 640 թվականին, Եգիպտոսի համար մղված ճակատամարտում, Ամրու արաբ իորավարի դեմ կռիվող բյուզանդական զորքերի հրամանատարները հայեր էին՝ Արտավան և Մանվել։ Վարդան էլ-Արմանի անունով մի հայ էր նաև Ամրուի զինակիցներից մեկը, որը հետագայում կարևոր գերկատարեց Ֆոսթաթ քաղաքի կառուցման գործում։ Բյուզանդական բանակի հայ հրամանատարներին մի ուրիշ բարձրաստիճան հայ զինվորական հակադրելու փաստը խոսում է այն մասին, որ արաբները լուրջ կերպով հաշվի էին առնում Եգիպտոսի հայերին, որոնք իրենց որակով և քանակով ոչ-արհամարհելի գեր էին խաղալու վճռական ճակատամարտում։ Արաբական հաղթանակից հետո, նորակառույց Ֆոսթաթ քաղաքի շուկան անվանվեց «Սուկ էլ-Վարդան» և թաղերից մեկը՝ «Մուսինների թաղ», որը հատկացվեց գլխավորապես հայերին։

Եգիպտահայ գաղութի է—Ժ դարերի պատմությունը ծածկված է թանձր մշտնով։ Կասկած չկա, որ այդ դարերում գաղութը ոչ միայն պահպանել է իր գոյությունը, այլև աճել է Հայաստանից վերցված գերիներով։ Սակայն, Ռամայանների (658—750 թ. թ.) և Աբասյանների (751—969 թ. թ.) խալիֆայի կրոնը տարածելու քաղաքականության հետևանքով, Եգիպտոսի հույների, ղպտիների և ուրիշ ազգերի շարքում նաև հայերը մեծ մասամբ ենթարկվել են դավանափոխության և ձուլման։ Արաբական աղբյուրներում հիշատակվում են բազմաթիվ արաբացած հայեր, որոնք առաջատար գերերով հանդես են եկել Եգիպտոսի պատմության մեջ։ Հայազգի Հասան էլ-Արմանին 841—850 թվականներին կրկու անգամ նշանակվել է Եգիպտոսի կառավարիչ։ Մի ուրիշը, Մեհմուդը, որին ուսումնասիրողները համարում են Օսման խալիֆայի Հայաստա-

⁴ Հանդես Ամսթրյա, Վիեննա, 1888 թ., էջ 57։

⁵ Նույն տեղում, էջ 173։

⁶ Ա. Ալլոյտեյտե, Նշված աշխատությունը, էջ 8։

նից վերցրած գերիներին Ռյուստամ Բին Բեհրամի (Ռոստոմ որդի Վահրամի) թողր, 904—909 թվականներին, Հյուսիսային Աֆրիկայում մասնակցել է Աբու Աբդալլայի ապստամբությանը և հետագայում Թահերթում հիմնել է անկախ իշխանություն, ընդհուպ ձգտելով խալիֆայական դահիլն:

Ցաթմայան իշխանության ժամանակաշրջանում (969—1171 թ.թ.) եգիպտահայ զադուբը հզոր վերելք ապրեց, ոչ իսլամ տարրերի նկատմամբ Ցաթմայանների ազատախոհ և բարյացակամ քաղաքականությունը մշակութային և զինվորա-քաղաքական լայն ապարեզ բացեց հայերի առաջ նպաստելով արվեստների ու գիտությունների զարգացմանը և պաշտպանելով վաճառականությունն ու հողագործությունը, Ցաթմայանները նգիպտոսում ստեղծեցին փարթավ կյանքի պայմաններ, որոնք ղեպի նգիպտոս էին ձգում հարևան երկրների բնակիչներին, Պատմական հաղորդումների համաձայն, Ցաթմայանների իշխանության առաջին քսան տարիների ընթացքում կրկնապատկվել է երկրի բնակչությունը, նգիպտոսը գաղթականություններ ընդունել էր մեծ մասամբ ռիստվալա Միջագետքից և Նիքիայից, որտեղ վաղ ժամանակներից ապրում էին հայկական մեծազանգված բազմություններ, նեղոսի հովտում, 981 թվակիր խաչքարի հայտնաբերումը վկայում է այն մասին⁷, որ էլ-Աղեռ խաչի իշխանության տարիներին (975—966 թ.թ.) եգիպտահայ զադուբը զգալի լափով ստվարացած լինելով, անհրաժեշտ է նկատվել հայկական եկեղեցի կառուցել:

Դեպի նգիպտոս հայերի հոսանքն ուժգին թափ ստացավ մանավանդ ԺԱ դարում: Միջինասիական քոլվոր ցեղերի արշավանքներից փախչելով, Միդիայի և Կիլիկիայի հայերից բազմություններ շարժվում էին ղեպի հարավ, անվտանգ կյանքի պայմաններ գտնելու համար: Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ այդ դարում քաղաքը ժողովեցան հայոց յնգիպտոս իբրև երեսուն հազար⁸, 1074—1075 թվականներին նգիպտոս այցելեց Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, որը, Ուռհայեցու պատմումով, քաղում փառք և մեծութիւն ընկալաւ... ի թագաւորէն եգիպտացոց...⁹, Այդ փաստը խոսում է այն մասին, որ եգիպտական իշխանությունը, բարձր գնահատելով հայերի օգտակարությունը երկրի վաճառականության և արհեստների ծաղկման գործում,

քաջալերում էր նրանց նգիպտոսում համախմբվելու ձգտումը: Օգտվելով այդ բարի տրամադրություններից, Գրիգոր Վկայասերը եգիպտահայերի համար եկաթողիկոս (վիճակավոր եպիսկոպոս կամ առաջնորդ) նշանակեց Ներսես Նևորհալու հորեղբայր Գրիգորիոս իշխանին, սեղև ազգիս հայոց կաթողիկոս վեց, երկու յնգիպտոս և շորս յամենայն աշխարհն Հայոցն¹⁰, 1075—1085 թվականներին խոշոր լափով մեծացել էր եգիպտահայ զադուբը:

Գրիգոր Վկայասերի նգիպտոս այցելությունը զուգադիպում էր էլ-Մոսթանսիր խալիֆայի իշխանության տարիներին, երբ եգիպտահայ զադուբը ապրում էր իր բարգավաճ ժամանակաշրջաններից մեկը: Հայտնի է, որ Բագրատունիների և Արծրունիների կործանումից հետո, բազմաթիվ հայեր, որոնք եգիպտոս էին գաղթել իբրև քաղաքական տարագիր կամ գերի, իրենց աշխատանքով և ջանասիրությամբ տիրացել էին զինվորական և քաղաքական քարձրագույն դիրքերի: Այդպիսի մի անձնավորություն էր Պատր էլ-Կամալի հայազգի սվերուկա-ը (վեզիր, փոխարքա), որ էլ-Մոսթանսիր խալիֆայի օրոք ամրողջ քսան տարի (1074—1094 թ.թ.) բացարձակ իշխանությամբ կառավարեց երկիրը: Անտարակույս, Գրիգոր Վկայասերը լայնորեն վայելեց հայազգի սվերուկի աշակցությունը: Ըստ Ն. Ղ. Ալիշանի, արաբական սկզբնաղբյուրները վկայում են, որ Պատր էլ-Կամալին զգալիաց և Ասորվոց եկեղեցիներեն մեկ քանին հայոց տվավ...¹¹, Բացի այդ, Վարդան պատմիչը, անդրադառնալով Գրիգոր Վկայասերի նգիպտոս այցելությանը, նշում է, որ նա այդ երկրում աշինեաց վանս հայոցն:

Հայազգի պատմիչ Աբու Սալհը վկայում է, որ ԺԱ—ԺԲ դարերում հայերը նգիպտոսում ունեին բազմաթիվ, ըստ ոմանց մոտավորապես երեսունհինգ եկեղեցի և վանք: Մատթեոս Ուռհայեցու հաղորդումով, այդ եկեղեցիներն ու վանքերը սոսկ պատմական հուշարձաններ չէին, այլ գործում էին ներգրավելով եգիպտահայ հավատացյալների. «...իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց»¹², Հայկական եկեղեցիների և վանքերի տեղաբաշխումից երևում է, որ հայերը զիսկվորապես բնակվում էին Կահիրեում, Կահիրեի շրջակայքում, Տեյուտում, Թերեի շրջանում, Ասիուտում և այլ վայրերում:

7-Ա. Ալպրոյան, Նշված աշխատությունը, էջ 15:

8 Մատթեոս Ուռհայեցի. «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ., էջ 211:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 229—230:

Արարական սկզբնաղբյուրների վկայու-
թյամբ, Օւ—ԺԻ Կարաուն սսծ իվոզ Կայսր
ապրում էին Կարբրսում և նրա շրջակայ-
քում: Սատմելով Օւս դարի վարչերի, Կար-
բի վերակառուցման աշխատասքսսրի մա-
սին, արար պատմիչ Սագրիդին Կաղորդում
է, որ Կարիբն ժամադրաբան և ամայի մի
նր Կապառ էր: [Կատր էլ-Կամալին] արտո-
նություն տվեց ասքարներին, մեկերիններին,
Հայրին և շեքե կառուցելու ի վրեպի եղող-
ներին, որ Կարիբում կառուցեն իրենց ցան-
կացած շենքեր¹²: Հայերը Օւս դարում իրենց
թվով Կահիրեում գրավում էին Երրորդ տե-
ղը: Ժացի Կարիբից, Հայկական հոծ բազ-
մություններ ապրում էին նաև շրջակայքի
գյուղերում և ավաններում: Արու Սալի
պատմելով, Ֆաշն կամ Ֆենեն ավանի արե-
մրտյան կողմը ՎԵինարա վիճակի մեջ հա-
յոց թրխտունեից գաղթական ժի հաստատ-
ված էր, որք յոթը եկեղեցի ունեին շատ բա-
րեկարգ, քահանաներով և միաբաններով¹³:
Կիրկնի մոտերը, Կալուսանայում հայերն
ունեին մեկ եկեղեցի¹⁴: Կահիրեի Կիզե գա-
վառի Սաֆու-Մալտուն գյուղում՝ զեա եկեղե-
ցի մի հասարակաց երեք սեղանովք, մեշ-
տաղին խալիկաց է... երկրորդն հայոցն...
և Երրորդն... մեղքիտաց է¹⁵:

ԺԱ դարի վերջերս, հալանաքար էլ-կա-
մալրի միջնորդությունը, դպտինների հայե-
րին է պոխանցվում վերին Ոգիպտոսի Սո-
հակ քաղաքի մերձակա Դեյր էլ-Ահմարը
(կարմիր վանք) և Դեյր էլ-Աբիադը (Սպի-
տակ վանք)¹⁰, որոնք հետագա դարերում,
եգիպտահայ դպրութի անշքացման հետևան-
քով, վերատիև հանձնվեցին իրենց նախկին
տերերին։ Սպիտակ վանքի ալագ խո-
րանում մինչև օրս էլ պահպանվել են
հայերեն երեք արձանագրություններ, որոնք
գտնեցվել են թի հայրապետությանն Տ.
Գրիգորի քննորդող Գրիգորիսի որ Տէր Վահ-
րամ կոչի», այսինքն՝ 1070—1120 թվա-
կաններին։ Վանքի ներքին նկարագրողումը
կատարել է Քեղոդոս նկարիչ և գրիչ ի
գաւառն Քաննոյ, մեծ է կամուրջն Շնչևոր,
ի գեղչէ որ կոչի Սախթլէյ։ Քննորդութի հի-
շատակում է իր թքարագործ Վորը, ինչպիսի
նաև ունի խաչատուրին և Սարգսին, որոնք
նպաստել են տաճարի բարեգաղման կամ

12 Paul Ravalasse, «Essai sur l'histoire et sur la topographie du Caire d'après Makrisi», Le Caire, 1880, II, p. 34.

19 Արսու Սալի, «Գրադոսթին», հիմնդրեաց և վան-
բերդի, Թարգմ. Է. Ղ. Մ. Այիշան, Վենետիկ, 1895 թ.,
էջ 55:

14 වැනි පරිච්ඡේදය, 54.

16 Երբեք անհոգա՛յ, էջ 52,

10 Առաջին անգամ Դերյո էլ-Արիադր Հետազոտվի է
Թողցում հախսկոպոս Գուրուկյանի կողմից:



ՄՈՒՆԻՍԻՊԱԿԱՆ ԳԼԱՆՔԻ ՀԱՅՆՐԱՆ
ԱՐՁԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

հարստության աշխատանքներին: Արձանա-
գրության վերջում, Թեոդորոսը գոհարա-
նակալ մագրանք է անում Ե... ամենայն
հալոցս որք եմքս ի ծառայութեան յՕգիպ-
տութիւն¹⁷:

Հայ նկարիչներն ու գրիչները, ծաղկող-
ներն ու շինարարներն իրենց տաղանդը ի
սպաս էին դնում նաև արաբական զարդա-
նկարչության և ճարտարապետության զար-
գացման գործին։ Անանուն հայ վարպետե-
րի ձեռնակերտներ են կահիրեի և Ալեքսանդ-
րիայի մի շարք հույակապ մզկիթները, որոնք
կանգուն են մնում մինչև օրս։ Հայ շինա-
րարների արաբական ճարտարապետու-
թյան մատուցած խոշորագույն ծառայու-
թյուններից մեկը, անկասկած, քարի հաղթանակն
է սովորական դարձած թրժված աղյուսի
տեղ։ 1125 թվականին կահիրեում կառուց-
ված էլ-Ահմարի նշանավոր մզկիթի, որի
քարաշեն առանձնասը հայ ճարտարապե-
տների գործ է, իրաւացիորեն համարվում է
արաբական ճարտարապետության կոթող-
ներից մեկը։ Ըստ Մադրիդիի, կահիրեի

17 Արձանագրության մասերն ըստ Ռոբորտ Էպին-
կոպու Գուշակյանի, «Տաթև» տարեգրք, Հալեպ,
Լուրիա, 1927 թ., էջ 181—182:

պարսպի երեք զլխավոր դռները՝ Բար էլ-Ֆութուհ, Բար էլ-Նասրը և Բար էլ-Ջավելլա կառուցել են եղեսիացի երեք եղբայրներ, որոնք հավանաբար հայեր էին։ Ժամանակով ավելի ուշ հայ նկարիչների գործեր են կահիրեի և Ալեքսանդրիայի հնամյա բնակարանների պատերի վրա անվթար պահպանված մի շարք զարդաքանդակներ, զարդանկարներ և խճանկարներ։

Կասսուն Վիետ պատմաբանը 1070—1163 թվականներն անվանում է Եգիպտոսի պատմության հայկական շրջանը։ Ըստ արևելագետ Կադրաբերի, այդ ժամանակաշրջանում Եգիպտոսի ծառայության կոչված հայազգի զինվորականները և քաղաքական անձինք որոշ ժամանակով հապաղեցրին ֆաթմայան իշխանության անկումը։ 1074—1094 թվականներին Եգիպտոսի վեզիրի պաշտոն է վարել Պատր էլ-Կամալին, որի մասին ԺԳ դարի արաբ մատենագիր Իբն Խալիկանը պրում է. «Հայազգի էլ-Կամալին հմուտ, կորույթի, հաստատակամ, հազվագյուտ մի մարդ էր, որի վեզիր նշանակումով իշխանության վարկը բարձրացավ և պետական վարչությունը բարեկարգվեց»¹⁸։ 1094—1121 թվականներին նույն պաշտոնում Եգիպտոսին ծառայել է էլ-Կամալիի որդին՝ էլ-Աֆդալը։ 1154—1161 թվականներին Եգիպտոսի վեզիրն էր Քալալը Բին-Ռուզզիկը, որի մասին նույնպես գրված ենք ով է խոսում Իբն-Խալիկանը. «Բարձր արժանիքների տեր, առատաձեռն, գլուխահարդար և գիտնականների համակրող մի մարդ էր... որի համբավը հասել էր մինչև Դամասկոս, Հոմս, Մոսսուլ, Բաղդադ»¹⁹։ Ժամանակակից արաբ պատմաբան Ֆիլիպ Հիտտին էլ-Կամալիի և Ռուզզիկի ժամանակ Եգիպտոսի մշակութային առաջընթացը համեմատում էր փարավոնների դարաշրջանում արձանագրված նվաճումների հետ²⁰։

Բացի դրանցից, պատմությունը հիշատակում է նաև հայազգի վեզիրներ Յանիսին (1132—1134 թ. թ.) Բեհրամ էլ-Արմանին (Վահրամ Պահլավունի, 1135—1137 թ. թ.), Իբն Ռուզզիկ Ադիլին (1161—1163 թ. թ.), ինչպես և բարձրաստիճան զինվորականներ Նասիբին (Վասակ Պահլավունի), Բասիլին (Վասիլ), Զարդանին (Շահան) և շատ ուրիշների, որոնք աչքի էին ընկել եգիպտական բանակում իրենց մատուցած ծառայություններով։ Արաբական աղբյուրների հաղորդումով, Վասակ Պահլավունին, իբրև զինվորական հրամանատար և կուսակալ, պաշ-

տոնավարում էր Ասիութի կողմերը, իսկ Վահրամ Պահլավունին անթերի հավատարմությամբ ծառայել է էլպուլ Մանսուր Ամիրին, 1134 թվականին հայկական զորագնդով ճնշելով էլ-Հալին կոչված ասպատակի ըմբոստական շարժումը։ Իր վիպասանության մեջ, ներսես Շնորհալին գրվածքներով է հիշատակում Վասակ և Վահրամ Պահլավունիների Եգիպտոսին մատուցած փալլուն ծառայությունները։

Պակաս կարևորություն չէին ներկայացնում շարքային հայ զինվորները եգիպտական բանակում։ Մագրիզիի հաղորդումով, 1070—1094 թվականներին կահիրեի բանակի զինվորների մեծ մասը հայեր էին, Հյուսիսի կոչված թաղը հայ հետևակ և հեծյալ զինվորների բանակավայրն էր, այնտեղ կային 7 000 կամ ավելի զինվորներ²¹, Ֆաթմայան իշխանության անկման ժամանակաշրջանում եգիպտական բանակում հաշվվում էր 40 000 զինվոր և 30 000 հետևակ, զինավորակա սեևամորթ զինվորներ, եգիպտացի էմիրներ, բեդլիններ, հայեր և ուրիշ տարրեր...²²։ Մագրիզիի հիշատակության այդ կարգը ցույց է տալիս, որ հայերը թվական տեսակետից չորրորդ տեղն էին զբաղում եգիպտական բանակում։ Արաբական աղբյուրները գրվածքում են հայ զինվորների հավատարմությունն ու քաջությունը, պատմում են, թե ինչպես 1171 թվականին Սուլթան Սալահադդինի զորքերը կահիրեում հանդիպեցին Ֆաթմայանների պալատը պաշտպանող հայկական զորագնդի հերոսական դիմադրությանը։

ԺՔ դարի վերջերին, եգիպտահայ զաղութն սկսեց աստիճանաբար կորցնել իր երդմնի փայլը։ Սուլթան Սալահադդինը, թեև Երուսաղեմում հանդուրժողություն ցուցաբերեց հայոց վանքի և զաղութի նկատմամբ, սակայն, Եգիպտոսում, ընդհակառակը, հալածանք ծավալեց հայերի դեմ, որոնք ճանաչվում էին Ֆաթմայան իշխանության շեղման կողմնակիցներ։ Բանակից և պետական պաշտոններից մեծ մասամբ արտաքսվելուց հետո էլ հայերն ամենասերտ կապեր պահպանեցին եգիպտացիների հետ, որոնք, լսողալով հարկերի և տուգանքների ավելի ու ավելի ծանրացող լծին, 1192 թվականին ապստամբության դրոշ պարզեցին Սալահադդինի դեմ։ Արյան մեջ խեղդված այդ շարժումը, որին գործոն մասնակցություն բերել էին հայերը, հոռեզույն հետևանքներ ունեցավ եգիպտահայ զաղութի համար։

¹⁸ Իբն Խալիկան, «Անհետացած երևիկաներ», Բաղդադ, Գ. Մըքրթում, Կահիրե, 1935, էջ 148։

¹⁹ Նույն անգում, էջ 184—185։

²⁰ Philip K. Hitti, «History of the Arabs», London, 1951, p. 830.

²¹ Paul Ravaiss, նշված աղբյուրությունը, 117, էջ 83։

²² Նույն տեղում, 1, էջ 162։

1250—1517 թվականներին, մամելուկների ժամանակաշրջանում, որոշ չափով բարելավվեց եգիպտահայ գաղութի վիճակը: Եթե ոչ նախկինի նման, այնուամենայնիվ, ԺԳ—ԺԴ դարերում հայերը զինվորական և քաղաքական աշխուժություն են ցուցաբերում եգիպտոսում: Մագրիզին հաղորդում է, որ 1290 թվականին, էշրաֆ խալիլի իշխանության սկզբնական շրջանին, սուլթանական 10 000 մամելուկներից 3 700-ը հայեր և շերքեղներ էին: Հետագայում հայ մամելուկների թիվը զգալի հավելում է կրել Հասսոտանից և Կիլիկիայից վերցված զորքներով: Տեղեկություններ կան Մուֆակիդդին Աբուլ Ֆարաքի, Քանզեզդին Աբդել Ռազակ, Ֆախրեզդին Աբդել Ղանի, էմիր էլ-Ջեյն և ուրիշ հայազգի պաշտոնատարների մասին: Իսլամական կրոնին հարելը նախապայման էր բարձր պաշտոնների տիրաձեռում և ազատ ապրելու համար: Դրա հետևանքով էլ, եգիպտահայերի ձուլումը կատարվում էր արագ թափով: Այդ փաստը նկատի առնելով, ոմանք կասկածելի են համարում եգիպտահայ գաղութի գոյությունը ԺԴ դարի վերջերում:

Այդ վարկածի իբրև գլխավոր փաստարկ է ծառայում Ստեփանոս Սրբելյանի այն տեղեկությունը, ըստ որում 1292 թվականին Հոսմկլայի Ստեփանոս կաթողիկոսը զբրիտարվեց թի Մսրա, այնտեղ վախճանվեց և նրա մարմինը առարան յեկեղեցի Հաբաշի Ասորեացն և պատուով հղին ի հանգստիս: Ստեփանոս կաթողիկոսի Կահիրեում վախճանվելը, որին արձագանքել են նաև Հ. Մ. Չամչյանը, Սաղաքիա արքեպիսկոպոս Օրսանյանը և ուրիշներ, թվում է կասկածելի, որովհետև, Հոսմկլայի գրավման ժամանակահատվածից Թորոս գրիշը իր Ավետարանի գլխավոր հիշատակարանում նշում է, որ Ստեփանոս կաթողիկոսը զբրի վերցվեց թի գողոզէն փարաւոնէս, սակայն, հասնել ի քաղաքն Դամասկոս ճգնաւորական հանդիսի փոխեցաւ յաստեանցս²³: Այդ դարում, եգիպտահայ գաղութը գուցե անշքացած էր, բայց անկասկած գոյություն ուներ, մանավանդ որ մամելուկները Կիլիկիայից բազմահազար զորքներ ուղարկում էին եգիպտոս:

1375 թվականին եգիպտոս զբրի տարված էնոն Եթազավորի քարտուղար Հովհաննես Դարգելին հիշատակում է եգիպտահայ ամհամեծներ ու պատվավորներ, որոնք թի վաղուց հետէ բնակէին ի Քահիրէ և էին ստրուկք սուլթանին²⁴: Այդ հայերի նրաշ-



ԱՐԵՔ ԷԼ-ՋՈՒՆՑԼԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՆԻՆՂԵՏՈՒ ԿՈՐԱՆԸ

խաղորդությամբ սուլթանը ոչ միայն ազատրնակության իրավունք տվեց էնոն Ե-ին, այլև հրամայեց տալ նմա վասն ուտեստի վաթսուն գրամս արծաթոյ զօր հանապազ²⁵:

Բացի այդ, ԺԴ դարում մշակութային որոշ գործունեություն էին ցուցաբերում եգիպտահայ անապատականները: Հավանաբար գրանցից մեկն էր Գրիգոր եգիպտացին, որ 1345 թվականին պատրիարք ընտրվեց Նուսադեմի հայոց վանքի: Մկրտիչ Սպիսկոպոս Աղափնունու հաղորդումով, եգիպտոսում հայ անապատականներն ապրում և դործում էին ոչ միայն լավագույն վանքս անունով ճանաչված անապատում, այլև նեղրիայի և Սկիտիի վանքերում, եգիպտացի այլացիղ անապատականների հետ միասին²⁶: Այդ դարում, Սկիտեում գրված մի շարք հայերեն և բազմալեզու (հայերեն, արաբերեն, ղպտերեն, հունարեն) գրչագրերի առկայությունը վկայում է ոչ միայն եգիպտահայ մշակութային կյանքի որոշ աստիճանի ծաղկման, այլև եգիպտական ժողովրդի բաղկացուցիչ

²³ Սեղագրական Հանդես. ԺԲ դիրք. Թիֆլիս, 1904 թ., էջ 158:

²⁴ Հովհաննես Դարգելի, «Ժամանակագրություն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1891 թ., էջ 158:

²⁵ Նույն տեղում:

²⁶ «Տաթև» տարեցույց, Հուլիս, Սուրբա, 1929 թ., էջ 39:

տարրերի հետ հայ ժողովրդի ստեղծած մշակութային սերտ կապերի մասին:

ԺՅ դարում եգիպտահայ գաղութի գոյության մասին մեզ հասել են տարտամ տեղեկություններ: Հիշատակվում է Սեսրոպ ասունով մի եպիսկոպոս, որը 1402 թվականին Երուսաղեմից Կահիրե է գնացել և Սգիպտոսի սուլթանին ներկայացել Երազմութեամբ ժողովրդաց²⁷, 1416 թվականին Երուսաղեմի հայոց վանքի պատրիարք է ընտրվել եգիպտահայ Մարտիրոս եպիսկոպոսը, որը 1434 թվականից հետո հաջորդաբար երեք անգամ Կահիրե է ուղևորվել վարչական գործերով²⁸, 1441—1442 թվականներին Կահիրե տանող ճանապարհի վրա, ռենդելչ ջրմուղին և հողակոյտին, կային իրար կողքի կառուցված երեք եկեղեցիներ, որոնցից մեկը պատկանում էր հայերին:

ԺԵ դարի վերջերից մինչև ԺԷ դարի սկիզբը քայքայման է ենթարկվում եգիպտահայ գաղութը, երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանների հետևանքով: 1448 թվականից հետո, Բարեհուսո հրվանդանի հայտնաբերումով, Եգիպտոսը կորցրեց իր երբեմնի նշանակությունը Եվրոպայի և Հեռավոր Արևելքի միջև տարանցիկ առևտրի համար: Բացի այդ, 1517 թվականին, Եգիպտոսն ընկավ Օսմանյան տիրապետության տակ: Մի կողմից մամելուկների արյունալի հակամարտությունները և թուրքական ամենադաժան հարկային լուծը, մյուս կողմից էլ առևտրական և տնտեսական շահույթների զգալի նվազումը, մթազնում էին ժողովրդի տարբեր խավերի կյանքը: 1610 թվականին պատմելով Կահիրեի հայերի մասին, ճանապարհորդ Ժորժ Սանդիսը նշում էր, որ Վրայերը Կահիրեի բնակչության ամենեն աղքատներն են և ամենեն պատվալուրերը, չարքաշ աշխատելով և պարկեշտորեն ապրելով²⁹, իսկ 1615 թվականին Սիմոն Լեհացին Կահիրեում գտել էր միայն երկու հարյուր տուն հայեր, «ամենն ձնլալոց փախուցեալ»:

ԺԸ—ԺԹ դարերում վերստին ծաղկում է եգիպտահայ գաղութը: 1630 թվականին Գրիգոր Կամախեցի վարդապետը Եգիպտոսում

սում հանդիպել էր բավական թվով շուղայեցի հայերի, որոնք զբաղված էին ռազմական ապրանքների առևտրով: Ինչիտ և՛ «ամեն վաճառաշահ» նավահանգիստներում աշխուժություն էին ցուցաբերում նաև հայերը: Կահիրեի հարբ էլ-Կրնե թաղի Ս. Գեվորգ եկեղեցու պատի վրա զետեղված հուշատախտակից երևում է, որ այդ եկեղեցին կառուցվել է 1631 և «ի հիմանէ» վճարանորոգվել 1649 թվականին: Այդ իրողությունը խոսում է այն մասին, որ Եգիպտահայ գաղութի տնտեսական վիճակը զնալով բարելավվում էր: Բացի այդ, հայերը մասնակցություն էին բերում նաև պետական վարչությանը: Հրշտակվում են հայազգի սյունյալ բնյր, Օսման Չելեբին, Ալի էլ-Արմանին, Մամելուկ Ռուստամը, Մուրատ Բնյր, Մուսլիմ Նիկուան, Ծաղուրը և շատ ուրիշներ, որոնք վարել են զինվորական և քաղաքական բարձր պաշտոններ: Հայազգի Ծաղուրը ամենասերտ գործակիցն է եղել Եգիպտոսի կուսակալ Ալի էլ-Գոբրի, որը 1768 թվականին փորձեց ձեռք բերել Եգիպտոսի անպախուժությունը: Գուցե և այդ լայն խորհրդով գործալով, Ալի էլ-Քեբիրը 1772 թվականին օգնություն խնդրեց Ռուսաստանից, օսմանյան լծից Եգիպտոսն ազատագրելու համար: Այդ նույն նպատակով, Ծաղուրի դեպի Ռուսաստան կատարած ուղևորությունը պսակվեց հաջողությամբ: Ռուսաստանը Եգիպտոս ուղարկեց ոչ միայն վեց թնդանոթակիր նավեր և ռազմամթերք, այլև երկու մասնագետներ, որոնք պաշտոն ունեին քննելու բանակի վիճակը³⁰, Հայազգի Մուսլիմ Նիկուան, որը եգիպտական «նավատորմի ընդհանուր ժովակալն» էր, 1799 թվականին հերոսական կռիվ մղեց Ֆրանսիական ներխուժողների դեմ³¹:

ԺԹ դարի սկզբում զարգացման նոր հեռանկարներ բացվեցին եգիպտահայ գաղութի պատմության համար: Հայ ժողովրդը իր տաղանդն ու բազկի ուժը ի սպաս դրավ եգիպտական ժողովրդի բարօրության և ինքնուրույն պետականություն ստեղծելու ճիգերին: Նեղոսի հյուսիսում հովտում արմատ արձակած հայ ժողովրդի զավակները իրենց սրտագին մասնակցությունը բերեցին երկրի նոր առաջընթացին, որպես հավատարիմ, օրինավոր քաղաքացիները նոր Եգիպտոսի:

²⁷ Ա. Հովհաննիսյան, «Գաղութի ստեղծման, երուսաղեմ, Ա, էջ 218:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Մեջբերումն ըստ Ա. Ալպոյանյանի եղված աշխատության, էջ 40:

³⁰ Նույն տեղում, էջ 58:


³¹ Նույն տեղում, էջ 57:





Ս. ՀԱԿՈՐԱՅԱՆ

ՍՈՒՐԲ ԼՁՄԻԱԾՆԻ ՎԱՆՔՈՒԾ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՐԺԱՐՆԵՐԸ



մարմարների բազմազան տեսակներով հարուստ երկիր է Հայաստանը.

Մարմարները հայտնի են իրենց քանակով և լավագույն գույների բազմազանությամբ: Մեզ մոտ գտնվում են մարմարի սպիտակ բաց կաթնագույն տեսակներից մինչև մուգ սև տեսակները բոլոր գույներով, դեղին, կարմիր, վարդագույն, դանազան երանգներով մոխրագույն:

Մարմարների բազմատեսակ և հարուստ պաշարներ գտնվում են Հրազդանի շրջանում. դրանք բաց վարդագույնից մինչև զգալի վարդագույն գունավորումով, գեղեցիկ բնորոշ գծերով, լավագույն ֆիզիկամեխանիկական հատկությամբ (ամրություն, աննշան ջրակլանում) Աղվերաձորի մարմարներ են կոչվում:

Մարմարի այս տեսակը հայտնի է ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից շատ հեռու:

Այս մարմարներից ոչ հեռու գտնվում է Արզաքանի հանքավայրը: Մոխրագույն մարմարների մեջ խիստ բնորոշ են Արզաքանի մարմարները:

Աշխարհահռչակ են մեզ մոտ եղած Աղամզալուի մարմարները (Արտաշատ): Մրանք, տրպես լավագույն մարմարային օնիքսներ (արագոնիտ), ունեն հաճելի գույն, ընդհանրապես կանաչ գծերով կամ նեղ, գետերի հունը հիշեցնող շերտերով կտորներ: Մեծ է նրանց լուսաթափանցելիությունը:

Աղամզալուի մարմարների դեղին փոփոխակը, որը հիշեցնում է տիպիկ սաթ (ոսկեգույն), անպայման աշխարհի լավագույն մարմարային օնիքսներից է: Հոյակապ գեղեցկություն ունեն մեր Կուրիշների (Ջարխեշ, Իյեանի շրջան) խառնուրդ մարմարները: Դարերի ընթացքում ջրով հղկված, տարբեր կտորներից կազմված, ամուր ցեմենտաց-

ված, բաց և մուգ վարդագույն գունավորված այս մարմարը ծառայում է վեհաշուք կառուցվածքների համար և աշխարհում հազվագեղ տեսակներից է: 1961 թվականին այս մարմարով զարդարվեց Կրեմլում նոր կառուցված պալատի նիստերի դահլիճը:

Սև գույնի մարմարները հայտնի են Վեդիի շրջանում (Արարատի մարմար) և Արտաշատի շրջանում (նոր Վիրապի մարմար). սրանք ունեն բնորոշ սպիտակ գծեր: Արարատի մարմարների մեջ հանդիպում են դեղին բծեր: Իրենց դիմացկունությամբ այս մարմարներն ալքի են ընկնում: Մեծ քանակությամբ օգտագործվել են Մոսկվայի մետրոյի շինարարության մեջ:

Մարմարների անսպառ պաշարներ են գտնվում նաև Նղեզնաձորի շրջանում (Ամաղուի մարմար), Իյեանում, որը բնորոշ հաճելի գույն ունի:

Կիրովականում գտնվում է Մայմեխի հարուստ հանքավայրը: Այս մարմարն ունի բնորոշ սպիտակ գույն և կտրվածքում շաքարային փալլ: Հայաստանի մարմարներից սա ամենամեծահատիկն է: Գեղեցիկ են նաև Վեդիի շրջանի (Մարմարասարի) մարմարները, Բասարդեշարի, Ապարանի, Ստեփանավանի և Ղափանի մարմարները:

Հայաստանի մարմարների սքանչելի ներդաշնակ օգտագործումով են զարդարված ՀԿՊ Կենտրոնական կոմիտեի շենքի աստիճաններն ու միջանցքները, Հայաստանի Կառավարական շենքը, Գերագույն Սովետի և Ժողտնտխորհի շենքերը և այլն:

Մարմարների այս բազմազանությունը անտարակույս հայտնի է եղել մեր նախնիքներին: Նրանք մարմարներ օգտագործել են հնագույն ժամանակներից:

Մարմարից պատրաստվել են արձաններ: Մարմար օգտագործվել է զանազան իրերի զարդաքանդակների համար, շինա-

րարության մեջ կիրառվել է որպես բացառիկ մոնոմենտալ կառուցվածքների շինանյութ։ Մեզ մոտ, հնագիտական աշխատանքների ժամանակ, մարմարյա ամբողջական շենքեր, պատեր, հատակներ չեն հայտնաբերվում։ Գառնիի պեղումների ժամանակ գտնվել են մարմարյա արձանների բեկորներ, մարմարյա զանազան զարդաքանդակներ և առանձին կտորներ։ Դվինում նույնպես գտնվել են զանազան իրերի և առարկաների մարմարյա բեկորներ և վերջապես Անիից բերված և պատմության թանգարանում պահվում է մի փոքր մարմարից զարդաքանդակ (ձյան փաթիլ հիշեցնող), սպիտակ գույնի։

Էջմիածնի վանքում օգտագործվել են ոչ շատ հին ժամանակներից, ինչպես Գառնին է, Դվինը կամ Անին, մարմարների մի շարք տեսակներ։

Էջմիածնի եկեղեցիներից Շուփսիմեի վանքում պահված են վանքի պարիսպների վերանորոգման ժամանակ գտնված մի քանի տեսակ մարմարի կտորներ, որոնք վերաբերում են ԺԳ—ԺԴ դարերին։ Սրանց մեջ կա մի զարդաքանդակով պատված ամբողջական մարմարի կտոր, դռան մուտքի շրջանակի մի փոքր մասն է՝ եռանկյունաձև և մի հատ է՝ ոչ լրիվ մշակված մարմարի կտոր։ Ինչի համար է պատրաստված վերջինս, դժվար է ասել։ Նա մինչև վերջ մշակված չէ։

Ըստ արձանագրության տվյալների, ամենահին մարմարը Շուփսիմեի վանքի վերանորոգման վերաբերյալ Փիլիպոս կաթողիկոսի հուշատախտակ-արձանագրությունն է 1651—1654 թվականներին դրված տաճարի հարավային պատի մեջ։ Ունի դեղնավուն գույն և մի կողմում թավականին խունացած է և պատին խփվող անձրևաջրերի ազդեցության պատճառով դեղնած։ Էջմիածնի Մայր Տաճարի արևելյան պատին ամրացված մարմարյա հուշատախտակը, որը կրում է 1869 թվականը, երբ կառուցվել է թանգարանը, նույն մարմարից է։ Մարմարյա հուշատախտակը դրվել է Գևորգ Դ կաթողիկոսի կողմից։ Նա 130 սմ. երկարություն և 91 սմ. լայնություն ունի։ Այս երկու հուշատախտակները հողմահարվել են կորցրել են իրենց հզկումը և բնական գույնը։

Շուփսիմեի վանքի ներսում, տաճարի հյուսիսային կողմում գտնվում է 1655 թվականին վախճանված Փիլիպոս կաթողիկոսի գերեզմանը՝ իր մարմարյա տապանաքարով, որի չափսերը $122 \times 604 \times 12$ սմ. են։ Ս. Էջմիածնի Մայր-Տաճարի մուտքի ձախ մասում գտնվող մարմարյա գերեզմանը, որը պատկանում է Ալեքսանդր Զուլալյիցի կաթողիկոսին, նույնպես համեմատաբար

հին է, ունի 150 սմ. երկարություն և 55 սմ. լայնք։ Տապանաքարը կրում է 1714 թվականը։ Սրա դիմացը կա նույն մարմարից Ալեքսանդր Բյուզանդացի կաթողիկոսի տապանաքարը, որը միջին մասում 110 սմ. երկարություն ունի և 41 սմ. լայնք։

Մայր տաճարի ներսում գտնվում են երկու մարմարյա հուշարձաններ՝ Իջման Ս. Սեդանը և Բեմի մարմարյա շարվածքը։ Վերջինս շինված է Ասատուր Համադանցի կաթողիկոսի օրոք, 1720 թվականին։

Բեմի մարմարյա շարվածքի վրա կան 12 առաքյալների յուզանկարները, կենտրոնում Աստվածամոր, աջ անկյունում՝ Փիլիպոս սարկավագի և ձախ անկյունում՝ Ստեփանոս սարկավագի նկարները։ Այս աշխատանքը կատարված է Կարապետ Ուլենցի կաթողիկոսի օրոք 1726—1727 թվականներին¹։ Սրանք երկուսն էլ մարմարային օնիքսներ են, սպիտակավուն բաց, աննշան կանաչավուն երանդով, որոնք ավելի քան երկու հարյուր տարվա վաղեմություն ունենալով հանդերձ, լուսնն ոչ մի հողմահարման հետք։ Բեմի ճակատի նկարները հիանալի պահպանվել են, եթե նկատի ունենանք, որ մարմարները լնին ծակոտկենություն ունեն (խտակալան մարմարների մոտ դա 0,1—0,2 % է) և աննշան ջրակլանում, այն ժամանակ հասկանալի կլինի հայ վարպետների ճարտարությունը և ներկերի ընտիր բաղադրությունը։

Մարմարի վրա յուզանկարով նկարների որպես նմուշ մեզ մոտ պետք է առաջինը համարել Տաճարի բեմի վրայի շարվածքը։

Բեմի երեսպատված մասը ունի մոտ 11,3 մետր երկարություն (ներքևում), պատի մարմարի հաստությունը մոտ 10 սմ. է, բարձրությունը միջին մասում՝ մոտ 130 սմ. է։ Բեմը երկու կողմից ունի 5-ական աստիճաններ, որոնք մոտ 30-ական սմ. բարձրություն ունեն։ Ո՛րտեղից են բերված այս մարմարները, Այս հարցը առանձին ուսումնասիրության կարիք ունի։ Նկատենք միայն, որ որոշ չափով սրանք հիշեցնում են մեր Աղամզալուի մարմարային օնիքսները։


Թուրքովին այլ մարմարներից են պատրաստված Մայր Տաճարի մուտքի մոտ եղած տապանաքարերը։ Այդ մասում, առաջին տապանաքարը պատկանում է Տ. Տ. Գևորգ Ե Տփիսեցուն։ Նրա վրա կա 1911—1930 թվարկությունը։ Սա եղած մարմարային օնիքսներից ամենադեղնավունն է։ Ուշադրությամբ զննելիս նկատվում է, որ նա դեղին չէ. այդ գույնը առաջացել է տարիներ հետո։ Տապանաքարը բաց կանաչավուն է, ան-


¹ Սիմեոն Կարապետյան, Երևան, էջ 27։

² Ուլենցի, Մեկզգապատում, Բ, էջ 2857։




ԿՈՇԱՎԱՆՔ
ԿԱՌՈՒՑՎԱԾ 1191 — 1213 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ





በጥቅምት ፳፻፲፱ ዓ.ም. ለጥቅምት ፳፻፲፱ ዓ.ም. ለጥቅምት ፳፻፲፱ ዓ.ም.

Ե՛ր, արե՛ք, Գրիգոր Ավագյան



նշան դեղնավուն երանգով: Տապանաքարը ունի 200 սմ. երկարություն և 68 սմ. լայնք: Սա միակ տապանաքարն է, որի վրա դրված է քանդակող վարպետի մասին հիշատակություն:

Մայր Տաճարի գլխավոր՝ արևմտյան մուտքի բոլոր տապանաքարերը դարձարված են հայրապետական թագով, խաչերով, հովվապետական դավադաններով և ունեն տարբեր ձևի հոյակապ դարձաքանդակ-փորագրություններ: Գեորգ Ե-ի տապանաքարի կողքին դտնվում է Մակար կաթողիկոսի տապանաքարը. նա կրում է 1813—1891 թվականը: Տապանաքարն ունի 192 սմ. երկարություն, 85 սմ. լայնություն և 19 սմ. բարձրություն:

«Ամենայն Հայոց հայրենասեր կաթողիկոս» Գեորգ Զ-ի տապանաքարը կրում է 1868—1954 թվականը. սա բավական մանրահատիկ լավ հղկված բազալտ է, երկարությունը 192 սմ., լայնությունը 85 սմ. և բարձրությունը 19 սմ. է:

Զորեղյան կաթողիկոսի տապանաքարի կողքին է դտնվում Մկրտիչ Ա Վանեցու՝ «նուազող Վշտին Հայրենեաց» հորմյան Հայրիկի գերեզմանաքարը. նա կրում է 1820—1907 թվականը. սա մանրահատիկ սպիտակ մարմար է, որը նման է Սանահինի վանքում եղած հուշատախտակներին: Նա ունի հիանալի փորագրումներ, ինչպես նաև տապանաքարին հատուկ թագի ու խաչի փորագրումը՝ վերևում: Տապանաքարը 190 սմ. երկարություն, 83 սմ. լայնք և 18 սմ. բարձրություն ունի: Դեղին մարմարային օնիք-սից է ներսեռ Ե Աշտարակեցու՝ «Պաշտպան Հայրենեաց» կաթողիկոսի տապանաքարը: Նրա վրա կա 1761—1857 թվականը. դարձված է առանձնապես խնամքով կատարված քանդակներով. ունի $192 \times 65 \times 13$ սմ. չափեր:

Առանձնապես ճոխ վարդերով փորագրություն ունի Դանիել Ա Պալազետեցու տապանաքարը, որի վրա կա միայն 1808 թվականությունը՝ նրա մահվան թվականը: Տապանաքարը ունի $162 \times 69 \times 23$ սմ. չափերը: Այսպիսով Տաճարի մուտքին չհասած, նրա աջ մասում կա 6 տապանաքար: Մայր Տաճարի մուտքի ձախ մասում տեղավորված է Գեորգ Դ Կոստանդնուպոլսեցու տապանաքարը՝ 1813—1882 թվականով. նա նույնպես մարմարային օնիք է դեղնավուն գույնի՝ $185 \times 84 \times 14$ սմ. չափերով:

Տ. Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցու 1845—1910 թվականով տապանաքարը սպիտակ տիպիկ մարմար է մանրահատիկ առանձնավոր կառուցվածքով: Սա նման է հորմյան Հայրիկի տապանաքարին և ունի $194 \times 62 \times 19$ սմ. չափերը: Իր գույնով մյուս-

ներից տարբերվում է Հովհաննես Բ Կարոնցու տապանաքարը: Սա կրում է 1842 թվականը. նա «դեղին» մարմարային օնիք-ների համեմատությամբ ունի ավելի բաց սպիտակավուն գույն. նրա վրա նույնպես չեն նկատվում հողմահարման հետքեր. չափսերն են $165 \times 71 \times 10$ սմ.:

Այսպիսով, Մայր Տաճարի գլխավոր մուտքի ձախ մասում դտնվում է 3 տապանաքար, որոնցից մեկը դեղին մարմարային օնիքս է, մյուսը սպիտակ մարմար և երրորդը նույնպես սպիտակավուն մարմարային օնիքս է: Սրանք բոլորն էլ դարերի ազդեցությունը չեն կրում:

Գայանեի վանքում ևս կան տապանաքարեր, հուշագիր տախտակներ, մեծ մասը՝ մարմարային օնիքսներ: Շատերը տեղական մարմարներ են (գլխավորապես Աղվերա—Արդաթան): Վանքի գավթում, կաթողիկոսների տապանաքարերի կողքին, կան նաև սեփական անձանց տապանաքարեր, որոնք բոլորն էլ լավագույն մարմարային օնիքներ են: Տապանաքարերը մի շարքով են: Եթե մոտենանք գավթին, ապա տապանաքարերը դասավորված են աչից սկսած, հետևյալ հերթականությամբ.

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տապանաքարով է սկսվում այս շարքը: Սա մյուսների համեմատությամբ ավելի սպիտակ է, երկարությունը՝ որոշ անկյան տակ, մոտ 43 սմ.—ով մեկ և լայնությունը 2 տեղից կտրված է այս քարը: Տիպիկ մարմարային օնիքս է. նրա վրա կա 1780—ՌԲԻԹ թվականը, որ Երևանցու վախճանվելու թվականն է: Տապանաքարը $129 \times 48 \times 5$ սմ. չափսերի է:

Երկու ոչ միմյանց շարունակությունը կազմող կտորներից է կազմված հաջորդ գերեզմանաքարը. չնայած նրա վրա եղած տառերը լավ կարդացվում են, բայց այնուամենայնիվ պատկանելիությունը դժվար է որոշել, բառերը ամբողջական չեն: Տապանաքարի վրա կա գավազանի փորագրումը, ինչ որ ցույց է տալիս, որ դա կաթողիկոսի տապանաքար պետք է լինի:

Ղուկաս կաթողիկոս Կարնեցու տապանաքարն է հաջորդը, որն ունի 1779—ՌԶԹ թվականը և $135 \times 51 \times 11$ սմ. չափսերը:

Էջմիածնի սինոդի դատախազ Թ. Հովսեփյան—Ղորղանյանի տապանաքարը, որը 1842 թվականն է կրում. սրա անկյունները քիչ կտրված են, $66 \times 76 \times 10$ սմ. չափսերով:

Հովսեփ արքեպիսկոպոս Արղուժյանի տապանաքարը կրում է 1801 թվականը՝ $128 \times 60 \times 15$ սմ. չափսերով:

Տեղապահ Բարսեղ Աշտարակեցու տապանաքարը նման է մյուսներին՝ կրում է

1812 թվականը և ունի $125 \times 71 \times 15$ սմ. չափսերը:

Խորհն կաթողիկոսի գերեզմանաքարը Արզաքանի մարմարից է: Այդ քարի մոխրագույն ընդհանուր մասսայի վրա լավ նկատվում են ավելի մուգ երկար զծեր և ամբողջական շերտեր. կրում է 1873—1938 թվականը և ունի $145 \times 58 \times 15$ սմ. չափսերը:

Գավիթ կաթողիկոսի մարմարային օնիք-սե տապանաքարը 1817 թվականն է կրում: Սրա վրա, ներքևի մասում, զգացվում են աննշան հողմահարման հետքեր: Տապանաքարը $122 \times 60 \times 10$ սմ. չափսի է: Իշխանուհի Ոսկե Խաթուն էնակոլոփյանցի տապանաքարը 1829 թվականն է կրում: Տապանաքարը կտրված է, մի մասը նորից կպցրել են: Այս տապանաքարը նման է Մայր Տաճարի մոտ եղած Հովհաննես Կարաբեյի գերեզմանաքարին:

Մատթեոս Ա կաթողիկոսի տապանաքարը իր գեղարվեստական ձևավորումով տարբերվում է մյուսներից: Նախ, այս քարը շատ լավ է պահպանվել, լավ զգացվում է նրա օկզրնական փայլը. եղած քանդակները հուսկապ կատարելությամբ են, փորագրված են թագ, խաչեր և առաջին անգամ նկատվող մի քանի շքանշաններ: Այս տապանաքարը բոլոր եղած քարերից ամենից շատ լուսաթափանցելիություն ունի, նա կրում է 1865 թվականը, լավ նկատվում է փորագրող վարպետի արվեստի կատարելությունը: Տապանաքարը $170 \times 85 \times 8$ սմ. չափսերն ունի:

Ղազար Զահկեցու 1751 թվականը կրող տապանաքարը սպիտակավուն գույն ունի, երկարությամբ 112, լայնությամբ 51 և բարձրությամբ 10 սմ.:

Հակոբ Շամախեցու 1763—ՌՄԺԱ թվականը կրող տապանաքարը սպիտակ մարմար է. չափսերը $135 \times 58 \times 10$ սմ. են. անկյուններում նկատվում են աննշան կտրվածքների հետքեր:

Այսպիսով, Գայանեի վանքի զավթում եղած 11 տապանաքարերն էլ հիմնականում

նման, սպիտակավուն մարմարային օնիքսներ են:

Հիշենք թեև Կաթողիկոսի գերեզմանաքարը 1869 թվարկությամբ, որը նույնպես նման է Մայր Տաճարի գեղին մարմարային օնիքսներին. սրա բնական գույնը նույնպես քիչ մուգ կանաչավուն է եղել և դրսից այժմ դեղնավուն գույնի է:

Գայանեի գերեզմանատանը, քացի վերոհիշյալներից, գտնվում է նաև մի կլոր հուշատախտակ և. Արծվյանի որդու՝ Վարդանի գերեզմանի վրա. սրա նման են և մի քանի ուրիշներ, որոնք նույնպես մարմարային օնիքսներ են: Մի փոքր մուգ կանաչավուն գույնի, առաջին հայացքից կարծես նման չեն կաթողիկոսների գերեզմաններին, բայց ուշադիր զննումից երևում է, որ սրանք վերահիշյալների փոփոխականներն են:

1956—1962 թվականներին, Վազգեն Ա Կաթողիկոսի նախաձեռնությամբ, էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության աշխատանքներում լայնորեն օգտագործվեցին և՛ տեղական և՛ իտալական մարմարներ:

Մայր Տաճարի հատակը սալապատվել է Բշենի, Կույբիշեի, Խոր Վերապի, Աղվերանի և Մարմարասարի մարմարի սալերով:

Ավագ Սեդանը վերակառուցվել է իտալական մարմարով, իսկ Իջման Սեդանը՝ իտալական օնիքս մարմարով:

Նոր Վեհարանի վերակառուցման աշխատանքներում օգտագործվել են տեղական, վրացական և իտալական մարմարներ:

Վեհարանի նախամուտքը երեսապատվել է Աղվերանի մարմարով: Առաջին հարկի մեծ աստիճանավանդակի շուրջը օգտագործվել է վրացական մարմար:

Գլխավոր աստիճանավանդակների հարթակները և ճաղերը երեսապատվել են իտալական և Աղվերանի մարմարով:

Գահասարհը երեսապատվել է Աղիգզեկովի Ֆիլզիտ տուֆով, իսկ հատակը՝ իտալական օնիքս մարմարով:

Հյուրասրահների հատակների սալապատման համար օգտագործվել են իտալական զանազան գույնի մարմարներ:





ԱՐՓԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՆՆԳԻՒ ԼՍՏԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հիսարհագրական դիրքի և պատմական պայմանների բերմամբ, շատ հին ժամանակներից սկսած, Հայ ժողովուրդը շփման մեջ է եղել հարևան պարսիկների հետ:

Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ խոսում է պարսից առասպելների՝ Բյուրասպի, Ածղահակի, այսինքն Զոհակի մասին: Պատմահայրը շատ լավ ծանոթ է եղել պարսից առասպելներին, որոնք հետագայում, ԺԱ դարում, Ֆիոդուսու կողմից մշակվում են ու դառնում «Շահնամ» դուցազններգական ստեղծագործության հիմքն ու առանցքը: Պարսկական առասպելների ամենահին գրառումը Զ դարից է, մինչդեռ Խորենացին և դարում արդեն լավ ծանոթ է եղել նրանց, և ոչ միայն Խորենացին, այլև Մահակ Բագրատունին, որը խնդրել է Խորենացուն գրի առնել ու մեկնել դրանք: Խորենացին ոչ միայն գիտե Բյուրասպի Ածղահակի պատմությունը, որ նույնությամբ պատմում է Ֆիրդուսին, այլև Ռուստամին, սկսած նրա ծագումնաբանությունից մինչև ահավոր ուժն ու զորությունը¹:

Հետագայում Կոստանդին Երզնկացին գրում է ոտանավոր «Շահնամ»-ի լսիով և կցում հետևյալ ծանոթությունը. «Այր մի կայր, որ Շահ-Նամայ ասէր ձայնով: Հայ եզրայրք խնդրեցին, թէ ի Շահ-Նամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ: Ես շինեցի

զրանքս դայս: Ի Շահ-Նամայի ձայն կարդացէք»²:

Ֆրիկն իր բանաստեղծությունների մեջ ոչ միայն օգտագործում է պարսկերեն բառեր, այլև մի ամբողջ քառյակ, որը երկար ժամանակ մեր բանասերների կողմից ոչ միայն չէր վերծանված, այլև անհայտ էր աղբյուրն ու հեղինակը: Տիրայր արքեպիսկոպոսի շանքերն այդ ուղղությամբ, ինչպես և Միհրդատ Թիրյաքյանի մասնակցությունն անհետևանք էին անցել: Սակայն վերջերս (1956 թ.) պարսկագետներ Վ. Ավթանդիլյանն ու Հ. Փափագյանը կարողացել են կարդալ քառյակի առաջին տողի աղավաղված երեք բառերը, և պարզել, որ Ֆրիկի մոտ դրան հաջորդող քառատողը պարսկերեն թարգմանությունն է: Պարսկագետ, բանասեր Բ. Զուգասըգյանը գտնում է, որ քառյակի թարգմանիչը Ֆրիկն է, սակայն հեղինակի հարցը վերջնականապես դեռևս չի լուծված, քանի որ հեղինակ համարվող անծանաթություններն ավելի ուշ են ապրել, քան քառյակի հայտնի դառնալը:

Հայ գրողները միշտ էլ սիրով են հետևել հարևան ժողովուրդների, տվյալ դեպքում պարսիկների հարուստ գրականությանը, որի լավագույն արտահայտությունն են հանդիսանում Իրանի կյանքը պատկերող Բաֆ-

¹ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1940 թ., էջ 57—58, 277:

² Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր քերթվածները, հրատարակեց Հ. Մ. Պետուհեան, Վենետիկ, 1905, էջ 128 (տե՛ս նույնը Ֆրիկ, «Դիվան», Նյու-Յորք, էջ 128):

Ֆուժ, Վ. Փափազյանի⁴ վեպերը, հեքիաթներն ու նամակները, Քումանյանի⁵, Իսահակյանի⁶ պոեմներն ու առասպելները, Գ. Սարյանի⁷ արեւելյան բալլադների շարքը և այլն:

Ինչպես անցյալ, այնպես էլ ժամանակակից սովետական և արտասահմանյան հայ գրողները, թարգմանիչներն ու գրականագետները իրենց մասնակցությունն են բերել նաև պարսկա-թաշկական կլասիկների թարգմանության գործին (Լ. Մեարուպ, Լ. Միրզայան, Մ. Մաքսուդյան, Փառնակ, Ս. Զթլյան, Ա. Մելիք-Վարդանյան, Գ. Ասատուր, Վ. Նորենց, Ս. Տարոնցի, Զ. Հովհաննիսյան, Զ. Ղուկասյան, Ս. Ումարյան, Մ. Խերանյան, Ա. Գրաշի և ուրիշներ), թարգմանելով Ֆիրդուսու, Խալամի, Հաֆեզի, Ռուդարիի, Խաթանիի և այլոց ստեղծագործություններին:

Ֆիրդուսու կյանքի պատմությունը հուզել է մեծ հեղինակների, Հայտնի են գերմանացի բանաստեղծ Զ. Հայնեի, ռուս գրող Վ. Օւսյաննիկովի, հայ մանկագիր Աթաբեկ Խընկոյանի և ուրիշների Ֆիրդուսու մասին ստեղծած գործերը: Հայնեի «Ֆիրդուսու» լափածո ստեղծագործությունը հայ գրողների կողմից ունեցել է մի շարք թարգմանություններ ու փոխադրություններ, որ կատարել են Բաֆֆին, Ղ. Աղայանը, Պ. Միքայելյանը և ուրիշներ: Բաֆֆին ոչ միայն թարգմանել է Հայնեի «Ֆիրդուսու» բանաստեղծությունը, այլև հայերենի է փոխադրել Վ. Օւսյաննիկովի «Ֆիրդուսու» արձակ ստեղծագործությունը:

Հատկանշական է Զ. Աճառյանի կազմած «Ֆիրդուսու» ժողովածուն, որտեղ հավաքված են իր կողմից «Շահնամե»-ից քաղված ու թարգմանած այն հատվածները, որ վերաբերում են հայերին ու Հայաստանին⁸, ինչպես և Սաադիից ու Խալամիից կատարած թարգմանությունները, որոնք անտիպ են:

³ «Ժամանակագրություն Պարսկաստանում» նամակների շարքը, «Խազ-փուշ», «Բիրի-Շարարանի» նկարագրությունները և այլն:

⁴ «Ալեմգիր», «Աղբրֆեղա» (վեպ հայ-պարսկական կյանքից), «Փերուզե» պարսկական հեքիաթը և այլն:

⁵ «Թմկաբերդի առումը», «Թագավորն ու շարշին» և այլն:

⁶ «Շաքիհ Սուլթան Մեհմեդ» լեզենգը, «Լեյլի և Մեջլում» բալլադը, «Արու-Լալա-Մահարի» պոեմը և այլն:

⁷ «Գուլիսանդա», «Գուլիսարա», «Իրանի», «Թարգանի մորոքը», «Շահն ու Մեշնունը», «Ժրգիշ Սալվարին» և ուրիշներ:

⁸ «Ստար աղբյուրները հայերի մասին», № 4, «Պարսկական աղբյուրներ, Ֆիրդուսու, քաղեց և թարգմանեց Զ. Աճառյան, 1944 թ., Երևան (87 էջ):

Վրթանես Փափազյանը շատ գեղեցիկ բանաստեղծական մշակման է ենթարկել «Շահնամ» ու «Երիկն» արաբական արձակ գրույցը և «Ջոհան» լեզենգը «Շահնամե»-ից: Ավետիք Իսահակյանը թարգմանություններ է կատարել Հաֆեզից, Արու-Ալ-Ալա Մահարիից և մշակել մի շարք արեւելյան առակներ ու գրույցներ, իսկ Հովհաննես Քումանյանը թարգմանել է Խաթանիի քառյակներին:

Հայ գրական հասարակության հայտնի են ինչպես անցյալ, այնպես էլ ներկայիս կատարված «Շահնամե»-ից մի շարք թարգմանություններն ու ուսումնասիրությունները, Խալամի քառյակների բազմաթիվ հատարակությունները, Հաֆեզի, Ռուդարիի քառյակները, բանաստեղծություններն ու ներդրողները և վերջապես Աթթարի սուֆական ու Ասադիի բարոյախոսական գրվածքները:



Սաադին իրանական դասական գրականության խոշոր գեմքերից մեկն է, որ ապրել է 1184—1292 թվականներին: Նա իրավամբ լայն տարածում է գտել ոչ միայն իր հայրենի երկրում, այլև ամբողջ Արևելքում: Եվրոպայում և Ռուսաստանում: Սաադիի գրչին են պատկանում բազմաթիվ լիրիկական բանաստեղծություններ, ներքողներ և քառյակներ: Սակայն նրա խոշոր գործերն են կազմում «Սեիր-Նամե»-ն, «Բուսթան»-ն ու «Գուլիստան»-ը, իսկ վերջինս հանդիսանում է հեղինակի ստեղծագործության պսակը:

«Գուլիստան»-ը արձակ երկ է, միահյուսված լափածոյով, ըստ որում լափածոյի որոշ մասը գրված է արաբերեն: Արաբերեն է գրված նաև նրա բանաստեղծական երկերի մի զգալի մասը, որպես իր ժամանակի ընդունված բարձր գրական և գիտական լեզու:

Սաադին, շնորհիվ իր երկարամյա կյանքի ընթացքում կուտակած մեծ փորձի, ստացած բարձր կրթության, երկարատև ճանապարհորդությունների, լայն հայեցողության, դիտել է կյանքն իր բոլոր կողմերով, մանրազնին ուսումնասիրել հասարակության տարբեր շերտերի մարդկանց, և իր «Գուլիստան»-ում. «Նալիստոբն» արտացոլել նրանց ներաշխարհը, բարքերը, կենցաղն ու գործունեությունը: Նա, որքան բարյացակամ ու սիրալիր է դեպի աղքատները, խեղճերն ու թշվառները, նույնքան խիստ ու անողորմ է դեպի բարձրաստիճան պաշտոնյաները, վեպիրներն ու թագավորները:

Սաադիին հուզում են մարդու սոցիալական վիճակը, նրա նկատմամբ ցուցաբեր-

վող անարդարությունը, շահագործումն ու կեղեքումը: Գրքում մի շարք տեղեր նա դարձյալ թողնում է մարդու կողմից մարդու շահագործման դեմ, ստրկատիրության դեմ և Աստծու գաղափարներին հանձնում այդպիսիներին: Նա բարձր է գնահատում մարդու լավ արարքները, առաքինությունը, բարոյականությունը, աստվածավախությունը:

Նա, որքան դաժան է իր քննադատության ու ծաղրի մեջ, որքան բարի իր խրատներում ու հորդորներում, նույնքան նուրբ է ու քնքրող՝ իր լիբերալական հատվածներում: Սկզբնական ժամանակներում Մաադիի համար ամենամեծ քաղցրությունն է և պատճառ՝ գոյության մեջ հարատևելու ջկան ավելի լավ օրեր, քան սիրո ժամանակ, սերն սկիզբ ունի և վերջ չունի: Նրա սիրո զգացումները բարձր են ու փխրական, նրա համար մայրական զեփուկությունը քաղցր է ինչպես վարդի բուրմունքը, սոխակի սերը, կանաչ դաշտերն ու կապույտ երկինքը:

Մաադիի «Գոլեստան»-ն ունի 200-ից ավելի թարգմանություն՝ հնդկերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, հինդի, իտալերեն, լեհերեն, թուրքերեն, ռուսերեն և այլ լեզուներով, որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի հրատարակություն՝ առաջարկով, ժանրթարգմանությամբ, վերծանումներով, բառարանով՝ կազմված հայտնի արևելագետների կողմից, ինչպիսիք են Ազամ Օլեարին, Գեորգի Գենցը, Հարինգտոնը, Գյատվինը, Զեմա Դյումուլենը, Զոն Կոքսը, Սիմելեն, Իստվիգը, Շպենգերը, Գեյզերներին, Ֆրանկելը, Զոնստեյնը, Նասաու Լիսը, Հենրի Մասսեն, Զոն Փելցթը և շատ ուրիշներ:



Իրանական գրականությունը դարձել է ողնշարն աղբյուր համաշխարհային խոշոր գեներելի համար Այն իր արտացոլումն է գտել նաև հայ գրականության մեջ: Հատկանշական են վարպետի՝ Ավետիք Իսահակյանի «Օմար հայամի վեճը Աստծու հետ» առասպելը և «Մաադի» վերջին գարունը, արձակ պոեմը:

Մաադիի «Գոլեստան»-ը հանդիսացել է պարսկերեն լեզվի ուսուցման ձեռնարկ թուրք և հայկական միջնակարգ և բարձրագույն դպրոցներում: Հայտնի է հաշատուր Արովյանի վկայությունն այն մասին, որ «... թուրքերն իրենց մզկիթներում... թուրքերենի անվան տակ մեր բարի մոլլաների մոտ կարդում են «Գոլեստան»-ը, Հաֆեզը,

Քարիք Նադիրի և պարսիկ այլ հեղինակներ...»:

Այս սկզբունքով առաջնորդվելով է թեև, որ ականավոր գիտնական Հրաչյա Աճառյանը ևս նրանի Պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Արևելյան լեզուների և գրականության բաժնում պարսկերեն լեզվի համար որպես հիմնական դասագիրք լինել էր Մաադիի «Գոլեստան»-ը:



Ռուսաստանում Մաադիից առաջին անգամ թարգմանություններ կատարել է Մատվեյ Կամազովը (Մատթեոս Ղամազյանը), որ մասնագիտությամբ լինելով ինժեներ, զբաղվել է նաև գրականությամբ և շնորհիվ արևելյան ու եվրոպական մի շարք լեզուներին իմացության, 1831 թվականին Քիֆլիսում գինյորական ծառայության մեջ գտնված ժամանակ, Մաադիի բանաստեղծություններից մի քանիսը թարգմանել է ռուսերենի, որոնցից «Քախիժ» բանաստեղծությունը տպագրվել է մի քանի անգամ: Նա այնքան է հրապուրվել Մաադիով, որ իր կողմից մի բանաստեղծություն ձևել է նրան՝

«Գոլեստան»-ի առաջին ռուսերեն ամբողջական թարգմանությունը պատկանում է Ստեփանոս Նազարյանցին, որ հրատարակվել է 1857 թվականին Մոսկվայում: Այնուհետև «Գոլեստան»-ն ունեցել է մի շարք թարգմանություններ ու հրատարակություններ, որոնք շարունակվում են մինչև մեր օրերը՝ Կ. Լամբրոսի (1862), Ի. Խուժոգորովի (1882), ավելի ուշ Ե. Ֆերտիսի (1922), սովետական շրջանում՝ 1949, 1954, 1957, 1958, 1959 թվականներին: Մոսկվայում, Ստալինարագոյում (Գոշմբե) և այլուր:

Հայ գրական միտքը ևս մեծ հետաքրքրություն է ցուցաբերել զեպի իրանական խոշոր բանաստեղծն ու մտածողը, թարգմանելով մի շարք բանաստեղծություններ և առանձին հատվածներ «Ռուսթան»-ից և «Գոլեստան»-ից: Մաադիի թարգմանությամբ զբաղվել են հայտնի թարգմանիչներ Հովհաննես Խան Մասնհյանը, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը, դոկտոր Հարություն Քիրյանյանը, Հովսեփ Միրզայանը, պրոֆեսոր Ռուբեն Արքաճամյանը, բազմապատակ գիտնական Հրաչյա Աճառյանը և ուրիշներ:

Մաադիի ստեղծագործությունների ամենավաղ թարգմանությունը հայերեն լեզվով

* Խ. Արովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. 5, Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Երևան 1950 թ., էջ 193.

10 «Կոմունիստ», Քաղս, 1958, № 127, էջ 4 և Журнал «Сын отечества», М. 1837, стр. 429—430.

հանդիպում ենք Կալկասթայում հրատարակվող «Ազգասեր» հանդեսի էջերում, 1846—1847 թվականներին, ենթադրաբար Մ. Գ. Թադևոսյանի թարգմանությունում: Այնուհետև թիֆլիսի «Մուրճ», «Երևան» հանդեսներում և «Զարթոնք» գրական-գեղարվեստական ժողովածուում, Փարիզի «Անահիտ»-ում, Քեդդիկի «Ամենուն տարեցույց»-ի և Հրանտ ու Զապել Ասատուրների կազմած «Գանձարան» դասագրքի էջերում (Կ. Պոլիս): Իսկ Քեհրանի «Նոր գաղափար» և «Երևան» հանդեսները, «Վերածնունդ» շաբաթաթերթը, «Արթ» թերթը, «Նավասարդ» ժողովածուն հաջորդաբար հրատարակում են Սաադիից հատվածներ: Հ. Միրզայանի, Ս. Ումարյանի, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությունները:

Սակայն «Գուրստան»-ի ամբողջական հրատարակությունը առաջին անգամ լույս է տեսել 1929-ին Նյու-Յորքում, որևէ չափով թիրաքյանի թարգմանությամբ, որն ավարտված է եղել 1910 թվականին: Եվ հաջորդ հրատարակությունը լույս ընծայեց Հայաստանի Պետական հրատարակչությունը 1958-ին, Ա. Մելիք-Վարդանյանի թարգմանությամբ:

Ինչպես նախորդ թարգմանությունները, այնպես էլ այս թարգմանությունը հանդիսանում է մեծ ներդրում հայ թարգմանական գրականության դանձարանում:

«Գուրստան»-ի թարգմանիչները Հ. Թիրաքյանը, Մ. Մաքսուդյանը, Ա. Մելիք-Վարդանյանը, Ս. Ումարյանը, Հ. Աճառյանը և մյուսները մեծ ջանք ու աշխատանք են ներդրել առերևույթ պարզ թվացող, բայց բայց էության խիստ բարդ ու դժվարին սույն աշխատանքը հաջողությամբ պսակելու համար, և այնքա էլ ասել, որ ընդհանուր առմամբ թարգմանիչներին այդ հաջողվել է: Նրանք ձգտել են ամեն կերպ հարազատ մնալ հեղինակի ոչ միայն ոգուն, այլև ձևին, հիմնականում պահպանելով արձակ ու շափածո հատվածները, գեղարվեստական պատկերները, ներքին հանգամանքները, սակայն երբեմն անհրաժեշտորեն կատարելով լուրջ մոտեցում, որի ընթացքում մերթ արձակը թարգմանել են սեղմ ու ամփոփ, սակայն դրա փոխարեն ձգձգել ու ավելորդել շափածոն, անշուշտ գիշերով տաղաչական արվեստին՝ բարենշնչությունը, հանդիս ու շափիլ, և մերթ էլ տարվելով բանաստեղծական արվեստով, հեռացել հեղինակի արտահայտած մտքերից:

Զնայած թարգմանիչների մեծ զգուշության ու բարեխղճության, կան մի շարք հատվածների, քառյակների բացթողումներ, ոչ ճիշտ թարգմանություններ, իմաստի շեղումներ, թերի նախադասություններ, ավել

յորդ բառեր, լեզվական կանոնների մեղանշումներ, չափածոն արձակի վերածելու դեպքեր:

Ինչ վերաբերում է թարգմանական արվեստին, ապա յուրաքանչյուրն ունեցել է իր մոտեցումը: Հ. Թիրաքյանը ձգտել է նույնությամբ պահպանել հեղինակի թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական կողմը, ինչպես և ամբողջականությունը, մինչդեռ Ա. Մելիք-Վարդանյանը զանց է առել որոշ հատվածների, հատկապես արարերեն բանաստեղծական տողեր, երբեմն շեղվել է բուն մտքից, կամ բանաստեղծական շափն ու հանգր ապահովելու համար ծանրաբեռնել ավելորդ բառերով:

Թարգմանիչ Թիրաքյանը ավելի զգույշ է վարվել և աշխատել է որքան կարելի է հաճախ մնալ հեղինակի լեզվին, ոճին և յուրահատկությանը, ինչպես և հայերենի անադարտությունը, մինչդեռ Մելիք-Վարդանյանը ավելի ազատ է աշխատել, որի ընթացքում բաց է թողել մի շարք հատվածներ, հատկապես արարերեն քնյթեր և իմաստություններ, որոնց թարգմանությունն ավելի մեծ աշխատանքի կարոտ է, ձգձգել է նախադասությունները, կրկնապատկել շափածո տողերը, չկարողանալով ամփոփ ու սեղմ տալ հեղինակի մտքերը:

Թարգմանական սխալները, ինչպես և բացթողումներն ու հավելումները ավելի շատ առկա են Մելիք-Վարդանյանի մոտ: Զան Թիրաքյանի թարգմանության մեջ: Հոմանիշներին, տարբերակներին, ածականների օգտագործման դեպքում Թիրաքյանն ավելի անկաշկանդ է, այսինքն բառապաշարն ավելի առատ է ու հարուստ, որի հետևանքով, ի հակադրություն Մելիք-Վարդանյանի, ավելի սեղմ ու գեղեցիկ է արտահայտել մտքերը:

Իսկ ինչ վերաբերում է թարգմանության փոխադրված լեզվին, ապա Թիրաքյանի մոտ այն անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է, քան Մելիք-Վարդանյանի թարգմանությունը:

«Գուրստան»-ի թարգմանությամբ զբաղվել են նաև Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը, ակադեմիկոս Հ. Աճառյանը և ուրիշներ: Զնայած սրանց թարգմանությունները հատվածային են, բայց որոշակի է մոտեցումն ու թարգմանական որակը:

Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի թարգմանությունից մեզ հայտնի են մի քանի հեքիաթներ և առանձին հատվածներ տարբեր գլուխներից, որոնց մեր պրպտումների ընթացքում հանդիպել ենք «Անահիտ» հանդեսում (Փարիզ) և «Երևան» ամսագրում (Թիֆլիս): Թարգմանություններն ընդհանուր առմամբ կատարված են քնադրին հարա-

զատ, գրեթե զերծ ձղձկումներից և ավելորդություններից, առավել բարեխիղճ դեպի թաղամասական լեզուն՝ հայերենը, որոշ տեղեր պահպանելով ներքին հանգավորումը, նույնիսկ արձակ էջերում, որ շատ բնորոշ է պարսկերենին:

Եթուլեստան-ի թարգմանությունամբ զբաղվողներից է նաև ակադեմիկոս Հ. Աճառյանը, որի թարգմանությունը, գծրախտաբար, ամբողջական չէ և անտիպ է, ըսյց առանց վիճադահություն, կարելի է համարձակորեն ասել, որ ամենակատարյալն է: Աճառյանի թարգմանությունը նախ միանգամայն հարազատ է ընագրին, երկրորդ՝ գերծ է ավելորդ բառերից, չի դիմել կողմնակի միջոցների բուն միտքն արտահայտելու համար, տվել է միանգամայն հստակ, ճիշտ և որ ամենակարևորն է՝ գեղեցիկ, բանաստեղծական, պահպանելով պարսկական պոեզիայի համն ու հոտը: Մնում է ակոսոսալ, որ հիդիսակի բաղմադրադվածությունը թույլ չտվեց ամբողջացնել և հրատարակել այս թարգմանությունը: Մեր ձեռքի տակ եղած հատվածները թույլ են տալիս ենթադրելու, որ այդ թարգմանությունը Եթուլեստան-ի թարգմանությունների պլուսկը կհանդիսանար:

Հատկանշական է, որ Սաադիի թարգմանիչները հանդիսանում են տարբեր բնագավառների ու մասնագիտությունների անձնավորություններ: Այսպես, Շեքսպիրի հայտնի թագմանիչ Հովհաննես Խան Մասեհյան, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյան, բժիշկ Հարություն Թիրյաքյան, խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյան, արեւելագետ Ռուբեն Արրահամյան և ուրիշներ: Սակայն շնայած այսպիսի բաղմադանության, բոլորին էլ հավասարապես հետաքրքրել և հուզել են Սաադիի ինչպես արձակ, բարոյախոսական գրվածքները, այնպես էլ շափածո, հուզական բանաստեղծությունները:

Բոլորովին տարօրինակ չէ, որ Շեքսպիրի մեծ տաղանդով տարված ու ոգեւորված Հով-

հաննես Խան Մասեհյանը կարող էր հրապարակել նաև Սաադիի արեւելյան մոտիվներով շարահյուսված խոհերով ու զգացումներով, և կամ բժիշկ Հարություն Թիրյաքյանը, որ կոչված էր մարդկության ամենամեծ օգտակարության, կարող էր նույնչափ սիրել ու իր կյանքի զգալի մասը հատկացնել իրանական պոեզիային ու գրականությանը՝ մարդկային հոգու թափանցման:

Անշուշտ շատ բնական է, որ իր կյանքն արեւելագիտությանը, հատկապես իրանական գրականության և լեզվի ուսումնասիրությանը տրամադրած և այդ ասպարեզում պրոֆեսորություն նվաճած Ռ. Աբրահամյանը, իր կատարած բաղմապիսի ուսումնասիրությունների կողքին, զներ նաև հուշակավոր «Շահնամ»-ի իր թարգմանությունները: Սակայն միանգամայն տարօրինակ կարող է թվալ, որ խոշորագույն հայագետ-լեզվաբան Հ. Աճառյանը, որ իր ամբողջ կյանքը հատկացրել է լեզվագիտության և հայագիտության տարբեր հարցերի ուսումնասիրման և տվել բաղմաթիվ ու բաղմահատոր մեծածեղ աշխատություններ, կարող էր իր այդ սուղ կյանքից հատկացնել Սաադիի թարգմանությանը: Ուրեմն շպետք է գործանա, յաև, որ Շեքս Սաադիի ստեղծագործությունն իր էությունամբ լինելով աշխարհիկ և քնարական, կարող էր խոսել մի վարդապետի հոգու հետ, ինչպիսին էր Մեսրոպ Մաքսուդյանը և ոգեւորել ու մղել ընդհուպ նրա թարգմանությանը: Հետևաբար շատ բնական է, որ Սաադիի թարգմանությունները կարող էին լայնորեն ասպարեզ գտնել ինչպես Չոպանյանի «Անահիտ»-ի, այնպես էլ Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի էջերում, ինչպես Թադիսթյանցի «Ազգասեր», այնպիսի Գյուլտ ավագ քահանա Աղաճանի «Լուսմաս հանոններում»:

Թիհրանից Փարիզ, Փարիզից Պոլիս, Պոլսից Կալիաթա, Նյու-Յորք, մինչև Թիֆլիս ու Ալեքսանդրոպոլ, սկսած անցած դարի 40-ական թվականներից, Սաադին խոսում է հայ ընթերցողի հետ:





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Լ ՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԿԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Ներկայումս Հայկական ՄԱՐ Գիտությունների ակադեմիայի սիստեմում կան 38 գիտական հիմնարկներ, որոնցում աշխատում են հազարից ավելի գիտնականներ: Իրենց հետաքրքրություններով նրանք ընդգրկել են ժողովրդա-տնտեսական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող մեծաթիվ խնդիրներ:

Մեզ մոտ մշակվել են տարրային մասնիկների ֆիզիկայի, միջուկային ու տնտեսական ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, ռադիոառնագիտության, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիրառական տիկայի, առաձգականության տեսության, պլաստիկության տեսության, հիդրոդինամիկայի և այլ հարցեր: Այդ ճյուղերից շատերում Հայաստանի գիտնականները ձեռք են բերել աչքի ընկնող արդյունքներ, որոնք լուրջ ուժանդ են հանդիսանում համաշխարհային գիտության զարգացման ասպարեզում:

Հայաստանի գիտնականները ստեղծել են մի շարք խոշոր էքսպերիմենտալ հարմարանքներ, որոնցից շատերը հազվադեպ են: Օրինակ, ֆիզիկայի ինստիտուտը ստեղծել է կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման ժադնիսական հզորագույն սպեկտրոսկոպներ, շարունակում է աշխատանքները էլեկտրոնների վիթխարի օդակնան արագացուցիչի կառուցման ուղղությամբ, որը նախատեսված է վեց միլիարդ էլեկտրոն-վոլտ և ներգրավող մասնիկներ ստանալու համար:

Բյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանում տեղադրված է Շմիդտի սիստեմի եվրոպայում խոշորագույն հեռադիտակը, որն ունի կատարեալագույն ավտոմատ հարմարանքներ և կառավարվում է կենտրոնական պոլսից: Այս հեռադիտակի օգնությամբ հետազոտվում են զայնակներից՝ հեռավոր աստղային սիստեմները, որոնց լույսը մեզ է հասնում ավելի քան կես միլիարդ տարվա ընթացքում:

Գիտությունների ակադեմիան մեծ ուղադրություն է նվիրում երկրաբանական աշխատանքների ընդլայնմանը և առաջին հերթին հանքարանության հարցերի ուսումնասիրմանը, ներկայառանկան գիտությունների

ասպարեզում մեր հետազոտությունների զլխավոր արդյունքը հանքային և ոչ հանքային հանածոների, մասնավորապես մոլիբդենի, պղնձի, ոսկու, նեֆելինային սիենիտների հին հանքավայրերի լիակատար վերականգնումն է և նոր, քաղաքացիական հանքավայրերի հայտնաբերումը: Գրա շնորհիվ Հայաստանը, որն իր տերիտորիայով ամենափոքրն է միութենական ռեսպուբլիկաներից, դարձել է երկրի քաղաքացիական զործարաններից մեկը:

Արագ կերպով զարգացել է քիմիական գիտությունը: Հաջող աշխատանքներ են կատարվում անօրգանական քիմիայի, օրգանական սինթեզի, պոլիմերների քիմիայի, կենսաքանական ակտիվ միացությունների, հազվագյուտ տարրերի քիմիայի քննադամառում:

Արժանի համբավ են վայելում նույն օրգանական քիմիայի ինստիտուտի աշխատանքները: Գրանց շնորհիվ ստեղծվել են մի շարք բուժիչ պրեպարատներ, որոնք լայնորեն արմատավորվել են Մովսեսյան Միության բուժական հիմնարկներում: Վերջին տարիներս ինստիտուտը իր հավաքածուն համալրեց նոր պրեպարատներով, որոնք կլինիկական փորձարկումների են ենթարկվում երկրի շատ քաղաքներում:

Գիտնականները որոշակի հաջողության են հասնում նաև ջրավազանների մանրէակաթիլ զուլարիցման դեմ ձգվող պայքարում: Գա թույլ կտա մոնիթորինգային թաղանթներով ծածկել Սևանա լճի հայելին, նպատակ ունենալով այն պահպանել բնականին մոտ մակարդակի վրա:

Շատ հետաքրքրական աշխատանքներ են կատարել կենսաբանները: Գտնվել են միկրոօրգանիզմների նոր տեղիք տնտեսական, որոնցից ստացվում են արժեքավոր անտիբիոտիկներ, վիտամիններ և այլ մեատաբոլիտներ: Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղել բժշկիկների, պատմաբանների, հնէազգեսների, գրականագետների, լեզվաբանների, արևելագետների հետազոտությունները:

ՀԱՆԳՈՒՄ ԵՎ ՆԱԳԵՄԻՆՈՍ Վ. ՀԱՄԱՐԱՑՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ.— Վերջերս Հայաստանի Արվեստի աշխատողների

տանք բազմաթիվ էրևանցիներ լարված ուշադրությամբ ունենորենքին Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, որը տպավորություններ պատմեց վերջերս Ռուսիայի կատարած իր ուղևորության մասին:

Բուխարեստում, Ալուսում, Կոնստանդուպոլսում, Տրաքիսիայում, Կարպատներում և երկրի այլ քաղաքներում ու շրջաններում մեծ գիտնականը չեքմ հանդիպումներ է ունեցել Ռուսիայի աշխատավորների կոնկրետիվների, պիտության, կուլտուրայի և արվեստի նշանավոր գործիչների հետ: Մի շարք վայրերում, այդ թվում նաև Ռուսիայի Գիտությունների ակադեմիայում, նա հանդես է եկել տեղեկագրությունների պարունակների շուրջը գեկուցումներով ու դասախոսություններով:

Համբարձումյանն ուշադրավ դրվագներ պատմեց նաև ռուսիական դադուքի կյանքից, հայ գործիչների հետ իր ունեցած անմոռաց հանդիպումներից:

ԱԿԱՄԻՐ ԱՆՈՒՐԻ ՆՈՐԱՀԱՅԱՏԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Կարմիր բլուրի հարավ-արևելյան մասում, հուլիսի 2-ին պեղումների վերականգնելի: Գտնված է 9 մետր բարձրությամբ քարայրի վրա դրված անպարկի արձանագրություն: Այն գտնված է այն տեղում, ուր երկրաբան Ա. Դեմյոխինը 1936 թվականին հայտնաբերել էր առաջին կարմիրբլուրյան անպարկի արձանագրությունը: Արձանագրությունը դրված է եղել միջնաբերդի վերնում գտնվող տաճարի պատին և պատմում է նրա կառուցման ու անասունների զահարներության մասին:

Պակաս ուշադրավ չէ պեղված արհեստանոց-սենյակներից մեկը: Նրա հատակի տակով անցնում է ասլա-ծանկ ստորգետնյա քաղալուստիոր չառաքար: Այդտեղ հայտնաբերված են կավանքներ, որոնց մեջ կան 70 սանտիմետր բարձրություն ունեցողները: Հատակը ամբողջապես ծածկված է կոտրված խնդեղենով:

Արձանագրությունները ուսումնասիրվում են և պատրաստվում հրատարակության:

ՈՒՐԱՐՍԱԳԵՏԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Հայկական ՍՍՌ-Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բ. Պիտոբովսկին Երևան քաղաքի պատմության թանգարանում, մայրաքաղաքի աշխատավորներին համար զեկուցում կարդաց «Ուրարտական հուշարձանները և Երևանի շրջափակայում (Երևրուի, Թեյշեբախի)» թեմայով:

Իր զեկուցման մեջ Բ. Պիտոբովսկին խոսեց Սովետական Միության տերիտորիայում կազմված առաջին պետության՝ Ուրարտուի ծագման, նրա հզորության և կործանման պատմության մասին: Ապա նա նշեց Երևանի տերիտորիայում գտնվող ուրարտական հուշարձանները: Երևրուի հիմնադրման և կատարվող հնագիտական պեղումների մասին:

— Հնագիտական պեղումները, — ասաց զեկուցողը, — ցույց են տալիս, որ էրեբունիի եղել է Ուրարտայան դաշտի քաղաք-ամրոցներից մեկը, որը հիմնադրվել է մեր թվարկությանից առաջ 782 թվականին, ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի կողմից: Ուրարտական արձանագրությունները վկայում են, որ մեր մայրաքաղաքը հիմնադրվել է 2744 տարի առաջ, որի 2750-ամյակը կլրանա 1968 թվականին:

Մեր թվարկությանից առաջ 7-րդ դարի կեսերին էրեբունիից դեպի արևմուտք, այսինքն այժմյան Կարմիր բլուրի տեղում բարձրացել է ուրարտական մի նոր ռազմա-ստրատեգիական և տնտեսական նշանակություն ունեցող քաղաք Թեյշեբախի անունով:

Ջեկուցողը պատկերավոր կերպով վերլուծեց ուրարտական այդ քաղաքի պատմությունը և վերջին տարիների նախագի հայտնաբերված հնագիտական իրերի նշանակությունը:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԵՆԻԿԱ ԳԵՄԻՐԺՅԱՆԻ ՄԱՍԻՆ.— Վերջերս լույս տեսավ գրականագետ Լ. Մուրադյանի մենագրությունը Գերենիկ Գեմիրճյանի մասին:

Գեմիրճյանի կյանքն ու ստեղծագործությունը քննարկելով ժամանակի գրական շարժման մեջ, Մուրադյանը իր այլի առաջ ունեցել է հայ գրականության ավելի քան կեսդարյա պատմության նշանավոր իրադարձությունները, որոնց հետ կապված է եղել Գեմիրճյանը: Գրականագետը քանադիական մեծ աշխատանք է կատարել Գեմիրճյանի կյանքի և հասարակական գործունեության կողմերը լուսարանելու համար:

Մենագրության մեջ արվանականալավ տեղ է հատկացված Գեմիրճյանի բանաստեղծական ժառանգության քննարկմանը:

Գեմիրճյանի ստեղծագործության քննարկումը տարված է ժամանակագրական հաշորդականությամբ:

Մենագրության մեջ հեղինակը հանգամանորեն վերլուծել է Գեմիրճյանի 1920—1930 թվականների գրական վաստակը, ապա Հայրենական պատերազմի ժամանակահատվածի ստեղծագործությունները և 1944 թվականին հրատարակված «Վարդանանք» պատմավեպը:

Մենագրության մեջ խոսվում է նաև Գեմիրճյանի մի այլ պատմական աշխատության՝ անավարտ մեագած «Մեմբուս Մաշտոց» վեպի մասին:

ՈՂՎԵՏԱԿԱՆ ԼԱՅԱՍՍԱՆԻ ԳՐԱԶԻԿԱՆ.— Վերջերս լույս տեսավ արվեստագետ Մինաս Սարգսյանի «Սովետական Հայաստանի գրաֆիկան» գիրքը, որը արժեքավոր ավանդ է հայկական արվեստի ուսումնասիրության պատմության համար: Այստեղ խոսվում է հաստացանի գրաֆիկայի, գրքի նկարազարդման ու ձեռագրման արվեստի, պլակատի ու ժողդանկարչության մասին: Գիրքը քաղկացած է նրեց մասից, ունի և բնագործակ ներածական, ուր հեղինակը ժամանակագրական կարգով ներկայացնում է գրաֆիկ նկարիչներին ու նրանց լավագույն ստեղծագործությունները:

Աշխատության առաջին դրուքը ներկացնում է գրաֆիկան Հայաստանում (1920—1940 թ. թ.), Գրաֆիկական մի շարք ստեղծագործությունների, արխիվային, մամուլի էջերից քաղված նյութերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս այդ տարիների նկարիչներին, մասնավորապես Հայաստանի հեռագրական գործակալության աշխատանքների ակտիվորեն մասնակցած նկարիչների (Կ. Հալաբյան, Ս. Առաքելյան, Գ. Բրուտյան, Վ. Ախիլյան և ուրիշներ) ստեղծագործության դերը նոր կյանքի հաստատման գործում: Այնուհետև Սարգսյանը վերլուծության է ենթարկում 1920—1930 թվականների գրաֆիկայի ասպարեզում ստեղծագործող առաջատար նկարիչներին՝ Լ. Կոչոյանին, Գ. Բրուտյանին:

Տ. Խաչվանքյանի, Լ. Ղարիբյանի, Տարազորուի և մյուսների ստեղծագործությունները, ինչպես նաև այդ ժամանակ գրաֆիկայով զբաղվող Մ. Սարգսյանի, Գ. Գյուրյանի, Վ. Գալֆնյանի և մյուսների լավագույն աշխատությունները:

Ավելի լայն ու քաղաքացիական է ներկայացվում սովետական գրաֆիկան հետպատերազմյան շրջանում (1945—1950 թ. թ.):

Բնութագրելով այս նոր ժամանակաշրջանի գրաֆիկան, արվեստագետը քննություն է անում փորագրության, օֆորտի և լինոֆորագրության ասպարեզում աչքի ընկնող նկարիչների՝ Բ. Բեդրեյանի, Վ. Այվազյանի, Ա. Մամաջանյանի ստեղծագործությունները: Նա ըստ արժանի է և բարձր է գնահատում հայ գրաֆիկայի մեծանուն վարպետ Լ. Կոջոյանի արվեստը, նկարիչներ Կ. Տիրապետրյանի, Լ. Գառապյանի, Մ. Բաղդասարյանի, Ս. Սահակյանի, զուսանկարիչներ Մ. Աբեղյանի, Է. Իսահակյանի, Գ. Խանջյանի և մյուսների գրքի նկարազարդման և գեղարվեստական ձևավորման աշխատանքները:

Միևսու Սարգսյանի գիրքը առաջին լուրջ փորձն է սովետահայ գրաֆիկայի պատմության ուսումնասիրության մեջ:

ՄՈՏ ԵՐԵՎԱՆԻ ԳԱՍՏԻՆԻՐԸ.— Այս օրերին զբախանում ենք արտակարգ աշխուժության է տիրում, փոքրիկ գեղարվեստը շտապում են ձեռք բերել նոր ուսումնական թարվա դասագրքերը:

Պլանային հրատարակում է այս տարի Հայաստանի և եղբայրական Հանրապետությունների Հայկական դպրոցների աշակերտությանը կտա զանազան առարկաների 95 անուն՝ 2 900 000 օրինակ դասագիրք:

Արդեն 72 անուն՝ շուրջ 2 000 000 դասագիրք «Հայդիրք»-ին է հանձնվել՝ ոճապոքիկայի քաղաքներում և շրջաններում վաճառելու համար:

Շատ դասագրքեր, իսկ 8-րդ դասարանի գրեթե բոլոր ուսումնական ձեռնարկները լույս են ընծայվում միանգամայն նոր թղթանդակությամբ, նրանցում հանրագիտական գիտելիքների դասավանդման հարցերը սերտորեն կապակցված են արտագրության կոնկրետ պահանջների հետ, մշակված են աշակերտների տեսական և պրակտիկ գիտելիքների զուգորդման խնդիրները:

Մեծ տիրածով լույս են ընծայվում նաև հատուկ ձեռնարկներ 5—8-րդ և 7—8-րդ դասարանների աշակերտների գործնական պարապմունքների համար: 9—11-րդ դասարանների աշակերտների համար լույս կտեսնեն անասնաբուժության, բուսաբուժության, պատվարաբուժության, բանվարաբուժության, խառատային, ֆրեզային, հղկման գործի վերաբերյալ ձեռնարկներ:

ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ՄՐՃԱՆԱԿԱՐԱԸ ԽՈՒՄԵՆԻ.—

Սովետական բանաստեղծների աեքստերով զբղած բարձրարվեստ խմբական երգերի ստեղծման նպատակով, Հայաստանի Կուլտուրայի մինիստրությունը և Հայկական երգչախմբային ընկերությանը հայտարարել են խմբական երգերի մրցանակաբաշխություն:

Մրցանակաբաշխության ներկայացված խմբերգեր պետք է արտացոլեն սովետական ժողովրդի հերոսական աշխատանքը, նրա պայքարը հանուն խաղաղության ու երջանկության, սովետական մարդու կերպարը, նրա հատուկ ներաշխարհը:

Սահմանված է վեց մրցանակ՝ մեկ առաջին 500 ուրու լավիով, երկու երկրորդ՝ 300-ական ուրու լավիով և երեք երրորդ՝ 200-ական ուրու լավիով:

Մրցանակը հավասարապես կրճատվի կոմպոզիտորի և տեքստի հեղինակի միջև: Մրցանակաբաշխության կընդունվեն այն ստեղծագործությունները, որոնք չեն հրապարակվել ու չեն կատարվել:

Մրցանակաբաշխության մասկետը սահմանված է ընթացիկ տարվա հոկտեմբերի 30-ը:

ԸՆԴԱՐԱՑՈՒՄ Ե ԽՈՒՄՈՒՄ ԱՆՏԱՌԸ.— Իր կենդանական և բուսական հարուստ աշխարհով հստորմի անտառը հզակի արգելանք է Սովետական Միությանում: 1950 տարի առաջ ստեղծված այս անտառը Հայաստանի պատմական մեծարժեք հուշարձաններից է: Ներկայումս նրա ընդհանուր տարածությունը հասնում է 27 111 հեկտարի, որից անտառապատ է 15 000-ը:

Այստեղ մեծ աշխատանքներ են տարվում բուսական և կենդանական աշխարհի հարստացման համար: Այս օրերին Մոսկվայի Մեղրոնպրոնկոն և Վենապրոնկոնկոնկարականությունների արշավախմբերը, հայ մասնագետների հետ միասին, ուսումնասիրում է միջոցառումներ են մշակում նոր ծառատնկումների համար:

Եթե վերջին տասնամյակում այստեղ տնկվել է 60 հեկտար անտառ, ապա միայն այս տարի տնկվում է 55 հեկտար: Առաջիկա հինգ տարում հոստորմի անտառի ընդհանուր տարածությունը կհասնի 30 000 հեկտարի:

Կենդանական աշխարհի համար այստեղ կան բոլոր նպաստավոր պայմանները: Ուշադրով է, որ Ագրադ գյուղի մոտ (Արտաշատի շրջան), երբ գարնանը ծաղկում են ծառերը, անտառի Գեղարդի հատվածում դեռևս նստած է լինում մյուսը: Կլիմայական այս հակադրությունները հնարավորություն են տալիս անասնաբուժության կենդանիների հարմարվել ցանկացած դրսում, ըստ տարվա եղանակների: Մուտով այստեղ բաց կթողնվեն 200 փափանեք:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 155

ՅԱՅՍՄԱՌՈՒՐԸ

ՔՈՐԹՈՐԸ՝ 568.— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 47, յուրաքանչյուրը 12 թելթից, ի բաց առյալ Ա պարակը, որ 11 թել չէ։ Սկզբում կա 4 թերթ, Հայամալուքի րոմանդակութեան ցուցակը, իսկ վերջում մի թերթ որպէս պահպանակ— ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 37,5X25,8X12,5 սմ., Սույն ձևադիրը Մայր Աթոռի ամենամեծ ծավալը և ցաշ ունեցող ձևադիրներից է։ Քաշն է 8,3 կիլոգրամ— ՆՅՈՒԹԸ՝ բավականին հաստ, մաքուր մազազաթ, Տեղ-տեղ միայն կեղտոտված է։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճշգրտով հրեշտակներ և այլ զարդեր են նկարված, կոնապի կազմը բավականին փշացել է։ Ժամանակին հղել են երեք հատ րոնիշներ, որոնք հետագայում բնկել են։— ՊԱՆՈՒՆԵՐԸ՝ ձևադիր վերջում կա մի թերթ մազազաթ, Սկզբի պահպանակն բնկել է։— ՎԻՃԱԿԸ՝ շատ լավ։ Սակայն ձևադիր վերջում տեքստը թերի է, համանարար մի քանի թերթ բնկել են։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկուսու— ԳԱՏԱՐԸ՝ ՔՈՐԹՈՐԸ՝ էջ 568.— ՏՈՂԵՐԸ՝ 39.— ԳԵՌՄԵՆԵՐԸ՝ ճշգրտով։— ԿԻՐԸ՝ բոլորդիր— ԶԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձևադիրն ունի լորս էջ (թերթի լրիվ մեծաթիվը) նկարներ, որոնք ցույց են տալիս լորս ավետարանիչները և Հիսուսի կյանքից զանազան դրվագներ (թ. թ. 5ր., 185ր., 251ր. և 327ր.), ձևադրում կան նաև երեք հատ շատ սիրուն խորաններ (թ. թ. 6ա, 252ա և 388ա), ինչպես նաև 12 կիսախորան, որոնք ավելի հասարակ են։ Ձևադրական բազմաթիվ հետաքրքիր նկարներ, որինակ Արդար Բազմաթիվ ձևադիր Հիսուսի նկարով մի դասառարակ (թ. 14ր.), ձևադիր ծաղկաբար Խաչիկի նկարը (թ. 28ա), Հովհաննու Կարապետի դիմապատկեր (թ. 35ա), Ս. Գրիգոր Լուսավորիչ (թ. թ. 86ա և 219ր.), Ս. Մաշտոց վարդապետ (թ. 108ա), Տրդատ Բազմաթիվ (թ. 186ա), Ս. Հակոբ Մծբնա հայրապետ (թ. 211ր.), Ս. Պետրոս առաքյալ (թ. 281ր.), Ս. Հովհաննես ավետարանիչ (թ. 463ր.), Կոստանդիանոս կայսրը և մայրը Հեղինեն (թ. 476ր.), Եղիսե մարգարեն (թ. 509ր.), ձևադրում կա մի հատ դազանադիր (թ. 388ա), շատ սիրուն բազմաթիվ թուխադիրները էջերում (թ. թ. 6ա, 252ա և 388ա), ինչպես նաև բազմաթիվ հասարակ թուխադիր և զարդադիր։ Հատուկ հիշատակության արժանի է թ. 6ա-ի դիմադիր Յ տառը, որը մի ամբողջ կոմպլեքս նկար է։ Յույն է տալիս վիշապասպան Ս. Գեորգիին, որ ձի հետ ծած սպանում է վիշապին։ Ձիու սանձը քանած է մի մարդ, իսկ վիշապի ներքևն էլ գտնվում է մի կետ ձուկ, որի րեքնի մեջ երևում է Հովհանն մարգարեն։ Մազադարձի սույն արժեքավոր ձևադիրն ունի նաև որբերի, ավետարանիչների, պառքայների, հրեշտակների, կաթողիկոսների, կույսերի, թուրքների, ծառերի, ծաղիկների բազմաթիվ զարդանկարներ և լու-

սանցազարդեր։— ԳՐԻԶԸ՝ Գրիգորի որդի Սարգիս— ՊԱՆՈՒՆԵՐԸ՝ Մահտեսի Եղիա— ԵԱԿԱՆԸ՝ Խաչիկ, թ. 28ա-ում կա նկարչի ինքնանկարը, որ ձևադիր քանած է մի թուղթ և սրի վրա գրված է՝ «Խաչիկ ծաղկաբարս յինեսցէք»։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺՁ դար— ՎԱՅԸ՝ անհայտ։— ԵԱՆՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձևադիրը ժամանակին պատկանել է Ռոտոսթոյի (Քսրոթի) Ս. Քազվոր եկեղեցուն, այս 30—40-ական թվականներին անցել է Բուլղարիա, որից հետո ձևադիրն ուղարկվել է Ս. Էջմիածին։

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 28ա.— Խաչիկ ծաղկապարս յինեսցէք։
Թ. 37ա.— Ողորմեա ստացողի գրոցս Մաշտոցի Տէր Յովհաննէսին և երիցունչուն Կոհարին և դատերացն Մէլլէմին, Սաքութին, Զոմրութին, Հիւրին, Մէլլէմին, Կիւլին և ամենայն արեան մարմաւ աշն (թ. 3ր.) և անիմաստ գրոյ Սարգսի կար...
(Ամբողջ ձևադրում սա միակ հիշատակարանն է, որ վերահիշյալ անուններն են հիշվում։ Սրանից բացի կան հարյուրավոր մեծ ու փոքր հիշատակարաններ, որտեղ հիշատակվում են ձևադիրն ստացող մահտեսի Եղիայի, նրա կին մահտեսի Լուսիաթուրին, ծնողներ Ուսուպեկի և մահտեսի Մարութաի, Եղարար Արիստակեսի անունները, ինչպես նաև ձևադիր գրիչ Սարգսի և նրա ծնողներ Գրիգորի և Հուրիի անունները)։
Թ. 40ա.— Ի քէն աղբորս հալոցն տիրածին Կոյս, մի անտես առ(թ. 40ր.)ներ գաղաշանս իմ, այլ մատոյ Միածնի քո և առ ի նմանէ ինձ ողորմութիւն։ Գործավագութ Մայր, ծնող Աստուծոյ Բանին, դմեղոց հատեալս ի բարեաց, աղաւանջ քո պատուաստեալ առ ծնեալն ի քէն բարին։ Որարեխոսես աղգի մարդկան առ Միածին քո Որդին, անմոռաց յիշմամբ պաղատեալ, վասն մեր առ ծնեալն ի քէն Որդին։ Բարունոյն էից ծնող, մի անտես առներ դմեղ, զի գին հմք արեան Փրկչին, որ ի քէն ծնալ յայրին։ Ինձ մեղաւորիս դու լեր միջնորդ հաշտութեան մերոյ, արտասուց հայցեալ վասն Աստուծոյ ծնող և Մայր։ Ե ինձ երանի յայնժամ, թէ լի-նեմ արժանացեալ մաղթանոց սրբոցն ընդ քեզ Միածնի քոյոյ տեսեալն։ Զի և ինձ եղկելոյ և մեղսամած գրծողի և ստացողի գրոցս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսիաթուրին, և ծնաւոցն հարն Ուսուպեկին, և մարն մահտեսի Մարութային, և եղարարն Արիստակէսին։ Ե մեղաւոց գրոյ Սարգսին, և ծնողացն Գրիգորին և Հուրին, և ամենայն արեան մեղաւորացն, կարգացողիս և լսողացն, և որք զողորմիսն ասեն, ամէն։

* Ետունակված «էջմիածին» ամսագրի 1980 թվականի Մ Յ Ե-ից, Է-ից, Ք-ից և 1981 թվականի Ն Յ Բ-ից, Գ-ից, Զ-ից, Ք-ից և ԺԲ-ից։

Թ. 62բ.— Շնորհիւ կենսատու և պատուական խաչի քո, Տէր, կեցո զհոգի ստացողի մատենիս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին, և ծնողացն Ուլուպէկին և Մարութային: Եւ անիմաստ գրչի Սարգսին, կր...:

Թ. 63բ.— Հայցումսք սրբոց մարտիրոսաց և սրբուհի կուսիս, բարեխօսութեամբն դարդարեա զհոգի ստացողի տառիս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին և ծնողացն Ուլուպէկին և Մարութային, և եղբօրն Արիստակէսին: Եւ մեղսամած գրչի Սարգսին, կր...:

Թ. 88ա.— Հայցմամբ բազմաշարշար նահատակին Գրիգորի Լուսաւորչին, և միշնորհութեամբ սիրողաց քոց ծառայից Որդի Աստուծոյ, այց արայ ստացողի տառիս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին, և ծնողացն Ուլուպէկին և Մարութային, և եղբօրն Արիստակէսին: Եւ անպիտան գրչի Սարգսին, և ծնողացն Գրիգորին և Հուրիին, և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողիս և լսողացն, և որք ղողորմիս ասեն, ամէն:

Թ. 126ա.— Գրած է նաւասարդի Ժէ և զմեղապարտս գրիչս յիշեալ նաւ զստացողի գրոցս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին, և ծնողացն Ուլուպէկին և Մարութային: Եւ մեղսամած գրչի Սարգսին, կր...:

Թ. 150բ.— Որք հանդիպիք սմայ և օգտիք ևս ինչ իւրք յիշեսչիք ի մաքրափալ աղօթս ձեր, զմեղօք մեռեալ հոգի ղգծողի սորին: Մանաւանդ ստացողի գրոցս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին և ծնողացն Ուլուպէկին և մահտեսի Մարութային, և անպիտան գրիչս Սարգսին, կարդացողաց:

Թ. 404բ.— Որոց բարեխօսութեամբն ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի գրոցս մահտեսի Եղիային և կողակցուն մահտեսի Լուսխաթունին, և ծնողացն հարն Ուլուպէկին, և մարն մահտեսի Մարութային, և եղբարն Արիստակէսին, և հաճի Արիստակէս տիրացուին: Եւ մեղսամած գրչիս Սարգսին, և ծնողացն Գրիգորին և Հուրիին, և ամենայն արեան մերձաւորացն, կարդացողացն և լսողացն, և որք ղողորմիսն...:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ռոտոսթոյի Ս. Թաղվոր Թաղի Թաղական Խորհրդի կնիքը՝ հայերէն և թուրքերէն:

Թ. 338.— Կանխագոյն Մարիամ Մազթաղէնացին եկեւհաս ի գերեզման Քրիստոսի և յայն ժամոյ:

Թ. 568ա.— Մեմլ:

№ 156

ՇԱՐԱԿՆՈՑ

ԲԵՐԹԵՐԸ 303.— ՊՐԱԿՆԵՐԸ 25, յուրաքանչյուրը 12 ԲԵՐԹԵՐ, ի քաջ առյալ Ա, Բ, Ի, ԻԱ և ԻԵ պրակները. որոնց 11-ական ԲԵՐԹԵՐ են:—ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ 14,5×9,5×3,7 սմ.:—ՆՅՈՒԹԸ՝ ղեղնած և կեղտոտան ղիմացկուն թուղթ:—ԿԱՋՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի կրկու կրծքներին մեշումով նկարված են զանազան զարդեր: Երկու բռնիչները ընկնլ են: ՊԱՇՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում կա մեկական ԲԵՐԹ հասարակ թուղթ:—ՎԻՃԱԿԸ՝ ռափարար, սակայն ԲԵՐԹԵՐԸ ղեղնել են և որք տեղեր էլ ցնցակեր:—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասուկ:—ԴԱՏԱՐԿ ԷՋԵՐԸ՝ 108թ.—ՏՈՂԵՐԸ՝ 33:—ԳՍՈՒՄՆԵՐԸ՝ մշումով:—ԳԻՐԸ՝ բոլորգիր:—ՋԱՐԿԱ՝ ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կան միշին գեղեցկութեամբ երկու կիսախորաններ (Բ. Բ. 1ա և 108ա) և ութ զլիարգարդեր. ինչպես նաև բազմաթիվ թռչնադեր և լուսանցադարձեր: Կա մի հատ ծաղիկ, երկու հատ խաչ և հինգ հատ դմբի: Թ. 44ա-ում նկարված է Հովնան մարգարէն, որ կետ ձկան բերից զուրս է դալիս, Բ. 85ա-ում՝ մի գեղեցիկ ծաղկաման, Բ. 114ա-ում՝ Հովհաննէս Մկրտիչը, Բ. 150բ-ում՝ Սարգկային ղեմքով արեգակը:—ԳՐԻՑԸ՝ անհայտ:—ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ:—ՍԱՂԱՂԸ՝ անհայտ:—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 3 հուլիսի 1805 թ.:—ՎԱՅՐԸ՝ Ստամբուլ:—ՍԱՆՈՒԹՅՈՒՆԹՅՈՒՆ՝ Դեռագիրը 1958 թվականին Նվեր է ստացված արժանապատիվ Տ. Շափարշ քահանա Պալքյանից, Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 302ա.— Փառք համագոյ անբաժանելի Սուրբ Երրորդութեանն Հայր և Որդի և Հոգի Սուրբ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Արդ գրեցաւ շարականս ի Բվին ՌՄԳ (1605) յուլիս Գ արեւ երեքշաբթի ի քաղաքն Իստամպուլ, ի վանքն ...տիր, ընդ հովանեալ Սուրբ Գէորգայ և այլ Սուրբ վրդկայիցս որ աստ կան, և Տէր Սարգիս արհեստակցոսին, և քահանայիցս Տէր Գովհաննէսին և հարն Տէր Զաքարէ, և Տէր հաշատուրին, և Տէր Աւետիքին, և տեղտ ի վանքն որ գրիցի Աստուած ղիւրենք աւրհնէ. ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Արուքին, Յարութին:

Թ. 1բ.—Նսէր Ս. էշմիածնի Թանգարանին:

Մայր Աթոռ Ս. էշմիածնի հաւատարմութեան յաւերժական յիշատակ:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հաւատարմ ծառայ՝ Շաւարշ քահանայ Պալքեան, Պուլիս, 14 յուլիս 1958:

Թ. 303բ.—Նկարված է մի տղա, որ ձախ ձեռքով մանդուկին է նվագում:

Թ. 303բ.—ԱրուՄիսին է:

Ք. 88ա.— (Օրհնեալ անուն անմահ բանին)
Ստեղծէր է զկինն ի կողէն,

Ք. 88բ.— Ու կողն ծուծ ունի հղբայք.
Ու կինն ուղուդ որ խելք բէրէ:

Քէ ի կինն քաղծրիսս է.
Հզնա ի դրախտէն շուտ արտաքսէ,
Կինն շանաւք զԱդամ խաբէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն զԴաւիթ յարքայն խափէ.
ԶՍողոմոն ապականէ,
Սուրբ Բովհանէս գլխատեր է.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն զհղբայր կոռնցնէ.
ԶԻւր խօսքն ասէ, զայլոց շսէ,
ԶԻւր խօսքն ասէ, զայլոց շսէ,
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն զմանուկն ի փորն անցնէ.
Զմեծն սրով սպանանել կարէ,
Զայրն դեղէ քան զէշ էնէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն ուրանա զհայրն և մայրն.
Ու զանտրանիկ որդին ձգէ,
Հուծցէ զարեքն ու մեղքն ուղէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

Ք. 89ա.— [Կ]ինն սատանի կերպ մտանէ.
Դիարքն մարն ինքն ժողովէ,
Քան զԲելուար ու այլ շար է.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն հետ մարդկանց շարեր
դործէ.

Մեղս ասէ ապաշխարէ,
Դանա քան զայն մեծ մեղք գործի.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն ոչ պշկա արեւորդու.
Ոչ ի թուրքէ, ոչ ի ճհտէ,
Զոր որ սիրէ հաւատն այն է.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն սիրէ ու եղբայր ձայնէ.
Ու մեծամեծք իշոց ասէ,
Սուտ երդնու թէ ինձ եղբայր է.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն թէ այսաւր ապաշխարէ.
Վաղըն քան զսատանա շար է,
Հալով դիւր ուղածն ասէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն կանգնի ի դիմաց մարդու.
Ու պոկնեռն ծովակէ,

Ք. 89բ.— Այնպէս ամէն մարդու շարէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Կ]ինն երդմամբ ճամէ.
Քէ քեզ համար ինձ մահ տիրէ,
Մի հաւատար նորա երդման.
Աստուած պահէ կնկան շարէ:

[Կ]ինն զմարդու արիւն ծեծէ.
Դանա զոսկերն կտրտէ,
Քան զշուն զամէն մարդ խածնէ.
Աստուած փրկէ կնկան շարէ:

[Զ]մարդ թէ կին բարոյ.
Երանի քեզ աշխար երկիրս,
Քէ շար ու վատ կրնկան դիպիս.
Վայ քեզ պատէ մինչև մեռնիս:

[Զ]մարդ դու ի գուր կու դատիս.
Ի յաշխարհէս ինչ տի շահիս,
Թող գրնայ ել ի լերինս.
Որ իսկի կին շտեսանես:

[Կ]ինն ողորմած է ու գրտած.
Ի սուրբ կուսանքն նմանէ,
Ապա թէ շար է ու շար դործէ
Աստուած փրկէ կնկան շարէ:

ԶԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 94ա.— Օղակետագիր ծածկագիր, ան-
րնթեռնելի:

Ծածկագիր մի անուն, որ համանարար
ձեռագրի գրի անունն է:

Անարժանս գրեց զսայ
Այս ... հարցմունքիս այ:

ԶԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 47ա.— Քվին ՌԶԵ (1711) խաւարեցաւ լուսին
յուլիսի ժէ, օրն յորեքշաբթի:

Ք. 81բ.— Այս է նէլթէյմէնի իւաճ այսպէս այրա-
կէս հօքդայ զէնէլֆիլի այո քըսան օյը ճուրք քըթէ, իրեք
օրը մէք հեղ ճուր փոխէ, Քըսան օրը լըմըննանէ աղէկ
մը ճուրք այո հարուր տիրէմ մեղող էփէ, տասը տի-
րէմ դարէնֆիլի, տասը տիրէմ զէնէլֆիլի, տասը տիրէմ
տառլին, տասը տիրէմ պայհար, 1, (տասը) տիրէմ
քէյպայպիեայ, այսանց այմէնը իրար խառնէ մայճ:

Ք. 80ա.— Եւ ամէն մարդ ստղարէ, Աստուած ինն
ևս դծ:

Ք. 20բ.— Այս է հարրմճաի նուղա

23	28	21	= 72
22	24	26	= 72
27	20	25	= 72
72	72	72	72

Ք. 100բ.— Քվին ՌՄԵ (1781) ամին յօնիսի և
օրն կիրակի ի ձագճան արեգական թիրոսիս Աստուա-

ծառույթ որդին Նոր աշխարհ էկաւ, Աստուծով զարկանայ, ամէն:

Ք. 163ա.— Այս արք է զոր արար Տէր յեկայք ցնծացէք և ուրախ:

Ք. 163բ.— Յիշայ Տէր զպաշտանայ քո, դժնոզս, զվարդազանս, զեղբարս, զընկերս, զկեդրակիւս, զօրիտաւորս, զհանապարհս:

Բաղմաթիվ այլ էջերում կան գրաւորներ:

№ 159

ՀԱՄԱԳԻԼ

ԲԵՐԹԵՐԸ՝ 1.— ՄԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ 6,12X9,3 սմ:— ՆՅՈՒԹԸ՝ զնշան և կեղտոտած հասարակ թուղթ.— ՎԻՃԱԿԸ՝ Ոչ քաղաք, Սկզբից թերի, իսկ կողքերն էլ յաշված և տեղ-տեղ պատռված:— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ Միասույն:— ԳՄՈՒՄՆԵՐԸ՝ ճշգրտով:— ԳԻՐԸ՝ նոսրեր:— ՋԱՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ համային ունի հրեք հատ զեղեցիկ զարդագրեր և տասը հատ թռչնագրեր: Կան նաև յոթ հատ մեծ շրջանակներ, որոնք շրջապատված են ծաղիկների և բույսերի հասարակ նկարներով: Կան նաև հասարակ հրեք նկարներ՝ Հիսուսի խաչելութիւնը, Ս. Սարգիսը և սատանան ու Սողոմոն իմաստունը:— ԳՐԻՋԸ նվ ՄԱՂԿՈՂԸ՝ երուսաղեմացի տիրացու Հովակիմ:— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Գասպար:— ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1750 թ.:— ՎԱՅՐԸ՝ Այնթապ:— ՄԱՆՈՒԹՅՈՒՆ՝ վեհափառ Հայրապետի մանրիկա այցելութիւն առթիվ Արղենտինայի Կորդորա քաղաքից 1960 թվականի ամռանը Քաղեոս Պապանյանը սույն համայնիւր նվիրել է Մայր Աթոռին:

ԲՈՎԱՆԻՍԱՆՈՒԹՅՈՒՆ

(Հանազան աղոթքներ և հատվածներ Ավետարաններից)

...ոյն առաքումն որդոյն իւրոյ քաղցրացաւ:

Ցանուն Հօր և Որդոյ և Հոգոյն սրբոյ...

Մարդ որ ի զնտան մտանէ և ուզենայ...

Գիր որ կիեն դիժար ծնանի գրէ և յաջրազուկն կապէ շուտով աղատի Աստուծով:

Գիր վասն չար աշիւ, չար լեզուի և չար նիսթի ծառայիս Աստուծոյ...

Գիր վասն քաղցրի և ամենայն խոցի, զոր ի վերայ կարդան ծառայիս Աստուծոյ...

Ըզգիր վասն քաղցրութեանն պարոնաց, դատաւորաց և թագաւորաց, չարաց և չարախօսաց, րարեխօսելոց ծառայիս Աստուծոյ...

Այլ գիր վասն պատերազմի, կռիւի և ամենայն ցեղ թրի...

Գիր վասն ճանապարհ երթալոյ:

Աղօթք պահպանութեան ի վերայ ծառայիս Աստուծոյ...

Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց ծառայիս Աստուծոյ...

Աղօթք Սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին, ամէն:

Աղօթք Սրբոյն Յովհաննու Կարապետին:

Աղօթք Սրբոյն Ստեփաննոսի Նախաւկային:

Աղօթք Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսավորչին ասացեալ է:

Աղօթք պահպանութեան:

Աղօթք Սրբոյն Գէվորգայ զօրավարին:

Աղօթք Սրբոյն Սարգսի զօրավարին:

Աղօթք Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն:

Սրբոյ Աւետարան ըստ Մաթէոսի, Տէրն մեր:

Սրբոյ Աւետարանս ըստ Մարկոսի, Տէրն մեր:

Աւետարան ըստ Դուկասու, Տէրն մեր:

Սրբոյ Աւետարան ըստ Յովհաննու:

Աղօթք կապանաց դիւաց:

Աղօթք վասն զաւակ ծնութեան:

Աղօթք թպղայի և ալի:

Գիր գլխացաւի և ջերմի:

Գիր ատենցորի և ամենայն չար բանի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Յուրաքանչյուր պարբերութիւն վերջում բաղմաթիվ անգամ գրված է՝

...ծառայիս Աստուծոյ Քասպարին, ամէն:

...և այլ ամենայն սրբոց բարեխօսութեամբ պահեա և փրկեա զծառայս Աստուծոյ Քասպարին, օգնական և պահպան ամենայն չարէ ամէն:

Տպեցաւ համայնիս ձեռամբ յերուսաղէմացի տիրացու Յովակիմին ի ՌՃՂԹ (1750) թվին, ի քաղաքն յԱյնթապ, սիրելիք հայրք և եղբայրք իմ յիշէցէք զմեղաւորս Հայր մեղալիւ և դուք...

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամեն տեղ նախնական պատմիրատուի՝ Գասպարի անունը շնչված է և գրված է Պէտրոսին կամ Աւետիսին, և կամ Էրկու անունները միասին՝ Պէտրոսին, Աւետիսին:

(Շարունակելի)